



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Мурзинъ
Лыж - Туристъ
1906



059/50
7-23

06 JUN 2009

059
7-23

Վարդակ
Հայոց

ՏԱՐԵՑՈՅՑ

ՆԵԱՆ-ՊԱՊԻԿԵԱՆ

1906

Բ. ՏԱՐԻ



ՏՊԱԴՐՈՒԹԻՒՆ

Ա. Խ. Հ. ՏԵՐ-ՆԵՐՍԻԿՅԱՆ

Գ. ՊՈԼԻՍ

1906

32 939-61

059 տուբուլոզ
7-23 ըստ
պահինե
1906
ԱՄ 6488 9/1/80
ՎԱ-Ա-6488 29/1/80
ՎՎ-6736 16/X 81

18.07.2013
18.07.2013

14/81

دفتر عمومي نظارت جليله سنك في ١٧ ايلول ٢٠١٤ تاریخی
و ٢٣٣ نومروی رخصتمام سیله طبع او نتمندر



32939

192 S.
onua und I
156. SAT

en. den
te. KI utz
155. GII

HEB

154. A
nosses en
153.

95 I
tässesas
95 I

1974 S.
151

1974
151



Մեր անցեալ տարուան Տարեցոյցէն զոհ
մնացի՞ք:

Զե՞նի զիսեր:

Սակայն մեր Տարեցոյցը Զենի զոհ մնաց:
Առով, այս տարի ալ, արդար համար-
ձակութիւնը կ'ունենանք Եւրկայանալու
«ընթերցասէր արզոյ հասարակութեան», ձեռ-
ութիւնի բոնած առաջինին յաջորդը, մաս-
ծելով թէ՝ հայրիկին համակրողը հարկա-
գաւա՞կն ալ կը սիրէ:

Մեր նպատակը :

Մի, մեր նպատակը՝ բուաբանութեան
չորս գործողութիւններէն աւելի պարզ է:
Հանելի ըլլալ ամեն անոնց, որնեն կը
սիրեն աղջուոր գրուածք մը, կ'ախորժին սի-
րուն նախադասութենէ մը եւ ժօնօկրամի
գիտէն կը նախընթենի... ոնի ու բացա-
րութեան վարպէս զիւս մը:

Թո՞ղ ասոնք միայն կարդան մեզի, եւ
մենք զոհ կ'ըլլանք:

ՀՐԱՏԱՐԱԿԻՉՆԵՐԸ



Օ Բ Ա Տ Ո Յ Յ

1906

Թ Ա Կ Ի Ե Խ Գ Ր Ի Ս Տ Ո Ս Խ

ՅՈՒՆՈՒԱՐ

ՕՐ 31

ՏՀ. Քեանուեի Սահի

- | | | |
|----|----|-------------------------|
| 1 | *կ | ԿԱՊԱՆԻԴԻ |
| 2 | բ | Դ. Օր պհց. Ծննդեան : |
| 3 | գ | Ե. Օր պհց. " |
| 4 | դ | Զ. Օր պհց. " |
| 5 | ե | Ճապարց : |
| 6 | *ո | ՏՈՒՆ ԾՆՆԴԵԱՆ |
| 7 | տ | Ցիշասակ մեռեց : |
| 8 | *կ | Դ. Օր Ծննդեան : |
| 9 | ր | Դ. Օր " |
| 10 | գ | Ե. Օր " |
| 11 | դ | Զ. Օր " |
| 12 | ե | Լ. Օր " |
| 13 | *ո | Տօն Անուանելու: |
| 14 | տ | Ա. Յովհ. Կարասիսին : |
| 15 | *կ | Ա. զինի Ծննդեան : |
| 16 | բ | Ա. Մարկոսի Հայրապետ : |
| 17 | գ | Արքոցն Անոսին, և այլն : |
| 18 | դ | Պահը : |
| 19 | ե | Ա. թէոդորի Թագաւորին : |
| 20 | ո | Պահը : |
| 21 | տ | Արքոցն Աթն.սի և Կիր: |
| 22 | *կ | Բ. զինի Ծննդեան : |
| 23 | բ | Ա. Օր պհց. Առաջաւոր : |
| 24 | գ | Բ. Օր պհց. " |
| 25 | դ | Գ. Օր պհց. " |
| 26 | ե | Դ. Օր պհց. " |
| 27 | ո | Ե. Օր պհց. " |
| 28 | տ | Ա. Մարգոսի Զօրավարին : |
| 29 | *կ | Գ. զինի ծննդեան : |
| 30 | բ | Առողմանց Զօրոն լրաց : |
| 31 | գ | Առքիսանեց վիժոց : |

ՓԵՏՐՈՒԱՐ

ՕՐ 28

ՏՀ. Շուշպար

- | | | |
|----|----|-------------------------|
| 1 | դ | Պահը : |
| 2 | ե | Ա. Ասկեանց բահանայից : |
| 3 | ո | Պահը : |
| 4 | տ | Ա. Սահակյա Հայրապ.ին : |
| 5 | *կ | Դ. զինի Ծննդեան : |
| 6 | բ | Ա. Մարկոսի Եպիսկ.ն : |
| 7 | գ | Ա. Ղեւնդեանց բանց : |
| 8 | դ | Պահը : |
| 9 | *ե | Ա. Վարդապետ : |
| 10 | ո | Պահը : |
| 11 | տ | Ե. Պոլսոյ Ա. Ժողովոյն : |
| 12 | *կ | Բոն Բարեկենպան : |
| 13 | բ | Ա. Օր Մեծ Պահոց : |
| 14 | *գ | Տեառնընդառաջ : |
| 15 | դ | Գ. Օր Մեծ Պահոց : |
| 16 | ե | Դ. Օր " |
| 17 | ո | Ե. Օր " |
| 18 | տ | Զ. Օր " |
| 19 | *կ | Բ. Քառանորդաց : |
| 20 | բ | Ը. Օր Մեծ Պահոց : |
| 21 | գ | Ժ. Օր " |
| 22 | դ | Ժ. Օր " |
| 23 | ե | Ժ. Օր " |
| 24 | ո | Ժ. Օր " |
| 25 | տ | Ա. Կիւրդի Հայրապետին : |
| 26 | *կ | Գ. Քառանորդաց : |
| 27 | բ | Ժ. Օր Մեծ Պահոց : |
| 28 | գ | Ժ. Օր " |

ՄԱՐՏ

օր 31

Տարբ

1	Ժ.	օր	Մեծ Պահոց :
2	Ե	ժ.	» » »
3	Ո	ժ.	» » »
4	Դ	Ս.	Յովհ. Երուս. Հայ. և.
5	*Կ	Տ	Տնտեսին :
6	Բ	Ի.	ԻԲ. օր Պեծ Պահոց :
7	Գ	Ի.	» » »
8	Դ	Միջինք :	
9	Ե	Ի.	ԻԵ. օր Մեծ Պահոց :
10	Ո	Ի.	» » »
11	Շ	Ի.	Սրբոց Քառասնից Մանկ:
12	*Կ	Դ	Դաստաւրին :
13	Բ	Ի.	ԻԹ. օր Մեծ Պահոց :
14	Գ	Լ.	» » »
15	Դ	Լ.	» » »
16	Ե	Լ.	» » »
17	Ռ	Լ.	» » »
18	*Վ	Ը.	Գրիգորի Լուսաւորչ:
19	*Կ	Դալանուն :	
20	Բ	Լ.Զ.	օր Մեծ Պահոց :
21	Գ	Լ.Է.	» » »
22	Դ	Լ.Թ.	» » »
23	Ե	Լ.Թ.	» » »
24	Ռ	Խ.	» » »
25	Ռ	Ռ.	» » »
26	*Կ	Տ.	Յիշատակ Յարութ. Ղազ.
27	Բ	Տաղկապարդ :	
28	Գ	Ղաճք :	
29	Դ	Ղաճք :	
30	*Կ	Տ.	Յիշատակ Տասն Կուսնց:
31	Ո	Տ.	Յիշատակ Բնթրց. Յ.Ք.Ի.
		Տ.	Յիշատակ Ղարչ. Յ.Ք.Ի.

ԱՊՐԻԼ

օր 30

Տարբ

1	Ե	Ճրագալոց Զատկի :
2	*Կ	ԶԱՏԿԻ :
3	Բ	Յիշատակ Մեռելոց :
4	*Գ	Գ. օր Զատկի :
5	Դ	Դ. օր »
6	Ե	Ե. օր »
7	Ռ	Աւետումն Ս. Աստուած.:
8	Տ	Յիշ. Գլխ. Ս. Յ. Մկրտչի:
9	*Կ	Նոր Կիւրակէ :
10	Բ	Թ. օր Յինանց :
11	Գ	Ժ. օր »
12	Դ	ԺԱ. օր »
13	Ե	ԺԲ. օր »
14	Ռ	ԺԳ. օր »
15	Տ	ԺԴ. օր »
16	*Կ	Տօն Աշխարհամասորան :
17	Բ	ԺԶ. օր Յինանց :
18	Գ	ԺԷ. օր »
19	Դ	ԺԸ. օր »
20	Ե	ԺԹ. օր »
21	Ռ	Ի. օր »
22	Տ	ԻԱ. օր »
23	*Կ	Կարմիր Կիւրակէ :
24	Բ	ԻԳ. օր Յինանց :
25	Գ	ԻԴ. օր »
26	Դ	ԻԵ. օր »
27	Ե	ԻԶ. օր »
28	Ռ	ԻԸ. օր »
29	Տ	Տօն Երեւման Ս. Խաչին :
30	*Կ	Տօն Երեւման Ս. Խաչին :

ՄԱՅԻՍԻ

օր 31

Տարբ

1	Բ	Լ. օր Յինանց :
2	Գ	ԼԱ. օր »
3	Դ	ԼԲ. օր »
4	Ե	ԼԳ. օր »
5	Ռ	ԼԴ. օր »
6	Տ	ԼԵ. օր »
7	*Կ	Զ. Կիւրակէ :
8	Բ	ԼԵ. օր Յինանց :
9	Գ	ԼԲ. օր »
10	Դ	ԼԹ. օր »
11	*Ե	ՀԱՅՐԱԿԱՆՈՒՄ :
12	Ռ	Խ. օր Յինանց :
13	Տ	ԽԲ. օր »
14	*Կ	ՀԻՐՈՎՈՐԻ Լուսաւորչ:
15	Բ	ԽՄ. օր Յինանց :
16	Գ	ԽԸ. օր »
17	Դ	ԽԸ. Օ. Եմիսածնի:
18	Ե	ԽԸ. Ս. Մանկանց Բեթղեհ.:
19	Ռ	ԽԸ. Նունեայ Եւ Մանեայ:
20	Տ	ԽԸ. Պահր :
21	*Կ	ԽԸ. Սահակայ և Յովափ.:
22	Բ	ԽԸ. Ներսիսի Հայրապ.ն.:
23	Գ	ԽԸ. Բարեկ. Լուս. Պահոց :
24	Դ	ԽԸ. Եփփամենու Կիւրց.:
25	Ե	ԽԸ. Պահր :
26	Ռ	ԽԸ. Սահակայ և Յովափ.:
27	Տ	ԽԸ. Պահր :
28	*Կ	ԽԸ. Յիշատակ Եղիս Մարգ.:
29	Բ	ԽԸ. Հոփփամենունց :
30	Գ	ԽԸ. Գայիշանեանց :
31	Դ	ԽԸ. Պահր :

ՅՈՒՆԻ

օր 30

Տարբ

1	Ե	Ս. Յովհ. Կարապետին :
2	Ո	Պահր :
3	Շ	Ս. Գրիգորի Լուսաւորչ:
4	*Կ	Տօն Ս. Եմիսածնի:
5	Բ	Ս. Մանկանց Բեթղեհ.:
6	Գ	Ս. Նունեայ Եւ Մանեայ:
7	Դ	Ս. Պահր :
8	Ե	Ս. Սահակայ և Յովափ.:
9	Ռ	Ս. Պահր :
10	Տ	Ս. Ներսիսի Հայրապ.ն.:
11	*Կ	Բարեկ. Լուս. Պահոց :
12	Բ	Եփփամենու Կիւրց.:
13	Գ	Պահր :
14	Դ	Պահր :
15	Ե	Ս. Թէղողտոնի :
16	Ռ	Պահր :
17	Տ	Գիւտնշխարաց Լուս. Ի.:
18	*Կ	Դ. գլնի Հոգին :
19	Բ	Վ. Վկասիցն Անոնինսի:
20	Գ	Վ. Դանիէլի Մարգար.:
21	Դ	Պահր :
22	Ե	Ս. Թարգմանչաց մերոց:
23	Ռ	Պահր :
24	Տ	Ս. Տրդառայ Թագաւորն:
25	*Կ	Գիւտ Տփոյ Ս. Աստծնի:
26	Բ	Կալիստրատոսի :
27	Գ	Ս. Զաքարլիսյ Մարգ.ն.:
28	Դ	Պահր :
29	Ե	Ս. Եղիսէի Մարգար.ն.:
30	Ռ	Պահր :

ՅՈՒԼԻՍ

ՕՐ 31

ՏԱ. ԹԵՇՄԵՆԻ

1	Դ	Ա. Երկուսասան Առքց.:
2	*Կ	Բարեկն. Պահոց Վարդպ.ի:
3	Բ	Ա. օր Պահոց "
4	Գ	Բ. օր " "
5	Դ	Գ. օր " "
6	Ե	Գ. օր " "
7	Ո	Ե. օր " "
8	Ճ	Յիշասակ Տպնկն. Խոյ:
9	*Կ	Վարդավառ :
10	Բ	Յիշասակ Մեռելոց :
11	Գ	Գ. օր Վարդավառի :
12	Դ	Պահը :
13	Ե	Ա. Եացեայ Մարզբին.:
14	Ո	Պահը :
15	Ճ	Ա. Թագէւսի Առաքելն.:
16	*Կ	Բ. զինի Վարդ :
17	Բ	Ա. Կարգիսասուի Էսիսկ.
18	Գ	Ա. Աթանազինեայ "
19	Դ	Պահը :
20	Ե	Ա. Եացանարցն Մերոց:
21	Ո	Պահը :
22	Ճ	Ա. Որդոց Ա. Գրիգ. Լ.ի:
23	*Կ	Գ. զինի Վարդավառի :
24	Բ	Ա. Մակարայեւոցն
25	Գ	Յիշասակ Մարզ.:
26	Դ	Երկուսասան Մարզ.:
27	Ե	Պահը :
28	Ո	Ասփիս :
29	Ճ	Ա. Գրիգորի Աստուած.:
30	*Կ	Գ. զինի Վարդ.:
31	Բ	Ա. Կիրակոսի :

ՕԳԱՍՏՈՍ

ՕՐ 31

ՏԱ. Աղօսորու

1	Գ	Ա. Վահանաց Գողթնց.:
2	Դ	Պահը :
3	Ե	Ա. Եղինեսոսի :
4	Ո	Պահը :
5	Ճ	Եփեսոսի Ա. Ժողովոյն :
6	*Կ	Բար. Պհց. Ա. Աստուած.:
7	Բ	Ա. օր Պահոց Ա. Աստծի:
8	Գ	Բ. օր " "
9	Դ	Գ. օր " "
10	Ե	Բ. օր " "
11	Ո	Ե. օր " "
12	Ճ	Տօն Շողակամի Ա. Էջժի:
13	*Կ	Վերափոխութեն :
14	Բ	Յիշասակ Մեռելոց:
15	Գ	Գ. օր Վերափոխուն:
16	Դ	Պահը :
17	Ե	Ե. օր "
18	Ո	Զ. օր "
19	Ճ	Տարելած Գամակա- լորեան Օգոստական Ա.ազի. Սուլթան Բ. Կայսեր Թուրքիոյ 1258 Ծապան 16 1842 Սեպտեմբեր 10
20	*Կ	Բ. օր "
21	Բ	Պահը : Տօն Խաչի :
22	Գ	Տօն Խաչի :
23	Դ	Վար. Պհց. Վարդ. Ա. Էջ.ի
24	*Կ	Ա. Մամասայ :
25	Բ	Ա. Կուտանցն Փերուն.:
26	Գ	Ե. Կուտանցն Փերուն.:
27	Դ	Պահը :
28	Ե	Ա. Հայրապետին Բարդ.:
29	Ո	Պահը :
30	Ճ	Ա. Գէորգաց Զօրավարին
Եւ 19 Առօսրու 1292 (1876)		

ՍԵՊՏԵՄԲԵՐ

ՕՐ 30

ՏԱ. Իղուլ

1	Ո	Պահը :
2	Ճ	Ա. Յակոբաց և Շմաւոնի:
3	*Կ	Գ. զինի Վերափոխուն:
4	Բ	Ա. Անդրեկ Զօրավարին:
5	Գ	Ա. Աղրիանոսի :
6	Դ	Պահը :
7	Ե	Ա. Արքանաց և Խոր:
8	*Ո	Ենունդ Ա. Աստծած.ի:
9	Ճ	Նիկոլ Ա. Ժողովոյն :
10	*Կ	Բարեկն. Պահոց Ա. Խաչի:
11	Բ	Ա. օր Պահոց Խաչի :
12	Գ	Բ. օր " "
13	Դ	Գ. օր " "
14	Ե	Գ. օր " "
15	Ո	Ե. օր " "
16	Ճ	Տօն Եկեղի ի հաւ. Ա. Խ.ի.
17	*Կ	Խեաչիւաց :
18	Բ	Յիշասակ Մեռելոց :
19	Գ	Տօն Եկեղեցւոյ :
20	Դ	Պահը :
21	Ե	Տարելած Անդեսն Օգոստական Օփուն. Ղազի Սուլթան Ա.պիթի. ՀԱՄԲԻ ՖԱՆ Բ. Կայսեր Թուրքիոյ 1258 Ծապան 1693
22	Ո	Պահը : Տօն Խաչի :
23	Ճ	Տօն Խաչի :
24	*Կ	Վար. Պհց. Վարդ. Ա. Էջ.ի
25	Բ	Ա. Մամասայ :
26	Գ	Ա. Կուտանցն Փերուն.:
27	Դ	Պահը :
28	Ե	Ա. Հայրապետին Բարդ.:
29	Ո	Պահը :
30	Ճ	Ա. Գէորգաց Զօրավարին

ՀԱԿՏԵՄԲԵՐ

ՕՐ 31

ՏԱ. ԹԵՇՐԻՖԻ ԿՎՈՒ

1	*Կ	Տօն Վարազաց Ա. Խաչի:
2	Բ	Ա. Դամբի Դամբեցոյն :
3	Գ	Ա. Եղիսաբէտիսուի :
4	Դ	Պահը :
5	Ե	Ա. Իշխան. Անդալու:
6	Ո	Պահը :
7	Ճ	Ա. Շահակերտացն Բ.ի:
8	*Կ	Գ. զինի Խաչին :
9	Բ	Ա. Փոկասու Հայրապէտ.:
10	Գ	Ա. Կուս. Թեկեղեա :
11	Դ	Պահը :
12	Ե	Ա. Պանդալէսնի բժիշկ.:
13	Ո	Պահը :
14	Ճ	Մերոց Թարզ. Մերոց:
15	*Կ	Ե. զինի Խաչին :
16	Բ	Ա. Գրիգորի Կամողիկ.ն:
17	Գ	Ա. Առաք. Անանիաշի:
18	Դ	Պահը :
19	Ե	Ա. Դիմեսնիսուի :
20	Ո	Պահը :
21	Ճ	Ա. Աւետարանչաչոց :
22	*Կ	Զ. զինի Խաչին :
23	Բ	Ա. Ղունկիսնոսի Հար. :
24	Գ	Ա. Թէղիստոնի բժիշկ.ն:
25	Դ	Պահը :
26	Ե	Ա. Խարիթեանց :
27	Ո	Պահը :
28	Ճ	Ա. Երկուսասան Հայրզ.:
29	*Կ	Գ. Խաւ. Խաչ :
30	Բ	Ա. Անաստասայ բնել.ի.ն:
31	Գ	Ա. Հիպերիթեանց :

ՆՈՅԵՄԲԵՐ

ՕՐ 30

ՏԱ. ԹԵՂԴԻՒՅԻ ՍԱԾԻ

- | | | |
|----|----|------------------------|
| 1 | Դ | Պահը : |
| 2 | Ե | Ս. Ցովի. Ուկերելուն : |
| 3 | Ո | Պահը : |
| 4 | Շ | Տօն Ամենայն Սրբոց : |
| 5 | *Կ | Հ. զինի Խաչին : |
| 6 | Ֆ | Ս. Ստեփաննոսի Հայր.: |
| 7 | Գ | Ս. Ակիֆախմայ Եպիսկ.: |
| 8 | Դ | Պահը : |
| 9 | Շ | Ս. Հայր. Մետրոփան.ի |
| 10 | Ո | Պահը : |
| 11 | Ճ | Սրբոց Հրեշտակապետ. |
| 12 | *Կ | Թ. զինի Խաչին : |
| 13 | Բ | Ս. Արևառնի Հայրաք.ին: |
| 14 | Գ | Ս. Գեմեղքիսյ Վկային : |
| 15 | Դ | Պահը : |
| 16 | Ե | Ս. Գուրիսայ, Սամոն.: |
| 17 | Ո | Պահը : |
| 18 | Ճ | Ս. Առաք. Անդրեի : |
| 19 | *Կ | Բարեկ. Պանոց Յիսկղ. |
| 20 | Բ | Ս. օր Պանոց Յիսկակաց. |
| 21 | Գ | Բնձայում Ս. Աստուած. |
| 22 | Դ | Գ. օր Պանոց Յիսկակաց. |
| 23 | Ե | Գ. օր » » |
| 24 | Ո | Ե. օր » » |
| 25 | Ճ | Իրիգորի և Նիկող.ի: |
| 26 | *Կ | Ս. Յիստամբ : |
| 27 | Բ | Ս. Յովիսնեա : |
| 28 | Գ | Ս. Դունիկանոսի Քիյն. |
| 29 | Դ | Պահը : |
| 30 | Ե | Ս. Կ. Նեայ Հայրապետին: |

ԴԵԿԱՅԵՄԲԵՐ

ՕՐ 31

ՏԱ. Թեամունի Կվիկլ

- | | | |
|----|----|------------------------|
| 1 | Ո | Պահը : |
| 2 | Ե | Ս. Թադէոսի և Բարթ. |
| 3 | *Կ | Բ. Յիսնակաց : |
| 4 | Բ | Ս. Գենարիոսի Եպիսկ. |
| 5 | Գ | Նախամկաց Ս. Արզը. |
| 6 | Դ | Պահը : |
| 7 | Ե | Ս. Հարցն Եղիպատացոց. |
| 8 | Ո | Պահը : |
| 9 | Ճ | Յղութիւն Ս. Աստուծ.ի |
| 10 | *Կ | Բարկն. Պանոց Ս. Յակ. |
| 11 | Բ | Ս. Մինասայ, Երմոգին: |
| 12 | Գ | Ս. Կուռնելիոսի Հար. |
| 13 | Դ | Պահը : |
| 14 | Ե | Ս. Եւստատիոսի : |
| 15 | Ո | Պահը : |
| 16 | Ճ | Ս. Ցիրյ. Մծբնայ Հայր. |
| 17 | *Կ | Դ. Յիսնակաց : |
| 18 | Բ | Հայր. Իգնատիոսի : |
| 19 | Գ | Ս. Թէոփոնիսյ Եպիսկ. |
| 20 | Դ | Պահը : |
| 21 | Ե | Ս. Կուռնանցն Ինդոսի. |
| 22 | Ո | Պահը : |
| 23 | Ճ | Ս. Դամի Մարգարէին. |
| 24 | *Կ | Ե. Յիսնակաց : |
| 25 | Բ | Ս. Ստեփաննոսի Նախ. |
| 26 | Գ | Ս. Առաքել. Պետ.և Պօղ.ի |
| 27 | Դ | Պահը : |
| 28 | Ե | Ս. Որդուցն Որոտման : |
| 29 | Ո | Պահը : |
| 30 | Ճ | Ս. օր Պաց. Մնդեան : |
| 31 | *Կ | Զ. Յիսնակաց : |



ԽԵԼԱՅԻ ԽՕՍՔԵՐ ՈՒ Ս.ՆԵԵԼԱՅ ԽՕՍՔԵՐ,

ՀԱ.ՄՈՎ, ԽՕՍՔԵՐ,

Գ.Ա.ԶԱ.ՐՈՍՍ.ՑԻՆ ԽՕՍՔԵՐ,

Վ.ՍԵՄ ԽՕՍՔԵՐ,

ՄԵՌ ԽՕՍՔԵՐ ՈՒ ՊԶՏԻԿ ԽՕՍՔԵՐ,

ԽՕՍՔԵՐ, ՄԻՌԵ ԽՕՍՔԵՐ:

Եւ եղաւ որ Մաթուսաղայ
999 տարի ապրէր :Եւ եղաւ որ հարցնեն Մա-
թուսաղայի .— Ինսոր չժանձրացար 999
տարի :Եւ Մաթուսաղայ պատա-
խան տուաւ ու բաւաւ.— Որովհետեւ... նշԱՆ-ՊԱ-
ՊԻԿԵԱՆ ՏԱՐԵՅՈՅՅը կարդացի:

Ալ յօրանջէի, — Ինչպէս պլիտի ընէր անշուշտ
ամէն խելացի մարդ, երբ ընելիք գործ չունի:

— Մեր Տարեց ցցին առաջին մասը քեզի կը
յանձնենք, ըսին Նշան-Պապիկեան զոյգ մը սիրելի
բարեկամներս անանկ շեշտով մը, որ կարծես...
պանքայի մը անօրէնութիւնը կը յանձնէին:

— Օ՛լ ույթ... պատասխանեցի, Շէյքսրեթի
Լեզուովը խօսած ըլլալու համար, որովհետեւ նոյն
օրը... Շէյքսրեթի անունին տարեղարձն էր:

Բիէռօփ լաթերը հաղած, առի գրիչս ձեռք, զուարթ ֆանթէզիսերու քմածին ցատկուառուքներով զուարճացնելու համար ձեր չափաղանց ձանձրացած միտքերը, — ո սիրելի ընթերցողներ, — դրական զբօսանքի ժպտուն նօթեր զողնալով հուկէ հնդիէ, բարիզեսմ նուրու որամատթիւնները խառնելով . . . սոկիրչի շուկային զաւեշտաբանութիւններուն, մեր խելացի Դազարախն անթիւ շարանէն, վում խօսքերը ձուլելով . . . ապուշ խօսքերու, և վերջապէս թեթեւ զբականութեան բուլ խօլ պարերը դառնալով ձեր առջեւ . . .

Արակէ զի, մշտակայ ժպիտ մը ձեր ըրթունքին վրայ, կարգաք իմ հողերուզին առզերս,

Ու եթէ յօրանշէք . . .

Ո՞հ, այն ատեն ես իլ մեռնիմ . . .

Ինչու կըսէր բանստեղծ մը :



ՏԱՐՈՒԱՆ ՏԱՍՆԵՐԿՈՒ ԱՄԻՍՆԵՐԸ

(Է ՞ Թ է Բ Վ ի Ռ ի)

Պնչպէս ամէն պառաւ մամիկ ունեցած է իր գեռասի օրիորդի ժամանակը, ամէն անմարսելի կրող՝ իր լափուած ատենը, ամէն ծեծուտող կին՝ իր փայփայուած օրերը, ամէն ապուշ՝ իր խելացի վայրկեանները և ամէն շուկացի՝ իր պոռուխն հօրմիւշ ըրած ատենը, նոյնպէս ամէն բան ունեցած է իր գարը:

Պլինձը, երկաթը, ոսկին, վերջապէս հողին տակ սուհուած բուլոր հանքերը, իրարու սիրտ չկուրելու համար, կարգաւ իրենց գարերը ունեցած են. միայն խեղճ էնթէրվիուն իր գարը չուշնէր, քանի որ Ադամ Եւայի ատեն էնթէրվիուչկար, և որպէս զի անոր ալ խարրը չմնայ, ժողովս, յետ երկար վիճարանութեան, յարմար դատեց այս դարն ալ անոր ձօնել :

... Աչուբնիդ բացէ՛ք, էնթէրվիուի դարուն մէջ կ'ապրինք կոր :

Էնթէրվիուի տենդն է որ կը սիրէ, դեղին ու կանանց տենդերէն աւելի սոսկալի, և բաւական է հարբուխի յատուկ նորատեսակ թաշկինակ մը հաւրել, կամ ատըմ ցատիելու մէջ առաջին մրցանակը շահիլ և կամ ձեր դրացիին աղջիկը փախցնել, որպէս զի, նոյն վայրկեանին, կարկուտի հատերուն չափ բաղմաթիւ խմբագիրներ ձեր վրայ թափին, կինսագրական նօթեր քաղելով՝ ձեր մայրիկին, մեծ-մայրիկին ու մեծ-հայրիկին նկատմամբ, իբր թէ անոնք ու ե յարարերութիւն ունենային:

Ճեր թաշկինսակի գիւտին , ճեր ատըմ ցատկելուն կամ
ճեր աղջիկ փախցնելուն հետ :

Աստուած չընէ որ փորձութիւնը ունենաք
յայտնելու թէ այնինչ ամիրային կառապանին հետ
սուրճ խմած էք օրին մէկը . — և ահա՛ էնթէրվիու-
լուղներու խումբը ճեղի կը շրջապատէ , օխա մը
ճերմակ թուղթ ափերնին և հինգ փարանոց մա-
տիս մը՝ մատուցներնուն մէջ :

Վաթէրլօ , Վաթէրլօ , Վաթէրլօ , բացագան-
չեց Հիւկո , որ մէկ բառը միայն անդամ մը զրե-
լով չէր գոհանար . ինտօ՞ր ես ալ չկրկնեմ անոր
հետեւողութեամբ . —

Էնթէրվիոււ , էնթէրվիոււ , էնթէրվիոււ

Եւ էնթէրվիուի ծայրայեղ չափագանցութեան
շօւն գամելու համար հոս , կը փափաքիմ էնթէր-
վիուվէ ընել տարուան տամներկու ամիսները ,
որովհետեւ միայն անոնք են որ գուրկ մնացած են
այս պատիւէն :

Խեղա ամիսներ , ինչ ըսելիքներ ունին արդեօք ,
և ապուշ խմբագիրներ , որ զանոնք մարդու տեղ
չդնելով՝ միտուցնուն անդամ չեն անցուցած պզափկ
այցելութիւն մը տալ անոնց , որոնք հազարաւոր
տարիներէ ի վեր , անընդհատ կը տքնին , և հայ
գրաշարներէն նուազ բարերազդ , կէսօրուան փայ-
տափ մը հաճոյքը անդամ չեն կրնար վայելել , նա-
խանձելով անշուշտ սա՛ մեր վարժապետներուն ,
որոնք տարուան վեց ամիսը արձակուրդով կ'ան-
ցընեն , իսկ միւս վեց ամիսը՝ . . . քնանալով :

Ու այս նորաափալ գիւտին յզացումովը ուռե-
ցած , պայուսակը կը շալկեմ և ճամբայ կ'ելեմ
այցելելու բոլոր ամիսներուն , առանց ժամանակ
ձգելու որ Մանզումն , ինէ աւելի ճարպիկ փրթելով ,
չկանփէ զիս , մէկը զրկմով իր կողմէ , էնթէր-
վիուիէ ընելու համար մեծապատիւ Տամներկու
Ամիսները :

I

ՅՈՒՆՈՒԱՐ

Սիպերիայի ձիւնաձերմակ բացասատաններէն
մէկը , կուտակադէղ սառոյցներու հսկայական լեռ-
ներուն պատկառու շուքին տակ , պղտիկ խրձիթի
մը մէջ է որ կը բնակի Պապա Յունուարը , այն
օրէն ի վեր , երբ Տէրը . ըստ՝ «Եղիցի յայ» , —
բան մը որ ապահովարար զինքը չերիտասար-
դացներ :

Ժպտագին ընդունելութիւն մը կ'ընէ ճեր խո-
նարհ ծառային , թէեւ յոյտնի է որ , իր առանձ-
նակեաց անկիւնին մէջ , շատ սովորութիւն չունի
խմբագիրներուն այցելութիւնը ընդունելու , և այս
կէտը կը շեշտուի վիթխարի խոշորութեամբը իր
ճերմակ գլուխին , որ երբէք արդուկուած չըլլալը
կը յայտնէ :


Ճերմակ մօրուքը մինչեւ պորտը կը հասնի և
խիտ ու առաստ յօնքերուն տակ երկու չարաձձի
աչքեր կը պնդան , մինչ սերանը կը ծծէ շարու-
նակ ճերմակ բիբօ մը , որուն երազային կապրյա
մուխը ողոր մողոր կը բարձրանայ գէպի պատէն
կախուած լուսանկար մը , որ կը ներկայացնէ գե-
ռաստի աղուոր կին մը . — Պապա Յունուարին հին
ծըմբերէն մէկը անշուշտ :

Այցելութեանս նպատակը իմանալուն՝

— Ա՛ , պարո՞ն , կը բացագանչէ ա՛յնչափ ոգե-
ւորուած՝ որչափ Բրոֆէսէօր մը իր քարոզներէն
մէկուն մէջ , ես տարուան ամէնէն բաղդազորկ
ամիսն եմ :

Ինչո՞ւ , պիտի հարցնէք :

Որովհետեւ , նախ հետա կը բերեմ՝ կաղանդ-
չէքներու փորձանքը և վճարումներու պայմանա-



ժամերուն մեծագոյն մասը: Ա՛լ կ'երեւակայէք թէ
իմ այս առաւելութիւններուս պատճառաւ, ամէն մարդ ինտո՞ր երես կը դարձնէ ինձի, ինչու որ,
ինչպէս հարկաւ դուք ալ զիտած էք, ամէն մարդ
նուէր կուտայ, բայց ո՞չ ոք նուէր կը ստանայ,
ամէն մարդ պարտքը կը վճարէ, բայց ո՞չ ոք առ-
նելիքը կ'առնէ. այս գաղտնիքը չեմ կրցած լուծել:

Մէկ բառով, քսակներու միքրոպն եմ ևս և
ամէն մարդ կ'աղօթէ որ ժամ առաջ վերջանամ:
Եւ հակառակ իմ օրերուա՛ տարուան ամէնէն կարճ
օրերը ըլլալնուն, նորէն ամէնէն երկար ամիսը ըլ-
լալ կը թուիմ:

Սյապէս խօսեցաւ Պապա Յունուար, և ինչ-
պէս սովորութիւն է, ցաւակցեցայ իրեն... առանց
իր ցաւին դարմանը գտնելու:

II

ՓԵՏՐՈՒԱՐ

— Դեռ ո՞չչափ ատեն քսանըութը օր պիտի
քաշեմ:

Պալոն Փետրուարի առաջին խօսքը եղաւ այս
արտօնչը, զոր արտասանեց՝ տանջափի կերպով:

Երբ պատասխանեցի թէ այս խնդիրը դիւրաւ-
լուծուելիք բան մը չէր, խեղճ ու թշուառ Փետ-
րուարը ձականը ձեռքբուն մէջ առաւ, խորունկ
և սկսաւ ուսերը ցնցելով հեծկլտալ, անանկ մը
որ կարծես նոյն ինքը Մհակեանն էր որ Դարձնու-
ցալիքին Բ. վարագոյրը կը ներկայացնէր:

Քսանըութը տարու էր ան: Իր աշխարհ եկած
օրէն ի վեր քսանըութը տարու էր և երբէ՞ք չէր
ժիւեր մանկութեան օրերը:

Ու ծնած օրէն ի վեր կը մնար քսանըութը
տարիներու մշտածիծաղ գալունին մէջ, բան մը
որուն պիտի նախանձէին անշուշտ երեսունը ան-
ցուկ կիներ, որոնք ձեպընթաց կառախումբով
դէպի քառասուն կ'արշաւեն:

— Ի՞նչ է արգեօք ձեր գանգատներուն պատ-
ճառը, հարցուցի ա'յնչափ կենցաղագիտութեամբ,
որ եթէ անցեալ տարուան ՆԵՍՆ-ՊԱՊԻԿԵԱՆ ՏԱ-
ՐԵՑՈՅՑին կենցաղագէտ տիկինը հոն եղած ըլլար,
տասը մատը մէկին պիտի խածնէր:

— Իմ գանգատնի՞ս, պատասխանեց Պ. Փետ-
րուար անանկ շեշտով մը, որ կարծես Ռուբէն
Որբերեանին մէկ տոսնաւորը կը կարդար, ո՞հ, ո՞ր
մէկը թուեմ:

Նախ, աշխարհիս բոլոր կիները ինձի դէմ
մեծ քէն պահած են, որովհետեւ ամէն տարի իրենց
տարիքէն քանի մը օր կը գողնամ և այս կերպով
վերենք շուտով կը ծերացնեմ:

Աղջիները զիս չեն սիրեր, տիկինները ինձի
երես կը դարձնեն. ես ալ կը ստիպուիմ պառաւ
կիներով գոհանալ, բայց անոնք անդամ չեն նայիր
երեսս, առարկելով որ եթէ ես ալ միւս ամիսնե-
րուն պէս 30 կամ 31 օրերէ բաղկանայի, հիմա
անոնք ալ փոխանակ մէրմէկ ցնդած պառաներ
ըլլալու, տակաւին դեռասի կոյսեր պիտի մնային:

Ու երեւակայեցէ՞ք թէ՝ մի՛շտ քսանըութը
տարու եմ և տարիքիս այս յաւիտենսական երիտա-
սարդութեամբը հանդերձ՝ չեմ կրնար կոր գտնել
կին մը որ ինձի սիրաւորուի:

Հասպա վարձակալնի՞ը, Աստուած իմ:
Անոնք ալ անիծելով կ'անիծեն զիս, որովհե-
տեւ միշտ երկու-երեք օր կը գողնամ իրենց վարձա-
կալի իրաւունքէն և յանկարծ, առոտու մը, առջեւ-
նին կը տնկուիմ՝ յայտարարելու համար թէ վերջա-
ցած է ամիսը, մինչ տակաւին անոնք նախորդ

ամսականը ամբողջովին չեն վճարած :

Հապտ հայ բաղրաններու անաթէմաննը՝ ինձի դէմ :

Եթէ ձեռքերնէն գայ, զիս խաչը պիտի հանեն, որովհետեւ կը ստիպեմ կոր զիրենք՝ իրենց պաշտօնաներուն ամսականները վճարել՝ սովորականէն կանուխ :

Երբ իմանաք որ հայ բաղրան մը թոքախտեղած է, զիացէ՛ք որ իմ երեսէս է :

... Ու խեղձ Պ. Փետրուարը շարունակեց իր տրտունջները :

III

ՄԱՐՏ

Ընթերցողներէս անոնք որ «կլասիկական» հիմնական étudeներ ըրած ըլլալով, դիցարանութիւնը զիտեն՝ սուլուակայեն հիմա Մարտ ամիսը՝ ասպետական ձեւերով մէկը, — Տօն ժուռան մը թերեւս, Տօն Քիշօթ մը գուցէ :

Պատիւ ունիմ սակայն յայտարարելու թէ այս կարծիքը սիսալ է, բան մը որ ինձի ալ պատճառնեց դառն յուսախաբութիւնը փեսացուի մը, որ աղջիկանուի կերթայ և փոխանակ մանկամարդ հարսնցուի մը, մայրիկէն խոշոր կին մը կը գտնէ :

Մարտիկ ալս . — Խոշոր գլուխ՝ խոշոր մարտինի մը վրայ, որ իր հաւասարակշուռութիւնը կը պահէ՝ չնորդիւ փորին ու հակափորին պատկառելի խոշորութեան, որոնք, աճպարարի զարմանալիք ձարսիկութիւնով մը՝ առանց գլուխորելու կը կենան երկու կարծ որունքներու վրայ, հինգ հարիւր օմատնոց զինիի տակառի մը պէս,

Գլուխոր անմաղ ա'յնչափ որչափ . . . կեղեւուած հաւկիթ մը և թեւերը այնչափ կարծ որ կը զարմանաս թէ ինսո՞ր . . . քիթը կը ինչէ :

Մեր սիրելի նախահօր նոյ նահապետին պէս, պինդով սնած, մնձցած ու գիրցած, յայտնի է թէ կեանքին մէջ մըջիւնի մը վրայ անգամ չէ կոխած և ամբողջովին վճարած է Պատրիարքարանի տուրքերը :

Իր թաղին թաղական քըրպէտ-ը և գլուխին ցման հոգաբարձուն, բարի մարդուկ մը ըլլալ կը թուի, bon viveur մը գերազանցապէս, ամառ վրան-բաց պատմութիւններու, որ կրցած է քիչ մը դրամ հաւաքել՝ կարենալ իրազործելու համար այն պատուէրը, որ կը խրատէ՝ «Կե՛ր, ա՛րք և ուրախ լե՛ր», միջնարարներուն՝ զուարձանալով իրեն տարեկից կնիկներու հետ . . . histoire de rire, և սեղանը ունենալով միշտ պատրաստ ամէնուն տունը, ա'յնչափ հաճելի է իր ընկերակցութիւնը և ա'յնչափ թօնափ իր խօսելակերպը :

Ի՞նչ ըսելիք կրնար ունենալ Մարտիկ աղա որ հարկաւ երջանիկ էր ապկելուն և որուն հոգին չէր գիտեր անշուշտ ձաներոյթին ո՛չ մէկ տաղաւորը :

Սակայն, սիսալ, սիսալ, հարիւր անգամ սիսալ :

Մարտ ամիսն ալ իր տրտունջքը ունի, անիկա ալ իր տերը կողբայ և ան ալ ունի ցաւ մը, որ կը կոտսայ :

Ու Մարտիկ աղա՝ խորապէս յուզուած և յուզուանքը մոռնալու համար՝ գաւաթ մը գինի պարպէկ եաք, բայցաւ բերանը և տեսնենք ի՞նչ խօսեցաւ .

— Սիրելի՛ պարոն, հաւասարէ՛ք, ես տարւան ամէնէն գերազան ամիսն եմ. ինչպէս կը վկայէ ամէն մարդ, ամէն տարի ժամանակին

սպարտքո կը կատարեմ, սակայն պիտի փափաքէի
որ՝ ուրիշ եղանակի մը հանդիպէր իմ ամիս :

— Կարծեմ անձրեւներէն դժգո՞ւ էք :

Մարտիկ աղա ուսերը ցնցեց .

— Անձրեւները . . . պա՛հ ! թո՛ղ ուղածնուն
չափ գան, ինձի ի՞նչ. առնէս դուրս չեմ ելեր,
լմցա՛ւ :

— Ուրեմն, ի՞նչ կրնայ ըլլալ ձեր դժգո՞ւն
թեան պատճառը :

— Պատճառը . . . բայց պատճառը կերակուրա
ներս են :

— Կերակուրները :

Մարտիկ աղա աչքերը վրաս յառեց .

— Բայց, չէ՞ք գիտեր որ, ըստու, Մարտը միշտ
Ենձ Պահքին կը հանդիպի. Էյ, ի՞նչ ես կրնա՞մ
զահք բանել :

IV

ԱՊՐԻ

Երբ կայնեցայ սիրելի Պ. Ապրիլի սուածութեած է դարձանային վիլային առջեւ, որ պահուըտած է դարձանային ծաղիկներու գեղածիծալ ստուերներուն ետին, և երբ հազիւ կը պատրաստուէի՝ դրան սոնէթին P.S.V.P. հրամանին հնագանդիլ, ահա՛ դուռը բացուելով՝ Պարտիզանցի դժոգոչիկ ու կըսկզոր սպասուհի մը ցուցուց իր սոթթուած մնրկ թեւերը և ձեռքէս բռնելով՝ ըստ ցած ձայնով.

— Ալ'սթ, ձայն մի՛ հանէք, էցիցուց ու
խատի կոր:

Առաջ ալ, զրան մը կիսաբացքէն նշմա-
րեցի սիրելի Պ. Ապրիլը որ կ'աշխատէր:
Առաւօտեան սիրոն deshabillé մը՝ բացգոյն
մնանաքսէ, տանդելահիւս լայն փողկապ մը վիզն

շուրջը, որ աւելի կը չեցտէր մորթին փափուկ ձեր-
մակութիւնը, առաստ խարտեաշ մազեր՝ հանճարի
հովէ մը կարծես ալեծածան, մատնիներով բեռնա-
ւորուած պչրուհիի քնքուշ ձեռք մը, որ կը բոնէ
կոնջական ոսկեզօծ սիկարէթ մը, աշուշները եր-
կինք, Պ. Ապրիլ... կ'ոսանառուէր:

Սակայն, քայլերուս շշուկէն, իր երազանք-ներէն սթափած, բարեհաճեցաւ պահ մը վար իշնել Ողիմզոսի բարձունքէն, ուր կը սաւառնէր իր յանդերուն երկնաթուիչ թեւերուն վրայ (անդեկ օդա-պարիկի նոր տեսակ մը), և իր թրթուոն ձայնովը հարցուց՝ մելանուշօրէն ներդաշնակ շեշտով մը.

— *Brūz kawj, Zmzn'phi:*

Ու, այս կերպով իմացայ թէ այդ սիրուն աղ-
ջկը կը պատասխանէր (երբ կանչէին) Հռուփի ան-
համ անունին :

*N*o péripéties des choses !

Սակայն, սպասուհին լոռոթիւն կը պահէր,
լոռոթիւն մը, որ հակառակ լոռոթիւն ըլլալուն,
բնաւ պերծախօս չէր, քանի որ սախալուեցայ ան-
ձամբ պատասխանել .

— Սիրելի՝ վարպետ, ըսի, համեստ բիւռողը
մըն է որ եկած է ձեզի էսթէրսիլուց ինեւ:

Այս խօսքին վրայ, Պ. Ապրել երեսը ճմրթկեց,
ինչպէս որ պէտք էր, սակայն աչքերը ուրախու-
թեամբ փայլեցան, որովհետեւ մարդ ո՛րչափ ալ
բանաստեղծ ըլլաց, նորէն հոգիովը cabot է միշտ,
զոր օրինակ Աղամեան, թոյայեան ևայն:

— Մալքը, հրախայից բանաստեղծին եթերա-
յին ձայնու:

Ու մտայ՝ գրասենեակ-հիւրասրահ-զարդասեն-
եակ մը, — cocotte-ի ննջասենեակի մը չափ բու-
րումնաւէտ, — զոր նկարագրելու համար պէտք է
փոխ առնեմ Զո՞րապի՞ն զրիչը, — բայց պէտք է զիտ-
նալ թէ աշխարհի վրայ ամէն ըան փոխ կր արուի,

սակայն մարդ երբէք չի կրնար իր զրիչը փոխ տալ :
— Զեզի գոհացնելու համար ի՞նչ կրնամ ընել,
հարցուց Պ. Ապրիլ, հրամցնելով նույը սիկարէթ
մը, որուն ծխախոսը աւելի՝ խարսხեալ էր քան
մաղերը Աստղիկին (չառառածածուհին համար եմ,
և ո՛չ... գերասանուհին համար) :

— Տէ՛ր, ըսի խոշոր խոնարհութիւնով մը,
եկած եմ ոչանակել ձեր տպաւորութիւնները իրը
ամիս :

— Ի՞մ տպաւորութիւններս. ո՞հ, շատ ան-
սպասու են անոնք :

Ժպտեցայ և չարունակեցի .

— Վերջապէս, ի՞նչ են ձեր գաղափարները :
Փափկազգայնիկ Պ. Ապրիլ ներշնչուած քոչ
մը ստացաւ և սկսաւ .

— Բանաստեղծ մըն եմ ես, բանաստեղծը գա-
րունի և կնիկի, բանաստեղծը ծաղիկի ու կա-
պոյտի... :

Ու Պ. Ապրիլ արտասանեց երդող ձայնով մը .

Գարն մե, ծաղիկ, կապոյց ու կին,
Երազային դրայնաս, եղեմ,
Ինչ որ ժլւաւ ահա' երկին,
Ինչ որ ահա' ես ալ կ'երգեմ:

(Այս միջոցին, Պ. Ապրիլ ասանակօրով երկինք
ելած ըլլալով, քանի մը վայրկեան սպասեցի որ
երկինքն վար իջնէր.)

Ու չարունակեց .

— Սոդ, երբ իմ կարգիս կուգամ գրաւել
Օրացոյցին էջերը, կուգեմ որ ինձի դարպասեն,
զիս տօնեն, և աղուոր աղջիկներու խումբեր
ձերմակ ծաղիկներով դան զիս դիմաւորել՝ սիրոյ
երդեր երդելով .

— Իրաւունք ունիք :

— Մինչեն՝ ասոր փոխարէն ի՞նչ կ'ընեն. իմ

Եկած առաջին օրս իսկ կարգ մը մարդիկ՝ իրար
խարելու համար, խել մը անհամ տափակութիւն-
ներ կը յօրինեն և չեն վարանիր զանոնք իմ անու-
նովս մղբակելու՝ poisssons d'avril կոչելով :

Ու իմ յիշատակս յարգելու համար, տարաւան
մնացած մասին մէջ ալ ... էրիկները իրենց կիները
կը խարեն և փոխազարձաբար, պարաստէրները
իրենց առնելիքորները կը խարեն, երիտասարդ-
ները՝ կարգուելու խոստումներով աղջիկները կը
խարեն, բաժանորդները՝ թերթի անօրէնները կը
խարեն ... :

Ուփ, անտանելի է աս, եղբայր :

V

ՄԱՅԻՍ

Գլխէն մինչեւ ոտքը, վերապատուելի clergy-
տանի մը պէս սեւեր հաղած, դէմքը լուրջ ու-
տժգոյն, պեին ու մօրտքը ամբողջովին ածիւ-
ուած, Գեր. Տ. Մայիս զիս կ'ընդունի խստաբարոց
պարտէզի մը մէջ, ուր ծաղիկները անգամ գու-
նաւոր չեն... ի նշան լրջութեան :

Տ. Մայիս բիսացա կ'ընէր այս պարտէզին մէջ,
աչքերը սեւեռած խոշոր գիրքի մը էջերուն վրայ,
որ ապահովաբար Աստուածաշունչի հասոր մըն էր,
կամ նարեկ մը :

Երբ մեջբացարեցինք (յոգնակի առաջին դէմք՝
ինչան լրջութեան) ւեր այցելութեան նպաստակը,
Տ. Մայիս աւելի լուրջ կերպարանք մը ստացաւ,
եթէ երդէք կարելի է ատիկա :

Իր կարդացած էջին մէջտեղը՝ կարմիր ժապա-
ւէնէ նշանը ձգելով, հասորը գոյցեց, թեւին տակը
առաւ, հաղաց, ակնոցը ամանին մէջ ծալից, եղ-
ջերախող վչելու պէս քիթը ինչեց և աչքերը

գէսի երկինք վերցնելով՝ սապէս սկսաւ.

— Յարգելի՛ պարոն, իր վիճակին տրտնջակ չի վայեր երբէք պարկեշտ մարդու մը, ո՞րչափ ալ տրանջալիք ըլլայ վիճակը. և իրա՛ւ ալ, այս սկզբունքիս հաւատարիմ, մինչեւ հիմա տրտունջ մը չէ ելած բերնէս։ Սակայն, չեմ ուղեր որ ինձի համար պարակ տեղ յոդնած ըլլաք և մինչեւ հոս գալու ձանձրոյթը յանձն առնելէ ետք, ձեռուընիք ունայն ետ դառնաք։

Վիճակս, յարգելի պարոն, կայ մարդ մը որ իր վիճակին գո՞ն ըլլայ։

Տարտուն ամէնէն անյարմար ամիսն եմ և իմ պաշտօնավարութեանս օրերուն, իմ պարկեշտութիւնս ու ամօթխածութիւնս չարաչար կը չարչարուի։

Արդարեւ, իմ օրերուս կը սկսին բուժնիլ տերեւները, և կ'երեւի թէ անոնց փթթումը շատ հետաքրքրական ըլլալու է, որովհետեւ չեմ կրնար առնել քայլափոխ մը, առանց հանդիպելու սիրամոլ զոյգի մը, որ տերեւներուն փթթումը դիտելու զրադած ըլլայ։

Ու ես որ լուրջ ու անբասիր վարքի մը տէր եմ, տեսէ՛ք, ինձի՛ է որ կը յանձնեն՝ տարուան տասերկու ամիսներէն ամէնէն անպատկառին պահապան հրեշտակը ըլլալու պատիւը։

Ասեն մը — դիցաբանութիւնն դարերուն — վիճակս ասէւ աւելի գէշ էր. մարդիկ դիտամիր իմ ամիսս լնարած էին, պոշելու համար յասուկ տօներ, ուր Աստղիկի տաճարներուն մէջ մինչեւ լոյս սիրոյ տօնախմբութիւնները կը կատարուէին։

Գէտք չէր որ սակայն, իմ լրջութիւնս ու պատուախնդրութիւնս նկատի առնելով, ինձի յանձնուէր անանդ եղանակ մը, ուր սիրուերը քիչ մը նուազ բոց ունինային և զզայարանքները՝ քիչ մը նուազ դիւրավառութիւն։

Եւ, յետոյ, Աստուած իմ, աս որչափ ծաղիկ։ Ծաղիկ, ծաղիկ, ծաղիկ... ամէն տեղ ծաղիկ, նոյն իսկ լրագրավաճառներուն ձեռքը... ծաղիկ։

Այսչափ ծաղիկէն ա՛լ հարբուխ եղայ, պարոն, հազ եղայ, հրւանդ եղայ։

Հապա սա անտանելի բանաստեղծները։

Վեց հաղար տարիէ ի վեր ամէն վայրկեան վրաս բան կը գրեն, և դեռ չմնցուցին։

VI

ՅՈՒՆԻՍ

Խա՛չ որ, ինչ շարման սա՛ միւսիւ Յունիսը, ճշմարիտ տիպարը զուարթախոն ֆետարի։

Բայց ո՛չ այսօրուան ֆետարէն, այն արժգոյն ու նիհարկեկ երիտասարդները, իրենց տօնեաւ առ ամեն կը կարուած մէջ կրառուած, որոնց կը հանդիպինք՝ իրիկուան գէմ՝ թոգաթեանին սրահը, իրենց գտապաններուն կոթը կրծելով, և կէսգիչերէն ետքը՝ երգեցիլ-սրճարաններու foyentները, ուր նստած կը յօրանցնեն՝ կեանքի ձանձրոյթը վայելողի ամրողը spleen-ավը, իրենց տաղտուկը ջանալով ծածկել՝ մինչեւ մէջքերմին դէկոլետէ երգչուհիներու սլիքութիւններով։

Չէ՛, սիրելիներ, միւսիւ Յունիս այս զելզեկներէն չէ՛։

Խոշոր ու մարմնեղ երիտասարդ մը, պեկները ու ցօծ, աչքերը շառվուան, շրթունքները թագմ և ակրանները առողջ, որոնց կիները կը նային՝ ակամայ՝ հիացումի ու ըղձանքի յայտնի արտայացութեամբ մը։

Տասը տարուան մտերիմ բարեկամի մը ընդունելութիւնը ըրսաւ, աչքերը շփելով, որովհետեւ

դեռ անկողնէն նոր էր ելած, թէեւ կէսօրը երկու
ժամ կ'անցնէր:

Իր խասնախինդոր մաղերը և աւրուած պե-
խերը կը մատնէին վոթորկալից զիշեր մը...:
Բաղնիքի լայն զենջակի մը մէջ փաթ-
թուած էր:

— Քիչ մը չո՛ւտ, հէ, լսաւ, որովհետեւ
շա՛տ զբագած եմ, առառուան տուշս պիտի ընեմ:
— Վայրկեա՞ն մը, ամիսներու անձնական կար-
ձիքները հաւաքելու ելած եմ, և կը փափաքիմ
ձեր ալ կարծիքները ստանալ:

— Կարծիք..., ես ատամկ բան չունիմ:

Կեանքի դառնատեկու պատճառ մը չունիք
ասպելէն:

Միւսիւ Յունիս ժամանակաւ.

— Կը սիսալի՛ք, սիրելի՛ս:

— Ի՞նչ:

— Իրաւ է որ սովորութիւն չունիմ իմ գժգո-
հութիւնս յայտնելու համար մունետիկներ բռնելու
և լրագիրները չեմ լեցներ իմ արձակ կամ ստա-
նաւոր արտաւնչներովս, սակայն ասիկա պատճառ
մը չէ որ նուազ գժգոն ըլլամ:

— Զիա՞րդ:

— Ահա՝ պատճառը. զրօսանքը կը սիրեմ,
հաճոյքը կը պաշտեմ և կատաղի գիշերաշրջիկ մըն
եմ. ինծի համար ցորեկ չկայ. ցորեկները կա՛մ
կը քնանամ և կամ տուշ կընեմ:

Բայց զիշերը..., օ՛հ, կեցցէ զիշերը, կեցցէ
մութը. կառքով պատյաներ, գամիլլի մէջ լուս-
ցնեներ, Եանին, Թողաթլեանը, Գոնդորսիան,
Գրիսթալը... ահա՛ իմ կեանքս:

Սրդ, երեւակացեցէք վիճակս, երբ չար բաղ-
զիշերները ամէնէն աւելի կարծ են, որ

Սա՛ անիծած առաւօսն է որ ամէն բան կ'աւրէ կոր:
Հազիւ թէ գլուխները կը տաքնան, ձաները
կը բարձրանան, վերջապէս հազիւ թէ ամէն մարդ-
քիչ մը ինքզինքը կը գտնէ, և ահա՛ արեւը կու-
գայ ամէնուն քէյֆին մէջ փսիկելու, իր վարդա-
պետական լոյսը ափաելով մեր շամբանեալի գա-
ւամներուն վրայ:

Ախ, եթէ սա՛ խոփած գեկտեմբերին տեղը
ըլլայի, այն ատեն պիտի կընայի ամէն օր առ-
տուընէ սկսեալ լուսցնել:

Այսպէս խոսեցաւ միւսիւ Յունիս, և բաժ-
նուեցայ իւմէ տխուր, գլխանակ ու անոր արդար
տրատոններէն խորապէս զգածուած:

Խե՞զ Յունիս, գուն ալ այս Տերտին պիտի
երթաս:

VII

ՅՈՒՆԻՍ

— Պարո՞ն, դուք ձեր առջեւ կը գտնէք ամիս
մը, որ չափազանց կը ձանձրանայ:

Չեմ գիտեր թէ միւս պաշտօնակիցներս ի՞նչ
մտերմական խոստովանութիւններ ըրին ձեզի,
սակայն կը գուշակեմ զանոնք:

Մէկ խոսքով, — ինչպէս գիտեցիք հարկաւ,
— մեզի ամէնէն աւելի սրամտեցնողը այն անտա-
նելի միօրինակութիւնն է, որով ամէն տարի,
միեւնոյն ժամուն և միեւնոյն վայրկեանին կու-
զանք՝ յաւիտենապէս կատարելու համար միեւ-
նոյն պաշտօնները:

Բանաստեղծն ալ չէ ըսած՝

Դժնիկ ձանձրոյքն ինքնարոյս
կը ծակձըկէ սիրս անդուլ:

Ահաւասիկ, մինք ալ կը ձանձրանանք և թէ
ինչո՞ւ գո՞չ չենք մեր վիճակն :

... Յուլիանոս աղա Յուլիսեանն էր որ կը
խօսէր այսպէս, չափազանց մերոնիլ ոճով մը,
կարծես Յ. Գուրգէնէն ընդօրինակուած, նախա-
դասութիւնները շեշտելով խղճամորէն, առանց
վանկ մը խոկ կլլելու և իւրաքանչիւր բառը սառ-
բագծելով ձեռքի ու մասներու սղափիկ շարժու-
ձեւով մը :

Լայն գիշերազգեստ մըն էր հագած, գլուխը
կար bonnet grec մը և քիթին վրայ՝ թիթեղեայ
շրջանակով ակնոց մը :

— Սրդեօք պիտի կրնայի՞ հասկնալ ձեր ձանձ-
րոյթին գլխաւոր պատճառը, հարցուցի :

— Դիլսաւոր պատճառով . . . , մրցանակարաշխու-
թեան հանդէմները, պարո՞ն :

— Հրամմեցէ՞ք, ըսի արմացած դարմացած :

— Այո՛, պարո՞ն, դպրոց-ցա-կան մրցանա-
կա-բաշ-խութիւննե՞րը, շեշտեց Յուլիանոս աղա
Յուլիսեան :

Եւ տակաւին անոնք ա'յնչափ կարեւորութիւն
չպիտի ունենային, եթէ, ամէն մեղքիս վրայ, հա-
մեմուած չըլլային այն նշանաւոր ճառերով, որո՞ք
մրցանակարաշխութեանց ձանձրանալիութեան օջու-
ները կը կազմնեն :

Ո՛հ, այս ճառե՞րը :

Միայն ատոնք միտքէս անցրնելը բաւական է,
որպէս զի մահուան սարսուոր զգամ:

Երեւակայեցէ՞ք որ, դարերէ ու դարերէ ի վեր
առ ա՛ռ է, և ես, դարերէ ու դարերէ ի վեր մտիկ
կ'ընեմ այս ճառերը, միշտ միեւնոյնը, միշտ ան-
դժօրէն համանման և յաւիսենապէս իրարմէ ընդ-
որինակուած :

Ա՛ւ ասոնց երեսէն ջղային դարձայ, ջլախտա-
ւոր եղայ :

Բոլոր այդ յաւիտենական «հուսկ բանք»երը
բերնուց զիտեմ ա՛լ, բացարձակապէս բերնուց,
սկսելով անխուսափելի «Սրբազնն Հայր, Տես'րք
և Տիկնա'յք»էն, մինչեւ ամ' անփոփոխելի cliché
«որպէս զի ըլլաք մարգեր, գիտակից բարեոյն,
գեղեցկին ու վումին և օգտակար անհատներ հա-
մայնքին ու եկեղեցւոյն»ը :

Ամէն անզամ որ կ'իմանամ վարժապետական
պոստ չեշտերով արտասանուիլը այդ ճառերէն
մէկուն, թաշկինակոս կը խածնեմ, չպուալու համար :

Ինչպէս գիտէք, ես չատ լուրջ մարդ մըն եմ,
և սակայն, հակառակ ասոր, այդ ճառերը իմանա-
լուս պէս, անդիմադրելի փափաք մը կը զգամ
երգելո՞՝ Կրամբամբուշին այն օդին է . . . և կամ
Բանդարունիս կոճակը . . . :

Եթէ ինքինքո յարգող և պաշտօնիս գիտա-
կցութիւնը ունեցող մէկը ըլլայի, հաւատացէք որ
շատո՞նց հրաժարականս տուած էի և զիշերով
կծիկը դրած :

Սակայն, լաւ գիտեմ թէ իմ այս ընթացքս
ո՛րչափ պիտի շուարեցնէր ամբողջ տարին և ի՞նչ
փոփոխութիւններ պիտի մտցնէր կեանքի ժամա-
ցուցային դրութեան մէջ :

Այս էր պատճառը որ անցեալ տարի դիմեցի
պատկառելի Ուսումն. Խորհուրդին, ինդղելով որ
դպրոցական արձակուրդներու պայմանաժամը քանի
մը ամիս առաջացնէ կամ յապաղեցնէ :

Իմ միւս պաշտօնակիցներս բնաւ առիթը չեն
ունեցած՝ մրցանակարաշխութեանց հանդէմներու
ներկայ գտնուելու. թո՛ղ քիչ մըն ալ անոնք վա-
յելեն այս հաճոյքքը : Միայն իմ ճակարիս գրուած է :

Ինծի՛ ալ մեղք է :

VIII

ՕԳՈՍՏՈՎ

Պարզ է խնդիրը :

Օգոստոս ամիսը միմիայն տաքէն կը դժգո՞վ :
Որովհետեւ Օգոստոս ամիսը շատ տաք կը զգայ, որովհետեւ Օգոստոս ամիսը տաքէն կը խղղովի, ինչպէս առնել մասցած աղջիկները էրիկ կողեն, Օգոստոս ամիսն ալ քիչ մը օդ կ'ուզէ :

Ասկէ դուրս, իրեն համար ամէն բան աղէկ է, կեանքը՝ գեղեցիկ, կնիկները՝ աղւոր, ծովը՝ կապոյտ, ծիւնը ձերմակ և օրացոյցներու օդային գուշակութիւնները կարելի եղածին չափ անձիշդ :

Սրդէն Օգոստոս ամիսը այնչափ գէր է որ՝ ո՛րչափ գանդատի, իրաւունք ունի :

Բայց, անիկա մնուշութեամբ կը տրտնջայ . . . : Խեղձը ա'յնչափ տաք կը զգայ որ բարձրածայն խօսելու կամ բարկանալու տերման իսկ չունի :

Երբ հաճեցաւ զիս ընդունիլ, Պ. Օգոստինոս իր պարտէզին մէջ էր, — չքաւէտ պարտէզ մը —, ու ձերմակ կտաւէ բանդալոն մը հաղած, թեւերը սոթթած, կուրծքը մերկ երկու ձեռքերն ալ տանի տան թաթիւելով պազ ջուրի ամաններու մէջ, մինչ պաղպաղակի ամաններ զինքը կը շրջա-

Սակայն, գարձեալ քրտինքի խոշոր կաթիւներ կը դւտորէին ձակուէն,

— Բնաւ մէկուն չդիմեցի՞ք, կը հարցնեմ:
Պ. Օգոստինոս ուսերը ցնցեց,
— Դիմեմ, բայց որո՞ւ: Հազիւ թէ կը հաս-
արդէն. արդ, որո՞ւ կողէք որ դիմեմ:
— Սակայն, ինտո՞ր կընէք . . . :

— Նորէն, ամէնէն աղեկը, մարդ իր գործը անձամբ տեսնելու է:

— Այսինքն . . . :

— Կը խոստանա՞ք ըստածս մէկուն չյայտնել:

— Կը խոստանա՞մ:

— Պատույ խօ՞սք:

— Խօ՞սք:

— Ուրեմն, խօսքը մէջերնի՛ս, երբեմն համաձայնութիւն կը գոյացնեմ սիրելի Դեկտեմբեր բաշրեկամիս հետ, որ շատ մսկու է. ևս իրեն քանի մը տաք օր փոխ կուտամ, ան ալ ինծի՝ քանի մը պաղ օր . . . ասիկա ո՛չ մէկու կը վնասէ, հէ :

— Հա՛, ուրեմն ասոր համար է որ երբեմն օգոստոսին մէջտեկը, ջերմաչափը. . . :

— Սը՞սթ, մէկուն բան մի՛ ըսէք, եւքէն՝ միւս ընկերներս ալ ասանկ կընեն. գիտէ՞ք, խօսք առուիք:

— Այս՛, այս՛:

— Պատույ . . .

— Խօ՞սք:

Ու խօսքս յարգեցի:

IX

ՍԵՊՏԵՄԲՐԵՐ

Որսորդի աւանդական զգեստները հագած, հրացանը ուսին և պրոտասկը կախուած քովնատի, Սեպտեմբեր կը պատրաստուէր իր շուներուն հետ որսի երթաւ, երբ պատիւը ունեցայ իրեն ներկա-յանալու:

— Օ՛, կարծեմ որսի եղանակին բացումը կը կատարէք կոր:

Բայց, Սեպտեմբեր հառաչեց :

— Ի՞նչ ընես, ալէտք է, ըստու համակերպած
մարդու շեշտով մը:

— Կ'երեւի թէ սակայն ասիկա ձեզի հաճոյք
չի պատճառեր:

— Վա՛զ անցիր, եղբա՛յր:

— Ուրեմն, ինչո՞ւ կ'երթաք:

— Շատ միամիտ էք, սիրելի՛ս, հապա պար-
տականութիւնը . . . : Եթէ կը կարծէք թէ լոկ իմ
հաճոյքիս համար է որ ամբողջ ամիս մը լեռները
ու ձորերը կը պարտիմ՝ թափառական Հրեայի մէկ
նոր տապագրութեան պէս, սխա՛լ, հոգիս, մէկ մի-
լին անգամ սխալ:

Ուսորդութիւն . . . ի՞նչ փորձանք, Ասու-
ուա՞ծ իմ:

Թերեւս որսորդութիւնը ա՛յնչափ անսանելի
չըլլար լնքնին, եթէ սա՛ որսորդները չըլլային
դոնէ:

Աստուած չընէ, աղնի՛ւ պարոն, որ ճամբան
որսորդի մը հանդիպիք:

— Բայց, հանդիպեցայ:

— Ե՛, գլուխնիդ բան մը չեկա՞ւ:

— Ի՞նչպէս չէ. պղտիկ զնդակ մը եկաւ,
մարմիս ամէնէն հարուստ տեղը:

Սեպտեմբեր ուսերը ցնցեց:

— Ասիկա դեռ բան մը չէ, հոգի՛ս, աւել-
ցուց. Եթէ որսորդները միմիայն զնտակներ նե-
տէն, նորէն ի՞նչ որ է, սակայն, ամէնէն գէշը,
այն որսորդութեանց պատմութիւններն են, Դորս
հրապարակ կը նետեն:

Քանի քանի անգամներ մտիկ ըրած եմ սա՛
միւնոյն պատմութիւնը.

« Երեւակայէ՛, եղբա՛յր, ծառի մը տակ կայ-
«նած էի, մէյ մըն ալ խումբ մը թռչուններ անցան.
«մէկ երկու չըսած՝ հրացանս շտկեցի, և պո՛ւմ,
պո՛ւմ, պում . . . :»

Եւ սա՛ հազիւ խօսքը աւարտած՝ ուրիշ մըն է
որ կը սկսի,

« Անգամ մը ես . . . :»

Ճաթելիք բան է, ճաթելիք:

Գոնէ՛ սա ապաւչները քի՛չ մը երեւակայու-
թիւն ունենային, գոնէ՛ քանի մը սիրուն տարի-
նածներ կարենային ստեղծել, նորէն ի՞նչ որ է:
Բայց ուր կը փնտռես:

Ու երեւակայէ՛լ թէ ամէն տեղ մասնաւոր
club-ներ կան, ուր մը՛միայն այս պատմութիւն-
ները կ'ըլլան. — Օրինակի համար, Իզմիրի Club
des Chasseurs-ը, ուր որսորդութեան պատմու-
թիւններով մարդուն գլուխը կ'արդուկեն:

Ասէն մը, քի՛չ մը յոյս ունեցած էի ազատե-
լու, տեմնելով կազմութիւնը որսորդներու նոր
ակումբի մը, որ բոլորովին տարբեր ակումբ մըն
էք, և որ կը բաղդանար միմիայն այն յարգելի որ-
սորդներէ, որոնք . . . չեն որսար:

Ասոնք, առտուն կանուխ ճամբայ կ'ելլէին,
հրացանը կոնսակնին և իրենց պայուսակը կախուած
քովնատի, ուր պիտի դնէին ա՛յն որսերը զորա . . .
չպիտի ուսային:

Ասոնց նպատակն էր՝ զիւղի մը ճաշարանը
հաւաքուիլ, և փոխանակ հրացան պարպելու,
իրենց առողբակներուն պարապ խօսքերը պարպել
առտուլնէ մինչեւ իրիկուն և իրիկուան տուն վե-
րադառնալ՝ առանց բացարձակապէս բան մը որսա-
ցած ըլլալու:

Սիրուն ծրագլու, չէ՛, և ես կ'ուրախանայի
թէ ա՛լ եկած է ժամանակը, ուր երկինքի թըռ-
չունները և երկրիս կենդանիները աղաս պիտի ըլ-
լան՝ արձակ համարձակ պարտելու, առանց որ-
սորդներէն հալածուելու:

Սակայն, եկէ՛ք տեսէք որ, այս մարդիկն ալ,
հակառակ իրենց սկզբունքին, նորէն գերագոյն

ապուշութիւնը գործեցին՝ իրարու . . . որսի պատահութիւններ պատմելու:

Այն օրը հասկցայ թէ ամէն յոյս վերջացած է ա՛լ, ո+i=n=fini ըլլալուն տեսակէն:

Գոնէ պատմուած պատմութիւնները իրա՛ւ ըլլալին:

Նե՛ կեզեր . . . :

Սո՞ւտ, սո՞ւտ, բոլո՞րը սուտ այն հրացանի հրաշալի հարուածներուն, որոնք ապահովաբար իրենց երաղին մէջ նետուած էին միայն:

Նա՛. օր մը ես սա դիմացի անտառը նապաստակ մը կը հետապնդէի կոր. յանկարծ՝ հո՛փ . . . հո՛փ . . . ահա՛ նապաստակս . . . հրացանս առի . . . ու պո՛ւմ, պո՛ւմ . . . :

Ու մինչեւ իրիկուն, Պ. Սևակեմբեր որսի պատմութիւններ ըրաւ ինձի:

X

ՃՈԿՏԵՄԹԱՆՐ

Գարթալի աղւոր երկինքին տակ, այդեւսաններու գեղանկար շրջանակին մէջ է որ կ'ասպի տիեզերահոչակ գինեպանը «Օ պարպաս Օքրով րիոս», — մեծանուն յաջորդը նոյ նահապես սիրելի բարեկամիս, որ իր գինիին գիւտովը կինայ պարծի աշնչափ, որչափ չպիտի կրնային պարծենալ Մարքոնի կամ էտիլուն՝ իրենց բազմազան գիւտերով և որ իր այդ գիւտովը՝ աշխարհա բուր հարիչներէն աւելի օգտակար ծառայութիւնն մը մատուցած է . . . գինովերուն:

Իր գինիի ահապին տակառներուն ու ուկեղօծ խաղողներու հմայիչ տեսարանին մէջտեղը, փայտէ աթոռակի մը վրայ նատած կորաքամակի:

բարի այդեպանը կ'երաղէ՝ աչքերը յառած գէպի հորիզոնը, որ այդեստաններու անհունութեանը մէջ կը կորսուի:

Կ'երաղէ, ու իր երաշանքները մելամաղձոտ քան մը ունին:

Ո՛վ գիտէ ինչ տիսուր մտածումներ կը թեւածին անոր գանկին մէջ:

— Ի՞նչ տնիս, սպարպա՛, կը հարցնեմ. այդեւութը գոհացուցիչ չի՞ թուիր քեղի այս տարի:

— Զէ՛, որդեակ, չէ:

— Արդեօք խաղողը պէտք եղածին պէս չհասունցա՞ւ:

— Զէ՛, որդեակ, չէ:

— Ուրիմն ի՞նչ կը մտմտաս:

Բարի այդեպանը երեսսնայեցաւ մելամաղձորէն:

— Ա՛ն, որդեակ, խաղողներս ա՛յնչափ աղէկ են և այդեկութը աշնչափ գոհացուցիչ, որ անսնց երեսէն . . . հիւանդ եմ:

Ա՛յնչափ գինի խմեցի, ա՛յնչափ ընտիր գինի կլեցի որ, վերջապէս եղաւ ինչ որ գրուած էր . . . գինովերու տետրակին մէջ:

Ի՞նչ ընեմ, որդեակ, կը սիրեմ գինին և մանաւանդ ընտիր գինին կը պաշտեմ. մարդ միթէ պատասխանատո՞ւ է իր սէրերուն, և յանցանքը ի՞մ է, երբ իմ սիրուհիս, իմ կինս, իմ նշանածս, իմ մերրեւս գինին է:

Բայց բժիշկս պատուիրեց որ եթէ չեմ փափաքիր անդիի աշխարհը այցելել, պարտաւոր եմ գինիի տեղ միայն կաթ (ումել:

Հիմա, պարո՞ն, զուք իմ տեղս եղէք, անուննիդ Հոկտեմբեր ըլլայ, և, պօյերնիդ տեմնեմ, կա՛թ խմեցէք:

Տոքորը վիճակս հաօլցաւ:

— Քանի մը ամիս Պրուսայի ջերմուկները զացէ՛ք, պատուիրեց:

— Հապա գո՞րծս :

— Սրճակուրդ մը առէ՞ք :

Ու ես, իբր պարտաճանաչ մարդ, քանի մը
ամսուան արճակուրդ խնդրեցի՝ ինքվինքու խնա-
յելու համար :

Ինչ, իբրաւոնք չունէի՞ միթէ : Վարժապետ-
ները ամէն սարի արճակուրդ ունին, և ե՛ս որ՝
աշխարհիս ստեղծուելէն ի վեր, կ'աշխատիմ՝ գի-
նովութեան երջանկութիւնը բաշխելու համար ժա-
մանակակիցներէս անո՞նց, որոնք իբրնց սիրտին
ցաւերը կ'ուզեն լուալ իմ տակաւներուս մէջ, ին-
չո՞ւ ես ալ չունենամ իմ արճակուրդու :

Սակայն, աէսէ՞ք, տեսէ՞ք որ վարժապետնե-
րու չափ ալ կարեւորութիւն չունիմ եղեր :

— Ահնդ ես, ինչ ես, պօռացին երեսո-
վարկս իմացանան :

Ու ես հիմա ստիպուած եմ թէ հիւանդու-
թիւնս չդարմանել և թէ զինի խմել :

Սակայն, Աստուած միծ է, հիմա ա՛ռ հայինք
սա գաւաթը :

— Կենա՛ցդ :

... Ու Պարպա Օգթովրիոս՝ իր ցաւը մոռա-
նալու համար՝ նոյն օրը աւանակներու պէս լու-
միցաւ :

XI

ՆՈՅԵՄԲՐԸ

Կաստորիալ ձեռնդրվածքի յոյժ distingueé դրա-
բեւոյթին տակ ներկայացաւ մեղի Սըսղը նո-
յեմբեր :
Անշուշտ իր ձերմակեղէնները Լոնտոն կը

լուայութիւն . իր վաղկապը կը յաւակնէր մէկ հա-
սկէ ըլլալ տիեզերքի վրայ և իր ժիշեին կերպա-
սին միւս օրինակները այրուած էին, որպէս զի
մի՞ գուցէ ուրիշ մըն ալ ատկէ իրեն ժիշէ շինել
տայ, և իր զգեստները աշնչափ անքնաղատելի
էին, որ կարծես զանոնք ձեւողը Վահան Փափազ-
եաննէր (դերձակ) :

Աշխարհիկ մարդ, սալոնի մարդ մէկ բառով ,
որուն դէմքին վրայ կը փայլէր ... պաղզաւակու-
թեան գերազոյն աստիճանը : Ծայրայեղօրէն պա-
զարփին մարդ մըն էր սա, որ սպահովաբար իր
կեանքին մէջ ամէն օր ինդալու առիթը չէր
գտներ :

Երբ իմացու այցելութեանս նպատակը , աթոռ
մը հրամցուց և սկսաւ խօսիլ ձայնով մը , որ Սա-
ռուցեալ Ովկիանոսէն կուգար կարծես :

— Պարո՞ն, ըսաւ, ես շատ զուարթ մարդ
մըն եմ :

Այս անակնկալ յայտարարութեան առջեւ՝ խո-
նարիեցայ ... գեանէն առնելու համար երկու թե-
ւերս , որոնք զարմացումէս ուսերէս փրտելով՝
վար ինկած էին :

Մեծայարգ Սըր ձօն Նոյեմբեր նշմարեց զար-
մացումս և շարունակեց ժպիտով մը (ո՞հ , այդ
ժպիտը) .

— Կը զարմանա՞ք . բայց աս ա՛ս է . ինչպէս
պատիւը ունեցայ ըսելու , շատ զուարթ մէկն եմ,
նոյն իսկ զուարթէ աւելի՛ բան մը , յիմա՛ր տղայ
մը , թեթեւսովի՛ մը , չարաձճի՛ մը :

Բայց , աւա՛զ , անգութ ճակատագերը զիս
դժբաղդ երկինքի մը տակ ստեղծեց :

Հազիւ աշխարհ եկած , ու ահա՛ անմիջապէս
իմ ետեւէս կուգայ Ամենայն Սըրոցի տօնը , մե-
ռելներու տօնը , ուր , աշխարհիս բոլոր կաթոլիկ-
ները , սեւեր հազած , իրենց մեռելներուն վրայ
կ'երթան :

Հիմա, ինքզինքնիդ իմ տեղս դրէ՛ք, և ըսէ՛ք,
այս պայմաններով, մարդ ի՞նչպէս կրնաց դռւարթ
ըլլալ:

Յետոյ, իմ օրերուս, երկինք աժգոյն է, հար-
բուխ է եղած ու կուլայ. տրամաթափիծ տիրու-
թիւն մը կը ճնշէ մթնոլորտը. աշունը անցած է
ալ, բայց դեռ ձմեռն ալ չէ եկած:

Ասանկ օդովլ մը զուարթ եղէք նայիմ:

Ահ, երբ անգամ մը բաղդը մարդուս քէն
պահէ, ալ գործին խերը տե՛ս:

Զէք գիտեր, պարոն, սիրտիս մէջ ի՞նչ խոլ
բաղձանք մը և ի՞նչ յիմար տենչ մը ունիմ:

Բայց, մի՛, ո՛հ, զիս մի՛ ծաղրէք:

Կուզեմ օ՛ր մը օրանց սա Բարեկենդանը
տեսնել:

Հէ, որչափ ազուոր է արդեօք դիմակաւոր
պարահանդէս մը, և աժա՞ն, աժա՞ն, մոռքը՝
5 զրուշ:

Ի՞նչ թօնափ պիտի ըլլար, երբ Բիենօի լաթեր
հագնէի, աւել մը ուսս, և ցատկէի, ցատկատէի,
պօռայի, կանչէի...:

Սակայն աւա՛զ, երազ մըն է այս:

XII

ԴԵԿՏԵՄԲԵՐԸ

Երբ ներկայացայ մեծապատիւ Պ. Դեկտեմբերի,
այս վերջինը դուրս ելած էր:

Բարերազդաբար սակայն, առաջուց գրած ըլ-
լովլ իրեն այցելութեանս նպատակը, սպասուհին
յանձնեց ինձի նամակ մը, զոր կը հրատարակեմ՝
թարգմանութեան ու արտասպումի ամէն իրա-
ւունքները վերապահելով. —

«Ուրեմնի պարո՞ն,

«Ներեցէ՛ք որ չպիտի կրնամ ձեզի անձամբ
ընդունիլ, որովհետեւ պարտաւոր էի դուրս ելլել՝
անուշապուրի պատրաստութիւնները տեսնելու
համար:

«Գալով անձնական կարծիքներուս, ի՞նչ կու-
զէք որ ըսկմ. կեանքը կեա՞նք, սիրելի՛ս, և

պէտք է զայն տանիլ գէշ աղէկ:

«Իմ մասիս, թող հնդկանաւը գէր ըլլայ,
հաւը աղէկ երփուած, անուշապուրը համով, և...

երջանիկ եմ:

«Պաշտօնակիցներովս չեմ հետաքրքրուիր և
միտքէս անգամ չեմ անցըներ թէ անզնք ի՞նչ կը

խորհին աշխարհիս ունախութեան վրայ:

«Համեցէք ընդունիլ, սիրելի՛ պարոն, յար-

գանքներուս հաւասարիքը:»

Դեկտեմբեր

Ահա՛ վերջապէս ամիս մը, որ իր վիճակէն
դժգոհ չէ:

Մէջք որ չկրցայ տեսնել զինքը անձամբ:

Ենթէրվիւներս աւարտած են, և երբ, մինչեւ
մաղերուս ծայրը յոդնած, կը վերադառնամ՝ Ժիւլ
Վէռնեան ճամբորդութենէս, 1905 ապրիլ վերջա-
ցած է արդէն և վազն է որ կը սկսի 1906ը:

Ու մեր գրան առջեւ հոռոմ խլէզներ կ'երդեն.
«Այս Վախիլիս երիկը և...»



ՈՒԿՐ ԵՍ, ՂԱԶԱՐՈՍ !

Սրճարանի մը մէջ :
Նոր հարսի մը աղուորութեանը վրայ կը
խօսին :

Ղազարոս — որ, ըստ իր բարի սովորութեան,
նորէն անցեալ տարուան ապուչն է, — խօսքի կը

խառնուի : — կը ճանչնա՛մ, կ'ըսէ, հետը կենակցած եմ:
Նոր հարսը՝ Ղազարոսին իր վրայ ըսածը իմա-
նալով, կ'երթայ անոր հետ կռուիլ :

Ղազարոս օրինակելի համբերատարութեամբ մը
իրեն դէմ եղած նախատինքները լսելէ ետք, կը
պատասխանէ .

— Եթէ այսչափ կը բարկանաք կոր, տիկին,
շատ աղէկ, ասկէ ետքը ձեզի հետ չեմ կենակցիր:
?

Իր մահուընէն քանի մս որ առաջ, Ղազարոս
տիտոր կ'երեւէր :

— Տէ՛ր, ըսին իրեն, Բնչ կը մամտաք :

— Ինքզինքիս վրայ կուլամ կոր, պատաս-
խանեց մեր ապուշը :

?

Մահը կեանքին վերջը դնելով՝ շատ լաւ
բարձ է Աստուած, որովհետեւ այս կերպով գոնէ
մարդ ժամանակ կ'ունենայ ասոր պատրաստուելու :

ՂԱԶԱՐՈՍ

Ղազարոս լոնտոնէ կը վերադառնայ,
— Ի՞նչպէս գտաք Լոնտոնի օղը, կը հարցնեն :
— Հիմանալի, տարուան ոթը ամիսը՝ ձմեռ և
չորս ամիսը՝ օղը գէ :

Բանաստեղծ մը, իր գրած մէկ երկար բանաստեղծութիւնը Ղաղարոսին կարդալէ ետք, կը հարցնէ թէ՝ ամէնչն աւելի ո՞ր կողմերուն հաւած էր :

— Ինձի չկարդացա՞ծ տեղերուգ, կը պատասխանէ Ղաղար :

?

Ղաղարոս՝ անկուտիութեան Ծայրագոյն Արեւելքին մէջ գտնուելով, կ'որոշէ նոյն իրիկունը դիմացը ելլող մարդը կողոպսել :

Սակայն, կէս-դիշերին, մութ փողոցէ մը անցած ատեն, մարդ մը իր վրայ կը յարձակի :

— Բա՛կդ կամ կեա՞նքդ, կը պօռայ :

— Ես ալ հիմա քենէ ատենք պիտի ուզէի, կը պատասխանէ Ղաղարոս :

?

Ինչպէս դիմէք, Ղաղարոս չի սիրեր ճամբորանիլ :

Այս պատճառաւ, անցեալ օր, ճամբորդութեան երթալէ առաջ, վրայէ վրայ երկոտասանեակ մը շապիկ ու վարտիք հաղաւ :

Հիմա, ամէն անդամ որ մաքոր շապիկ ու մաքոր վարտիք հագնիլ պէտք ըլլայ... աղտոտ շապիկ մը ու աղտոտ վարտիք մը կը հանէ :



ԱՐՈՒԵՇ ԽՕՍՔԵՐ

ԽԵԼԱՑԻ ՄԱՐԴՈՅ ՀԱՄԱՐ

Աղուորութիւնը յանձնարարագիր մըն է, դոր բնութիւնը կուտայ իր նախասիրածներուն :

* * *

Երեք աւեսակ բարեկամ կայ. —

Բարեկամներ, որոնք ձեզի կը սիրեն,

Բարեկամներ, որոնք անոտարբեր են ձեր մասին,

Ու բարեկամներ, որ ձեզի կ'ատեն :

* * *

Մարդ ամէն տարիքին մէջ իրաւունք ունի կարգուելու :

Ինչու որ...

Կիները, երիտասարդութեան ատեն, մեր տարիուններն են,

Հասուն տարիքին՝ մեր ընկերուհիները,

Իսկ ձերութեան՝ մեր տատաները :

* * *

Սիրոյ մէջ կինը կը նմանի քնարի մը, որ իր գաղանիքները կը հաղորդէ միայն անոնց, որոնք լաւ քնար զարնել գիտեն :

* * *

Հիմակուան բարեկամները... սեխի կը նմանին : Յիսուն հատին համըն նայելու է՝ մէկ հատ աղէկ գանելու համար :

* * *

Կինը աւելի զօրա որ է իր զզացումով, քան թէ էրիկ մարդը՝ իր ուժով :

* * *

Եթէ կայ պտուղ մը, որ հում կ'ուստուի, ասաւ գեղեցկութիւնն է :

ԹԷ ԻՆՉ ԿԸ ՊԱՏՄԵՆ

ԵՐԱԶՆԵՐԸ

Ո չնորհափայլ ափկիններ, և
Ո՞ նազելի օրփորդներ, —
Անա՛ նշանակութիւնը այն մէկ քանի երազ-
ներուն, զորս ընդհանրապէս կը տեսնէք ձեր տա-
քուկ անկողիններուն մէջ, — ապերախտ երազ-
ներ, որոնք մինչեւ ձեր անկողինները մօտենալու
որբազգծութիւնը գործելէ ետք, մէջ մըն ալ կը
յանդգնին տանջել ձեր աղուոր գլուխները:

Եթէ կ'ուզէք, հաւատացէք իմ սոյն երազա-
հանակոն կարողութեանս:

Ամէն պարագայի մէջ, — խօսքը մէջերնիս, —
ևս . . . չեմ հաւատար:

* * *

Երբ երազէք,
Ամուսնութիւն, կը նշանակի = Մահ:
Զինուորական = Բարի լուր:
Զի = Անակնկալ այցելութիւն:
Դրամ = Կորուսս:
Ոսկի = Ժորժ Տանտէնի բաղդակցութիւն:
Հաց = Երջանկութիւն:
Նախակ = Բարի գուշակութիւն:
Ցղի կին = Զանձրոյթ:
Բժիշկ = Հիւանդութիւն:
Համբոյր = Մօռ օրէն ստանալիք նամակ:
Կին մը սիրել = Կոխ ձեր մէկ սիրած կնոջ
հետ:

Շուն = Հաւատարմութիւն:
Յուղարկաւորութիւն = Անակնկալ ուրախու-
թիւն:
Ակռալ = Հիւանդութիւն:

Յարակի = Սիրային խղում:
Միս = Արկած:
Ասեղ = Սիրային ցաւ:
Կրակ = Տիրութիւն:
Ծաղիկ = Երանութիւն, չյուսացուած ուրա-
խութիւն:
Սանոր = Մեծ վասնգ:
Մազ = Վասնգ:
Վեհիս զուր = Զեղի զործ պիտի առաջարկեն:
Պղզուր զուր = Զանձրոյթ, լաց:
Օձ = Հակառակութիւն, խորամանկութիւն:
Պառակ կին = Սուտ, բամբասանք:
Մանի = Նոր յարաբերութիւն:
Թուշուն = Ճամբորդութիւն:
Մկրաս = Խարեբայութիւն:
Կոխ = Լաւ ճաշ մը պիտի լնէք (Բարի
ալսորժակ):

Դանակ = Բաժանում:
Թաւրոն = Սիրոյ մէջ ցաւ:
Ճամբորդութիւն = Բնակավայրի փոփոխու-
թիւն:
Կով = Հարսառութիւն:
Պանդոկ = Մօտակայ ճամբորդութիւն:
Ոստիկան = Մեծ ուրախութիւն:
Պարահանդէս = Համոյք:
Թղթախաղ = Վասնգ:



Ի՞նչ Կ'ԸՍԵՆ ՍՈՒՐԲԵՐԸ

ԿԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Ս. Պէսնարախոս կ'ըսէ . — « Կինը սաստանաւ յին գործիքն է :

Ս. Օզոստինոս կ'ըսէ . — « Կինը մեղքին բազմապատկիչն է :

Ս. Յովհան Ռոկերերան կ'ըսէ . — « Բրլոր վայրենի զազաններու մէջ , կնիկէն առելի վասնդաւոր գազան մը չկայ : »

Ս. Կիրպիհանոս կ'ըսէ . — « Կինը թունաւոր օձ մնն է :

Ս. Պօղոս կ'ըսէ . — « Բարի կին չկայ : »

Ուրիշ սուրբ մը կ'ըսէ . — « Կինը , ահա՛ բնութեան ամէնէն մեծ տաճանջանքը : »

Ուրիշ մը . — « Կնիան հետ ամէնէն խելացի մարդն խի ամէնէն խենդը կը դառնայ : »

Ուրիշ մը . — « Կին , օձ առանց պոյք : »

... Աս ո՞րչափ galanteries, աս ո՞րչափ compliments!

Սակայն , Տիկին , դուք անհոգ եղիք , Սուրբերը կրնան ուղածնին ըսել , դուցէ իրաւունք ալ ունին , բայց նորէն մարդիկ ձեր առջեւ պիտի խոսարհն , և ամէն պարագայի մէջ , ասո՞նք ալ

Սուրբերու այս անէծքները ձեզի քիչ մը չեն յիշեցներ ... աղուէսին դունջը :



ՎԵՐԷՆ-ՎԱՐԷՆ

Տիկին ու Սթաէլ հարցուց օր մը նաբողէնի թէ՝ ո՞վ էր աշխարհիս առաջին կինը :

— Սնիկա որ ամէնէն շատ զաւակ ունի , պատասխանեց մեծ աշխարհակալը :

X

Մի՛ շնար !

Կը պատուիրէ Տաննարանեալին չեմ միշեր քանի՛ երրորդ պատուէրը , և այս պատուէրին հակառակողները ատենօք սաստի՛կ կը պատժուէին :

Օրինակի համար , Եգիպտոսի մէջ , կինը խարող այրը մահուան պատիժին կ'արժանանար , իսկ էրիկը խարող կնկան ... քիթը կը կարէին :

Պրաղիլիոյ մէջ , այրը՝ մէկէն մինչեւ երեք տարի բանտարկութեան կը դատապարտուէր :

Հնդկաստանի մէջ , չնացող այրը՝ կրակէն կասկարմիր դարձած անկողնի մը վրայ կը դրուէր և կինը՝ կատաղի շուներուն կեր կ'ըլլար :

Ֆրանսայի մէջ , Մեծն Կարոլոսի օրով , մահուան պատիժը որոշուած էր այս յանցանքին դէմ , իսկ չանրապետութենէն առաջ , չնացող կինը կը դատապարտուէր՝ երկու տարի վանքի մը մէջ բանտարկուելու :

Բայց հիմա՞ ...

Հիմա , փի՛ֆ փի՛ֆ ամուսնալուծում մը և ... adieu !

X

Տաննեւութ տարեկանին , կին մը անմիջապէս խննդի պէս կը սիրահարուի :

Քսան տարեկանին՝ կը սիրէ :
Երեսունըլեցին՝ կ'ըղձայ :
Քառասունին՝ կը մտածէ :

X

Եթէ Սաստանան կարենար սիրել, պիտի դադուրէր չար ըլլալէ, ըստ Սրբուհի Թերեղա:

Բայց, ես կը ճանչնամ կիներ, որոնք կը սիրեն ու նորէն չար են:

X

Կինը աշխարհիս վրայ երկու երջանկոթիւն ունի:

Չարչարուիլ կամ չարչարել:

Չարչարուիլ՝ երբ կը սիրէ:

Չարչարել՝ երբ կը սիրուի:

X

Երեք բանի համար կին մը կը սիրենք.
Կամ իր գերադասուրեան համար, և այս ուրը
լուրջ է, բայց հաղուազիւս:
Կամ իր գեղեցիւրեան համար, — գոեհիկ ու
կարծատեւ սէր.

Եւ կամ վերջապէս իր սիրտին համար, —
ահւական, բայց միօրինակ սէր:

X

Ասսուած երկու պարգևու չնորհած է մարդոց,
Ոմանց՝ դրամ:

Ոմանց ալ՝ խելք:
Եւ կարծած է թէ ասոնք իրարու ահղը կըր-
նան բռնել:

Ահա՛ թէ ինչո՞ւ երկրիս երեսը անկուտիները
իւրացի կըլլան, իսկ շատ մը հարուստներ՝ անխելք:

X

Շատ մը աղգէ կիներ ճանչցայ:
Իտալուհին միայն այն ատեն կը հաւատայ իր
սիրահարէն սիրուած ըլլալուն, երբ անիկա իրեն
համար ոճիր մը գործէ:

Անդլուհին՝ երբ իր սիրահարը իրեն համար
խենդոթիւն մը ընէ:

Ֆրանսուհին՝ իր սիրահարէն, իրը իր սիրոյն
ապացոյց՝ արուշոթիւն մը կը սպասէ:

Իսկ հայուհին՝ միայն այն ատեն կը համոզուի
թէ իր սիրահարը վինք իրապէս կը սիրէ, երբ իրեն
հետ . . . Ս. Պատկով կը կարգուի:

X

Կը սիրենք, մնը չունեցած մէկ երջանկո-
թիւնը իննդրելու համար ուրիշէ մը:

X

Երկրի վրայ՝

Ամէնէն գեղեցիկն է՝ աշխարհ.

Ամէնէն զօրաւորը՝ պէտքը.

Ամէնէն ընդարձակը՝ միջոցը.

Ամէնէն խելացին՝ ժամանակը.

Ամէնէն սրբնթացը՝ միտքը.

Ամէնէն հասարակը՝ յոյսը:

X

Մարդ միմիայն երեք բան ունի. —

Հոգի, մարմին և ինչք:

Հոգին կ'երթայ:

Մարմինը կը հիւընդաց:

Եւ ինչքերը . . . ժամանդորդներուն կը մնան:

X

Կան բաներ, որ լաւագոյն է ընել քան ըսել.
Կան բաներ, որ լաւագոյն է ըսել քան ընել. Կան
բաներ, որ պէտք է ոչ ընել, ոչ ըսել. և կան
բաներ ալ որ պէտք է թէ՛ ընել և թէ՛ ըսել:

X

Շատ մը կիներու կեսնքը՝ երեք արարուլ
զաւեշտ մըն է:

Առաջին վարագոյրը՝ հեշտանք :
Երկրորդ վարագոյրը՝ ներկ ու արդուղարդ :
Երրորդ վարագոյրը՝ բարեպաշտութիւն :
Ու վարագոյրը կ'իջնէ :

X

Քսան տարեկանին՝ մարդ հաճոյքը կը սպաննէ ,
երեսունին՝ կը ճաշակէ , քառասունին՝ կը չափա-
ւորէ , յիսունին՝ կը վնասնէ , վաթսունին՝ անոր
ևտեւէն կը ցաւի :

X

Կնոջ մը առաջին սիրահարը՝ երբէք . . . վեր-
ջնը չէ :

X

Սէրը միշտ տուօի մը կը նմանի :
Զայն երգելու համար երկու հոգի պէտք է :

X

Սիրոյ այբուբենը միամիտ աղջիկներու հեզել
տալը ա'յնչափ մեծ հաճոյք մը չէ :

Յաձափ , նախընտրելի են ա'յն կիները , որոնք
կրնան արագօրէն կարդալ : Այս կերպով , աւելի
շուտ կը հասնուի գլուխին վերջին . և , ամէն բանի
մէջ , մանաւանդ սիրոյ մէջ , — ամէնէն կարեւորը ,
վերջն է :

X

Սէրը կանխիկ դրամ է . աղքատ մարդ մը
երբ ափին մէջ սէր տնի , սեղանաւորէ մը աւելի
հարուստ է :

X

Գեղանի կին մը հաճելի է՝ աչքերուն :
Բարի կին մը հաճելի է՝ սիրափին :
Մէկը գոհար է , իսկ միւսը՝ գանձ :

ՀԻ ՀԻ ՀԻ . . .

Սանդէրէնի վէպերովը մնած վիպային օրիորդ
մը , օրին մէկը ծով կ'իջնայ և խեղդուելուն մաղ
մնացած , կ'ազատուի :

Նուաղած վիճակի մէջ զայն տուն կը բերեն :

Սթափիելուն , օրիորդը կը յայտարարէ թէ

Վուզէ կարգուիլ իր աղատարարին հետ :

— Անկարելի է , աղջիկս , կ'ըսէ հայրիկը :

— Ուրեմն կարգուած է , կը հարցնէ օրիորդը :

— Զէ՛ , աղջիկս :

— Միթէ իմ անձնուելը աղատարարս դիմացի

տունին տղան չէ :

— Զէ՛ , աղջիկս , թէռ-նէօվի շուն մըն է :

+

— Եթէ ես քենէ առաջ մեռնելու ըլլամ ,
դագաղիս ետեւէն պիտի գա՞ս , կը հարցնէր տիկին
մը՝ երիտասարդի մը հետ կատակելով :

— Ո՞հ , անշուշտ , տիկին , հաճոյքով :

+

Գրագէտներու մնածամութիւնը նշանաւոր է :

Օր մը մեր գրողներէն մէկը (անունը չեմ ըսեր ,

որպէս զի չգժամինք) իր բարեկամներէն մէկուն հետ

գարեջրատուն մը կ'երթայ և բաւական լոլիկնալէ

ետք , դուրս կ'ելլէ՝ գւեսարկը հակառակ կողմէն

գրած :

Բնական է որ ամէն մարդ մեր պարոնին կը
նայի , գինովութեան հետեւանքներուն վրայ փի-
ւիսովայելով :

— Կը տեսնես , կ'ըսէ մեր գրագէտը , բոլոր
անցորդները ինծի կը նային կոր . ճանչոր դէմք
ըլլալն աղ ուրիշ բան է :

+

Պ. Գաղղիսիս Պոնժուռ — թերինածու ֆրանսական Ակադեմիային — օր մը քառասուն անմահաներէն մէկուն կ'այցելէ :

Սպասուհին կը բանայ դուռը :

— Ներեցէք, պարոն, ձեր անունը, կը հարցնէ :

Պ. Գաղղիսիր Պոնժուռ՝ իր ամէնէն շնորհալի ժպիտովը կը պատասխանէ .

— Պոնժուռ :

Այցելուին կենցաղագիտութենէն հմայուած՝ սպասուհին կը հարցնէ կրկին .

— Պոնժուռ, պարոն, կը հաճի՞ք ձեր անունը շնորհել :

— Հափ, օրիորդ, Պոնժուռ :

— Է՛, շատ աղէկ, պոնժուռ, պարոն, բայց ձեր անունը :

— Այսունս Պոնժուռ է, օրի՞որդ :

Միայն այն ատեն սպասուհին հասկցաւ որ, փոխանակ «Պոնժուռ, պարոն» ըսելու, պէտք է ըսէ . — «Պարոն Պոնժուռ» :

+

Յակորիկ ու իր պզտիկ քուրիկը անցեալ օր կը դիտէին նկար մը, որ կը ներկայացնէր Ադամ ու Եւան՝ ստեղծագործութեան առաջին օրերուն զգեստով, զոր ապահովաբար ո՛չ Շմիթը կարած էր, ո՛չ Գալիվուռին և ո՛չ Միուը :

— Յակորիկ, էրիկը ո՞ն է, հարցուց առջիկը իր եզրօր :

— Իստո՞ր կ'ուզես որ հասկնամ, երկուքն ալ հագուած չեն :

+

— Ո՞հ, Մասի՛, կ'ըսէր սիրահար մը սիրուհին, մէջ մըն ալ թէոր ասանկ խօսք մը ընեւ ինձի, ոտքերուդ տակ ինքզինքս կը սպասնեմ :

+

— Հասկա երկրո՞րդ անգամուն, հարցուց աղ-
ջկը :

Վաճառական մը իր սնանկութեան պատճառը
կը բացատրէ :

— Եղբայր, կ'ըսէ, միայն բամպակի գործին,
1000 ոսկի կերպայ . . . :

— Ոկրամուլ, կ'ըսողմիջէ բարեկամը :

+

Ամուսնացած մարդ մը քսան տարիէ ի վեր ամէն իրիկուն Տիկին Զ***ին տունը կ'երթար՝ ժա-
մանակ անցընելու համար . օր մը երբ այս մարդուն
կինը մնուաւ, ամէն մարդ կարծեց թէ ալ Տիկին
Զ***ին հետ պիտի կարգուէր :

— Եթէ Տիկին Զ***ին հետ կարգուիմ, այն
ատեն իրիկունները որո՞ւն տունը երթամ :

+

Խարուած էրիկ մը իր գժբաղդութեան վրայ
Կողմար :

Բարեկամներէն մէկը զայն միմիթարելու հա-
մար սապէս ըստու .

— Միրելի՛ս, եղջիւրները ակւաներու կը նմա-
նին . Եւած ատեննին կը ցաւին, սակայն երբ ան-
գամ մը ելլին, ալ ցաւ չեն պատճառեր :

ԻՆՏՈՒ ԸՆԵԼՈՒ Է

ԾՈՎՈՒ ԼՈԳԱՆՔԸ

(ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ)

Երբ կ'ըսենք՝ մեր ընթերցողներուն, ասիկա խօսելու պարզ ձեւ մըն է։
ինչու որ մեր այս գրուածքը աւելի կը վերաբերի միայն մեր այն ընթերցողներուն փոքրամասնութեան, որ միջին դարէ ի վեր պահած է տակաւին լոգանք ընկելու սովորութիւնը։
Ելեկտրականութեան այս դարուն, ճշմարտապէս modernisé եղած մարդը երկար ատենէ ի վեր կրցած է արդէն թօթափել, սովերը լուալու, լոգանք ընկելու կամ շապիկ փոխելու նախապատմական սովորոյթները, որովհետեւ . . . time is money !
Այս ժամերը, զորս մեր ծովլ նախնիքները կը զոհեն եղեր լո՛կ իրենց արդուզարդերուն, հիմա կը զոհուին դրամ չանելու, և ասոր համար, փառք Աստուծոյ, վնաս մը չենք ըրած, ընդհակառակը։
Ու ես այս պատուէրներս կը գրեմ լո՛կ անոնց համար, որոնք դեռ պահած են ատեն ատեն ծովութաղնիք երթալու խոյը։

I

Կարելի եղածին չափ պէտք է զգուշանալ հաղուած սքուած ծովու բաղնիք մանելէ։
Առողջապահութիւնը և կենցաղագիտութիւնը կը պահանջեն որ ծովու բաղնիք մանելէ առաջ, լաթերը հանէ։

II

Չեր զգեստները հանելէ ետքը, երբ պատուածիք գլուխ ի վար ծով նետուիլ, սովերնիդ ձեռուշնիդ չուանով մի՛ կապէք։

III

Երբ վերէն վար նետուելով, ջուրին մինչեւ յատակը համնիք, աւելորդ է ծովուն խորէն ձեր բարեկամները կանչել, որպէս զի ձեր լուղորդի վարպետութեանը հիանան։

Նախ՝ որովհետեւ ասիկա անյարմար է, և յետոյ, կրնաք ծովուն ջուրը պակաեցնել՝ զայն կոչտ ու կուռ խմելով։

IV

Ծովու բաղնիքէն ելած ատեննիդ մի՛ մոռնաք մայօնիդ հանել և ձեր զգեստները հագնիլ։

V

Զգեստնիդ հագած ատեն, սխալմամբ մի՛ հագնիք ուրիշն զգեստը, մինչեւ որ բացարձակապէս վատահ չըլլաք թէ՝ ձեր առած զգեստները՝ ձերիններէն աւելի նոր ու ձեւաւոր են։

VI

Դուրս ելած ատեննիդ մի՛ մոռնաք վճարել բաղնեպահնին դրամը։

Բայց, երբ անիկա մոռնայ, դուք մի՛ ըլլաք յիշեցնող։

VII

Վերջապէս, երբ ծովու բաղնիքէն ելլէք, շիտահ'կ գացէք տաք բաղնիք մը . . . լուացուելու համար։



ՀԱՅՈՒՅԻՆ

(ՀԵՔԵԾԱՅԻ)

Ու մամիկոս կը պատմէր.

* * *

« Օր մը, կապոյտ աստուածուհին երկիր իջաւ,
 « իր բոլոր աղջիկներուն բաժնելու համար այն այ-
 « լազան շնորհները, զորս կը բերէր իրեն հետ:
 « Ու կապոյտ աստուածուհին հնչեցուց փողը:
 « Ամէն ազգէ ու ամէն ցեղէ կիներ եկան
 մէջտեղք:
 « Ու կապոյտ աստուածուհին անոնց ըստաւ.
 « — Կ'ուղեմ որ ձենէ ո՛չ մէկը արտնջայ՝ իրեն
 « տալիք նուէրիս համար. ձենէ ամէն մէկուն մի-
 « եւնոյն բանը տալ չեմ կրնար. չէ որ արդէն այս
 « տեսակ միօրինակութիւն մը պիտի պակսեցնէր
 « նուէրներուս արժէքը:
 « Ուրեմն, Սպանուհին տուաւ սեւ սեւ մա-
 « զեր:
 « Իտալուհին՝ վառվառ աչքեր ու սիրա մը
 « սիրով զինովցած:
 « Անգլուհին՝ կաթով վարդով շաղախուած
 « գոյն մը:
 « Աւստրիացուհին՝ մարդարատաշար ակուաներ:
 « Ռուսուհին՝ իշխանուհի քալուածք մը:
 « Գերմանուհին՝ վերթէրեան զգայնիկու-
 « թիւն մը:
 « Նարովիդէնին՝ շրթունքներուն՝ զուարթու-
 « թիւն տուաւ, իուլանտուհին՝ սրամատութիւն,
 « Հելլէնուհին՝ աղուոր հասակ, չըէտուհին՝ երազ-
 « իսորժակ մը...:
 « Ու երբ ա՛լ չմնաց բան մը տալու, աստուա-

« — Հապա ե՞ս, հարցուց Բարիղուհին:
 « — Ի՞նչ, քեզ մոռցա՞յ:
 « Այն ատեն, բարի կապոյտ աստուածուհին
 « ըստաւ.

« — Քանի որ ա՛լ պարալուեցաւ նուէրներուս
 « պայուսակը, թո՛ղ իմ բոլոր աղջիկներս իրենց
 « առած նուէրներէս մէյմէկ քիչ տան քեզի:

« Ու բարի կապոյտ աստուածուհին հրամանը
 « կատարուեցաւ:

« Ու երբ, բարի կապոյտ աստուածուհին կը
 « պատրաստուէր կապոյտ երկինքին ետին կորսուիլ,
 « Հայուհին, որ առջի իրիկունը տախտակ սրբելուն
 « համար ուշ արթնցած էր, փէշերը սոթթած հա-
 ստ հեւ ի հեւ.

« — Հապա ե՞ս, հապա ե՞ս . . . :

« Բայց, բարի կապոյտ աստուածուհին, որ ա՛լ
 « տալիք նուէր մը չունէր, կապոյտներու ետին
 կորսուեցաւ:»

ՊԶՏԻԿ ԿԸԸԸԿՆԵՐ

Երիկ կնկան կոխւ մը:
 Տէր և տիկինը իրարու գլխուն կ'իջեցնեն
 աթոռ, մկրատ, խողանակ և ալլն:

Ու տիկինը կ'ըսէ լալով. — Մէյ մըն ալ խոս-
 տացած էիր զիս երջանիկ ընել:

Էրիկը՝ լալով. — Թո՛ւն ալ զիս երջանիկ սիրով
 ընէլր:

X

Փեսացու մը՝ հարսնիքին առատուն կը մտմտար:
 — Ի՞նչ ունիս, ինչո՞ւ տխուր ես, հարցուցին:
 — Կը մտածեմ կոր . . .
 — Վա՛զ անցիր . . . եթէ մտածես, չես կար-
 գուիր:

X

Սիրահար մը և սիրոհի մը՝ ու flagrant délit
կը բռնուին :

Էրփկը՝ դրան ետեւէն կը պօռայ ամբողջ ձայ-
նովը .

— Բացէ՛ք դռուը, չէ նէ ձեզի կը սպահնեմ:

— Չեմ բանար, կը պատասխանէ սիրահարը
ներսէն, բայց եթէ դռուը կոտրէք, տունը կրակի
կուտամ:

— Ա՛հ անամօթը... ուրեմն կինո ըստ ձեզի
թէ տունս չեմ ապահովագրած :

X

Հիմնեան կոիւ :

— Թշուառակա՞ն... զիս կը խարես, հէ՛, և
բարեկամիդ կնկա՞նը հետ կը խարես :

— Ասոր համար մի՛ բարկանար, հողիս...
հարկաւ քեզ՝ չճանչցած կիներուս հետ չպիտի
խարէի :

X

Դերասանի պատմոթիւն :

Մեր հին դերասաններէն՝ Տիգրան Սանձագ-
ձեան օր մը կ'ըսէ իր պղտիկ զալին .

— Յակորի՛կ, ես քիչ մը վերի սենեակը կ'եւ-
լեմ կոր, պղտիկ աղբարիկիդ նայէ՛:

Կէս ժամ ետքը, Տիգրան Սանձագձեան վերի
սենեակէն վար իջնելով կը տեսնէ իր պղտիկ Յա-
կորիկը, որ աղբարիկին երեսը կը նայէր. ուշադրու-
թեամբ :

— Ի՞նչ կընես կոր հոդ, կը հարցնէ զաւկին :
— Զըմի՞ր որ եղբօրս նայիմ, ահա՛ ես ալ անոր
երեսը կը նայիմ կոր :

→→→→

ԳԻՏՈՒԹԵԱՆ ՅԱՌԱԶԴԻՄՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(ԳԻՏԱԿԱՆ ՅՈԴՈՒԱԾ)



Իտութեան յառաջդիմութիւնները . . .:
Ուժ, անտանելի է ա՛լ, եղբա՛յր :
Սուսուա՛ծ վկայ, սա՛ գիտունները բան գործ
չունին :

Երկաթուղիէն, ձայնագիրէն, հեռագիրներէն ու
եւեկտրական շոգեկառքէն ետք, հիմակ ալ հնարե-
ցին լուսանկարչական նոր գործիք մը, որով կա-
րելի է այսուհետեւ տեսանելի կերպով լուսանկա-
րել . . . անտեսաննելին պատկերը :

Հանգիստ կեանք ապրիլ, ա՛լ անկարելի գար-
ձաւ մեղի, և եթէ այսպէս երթայ, նոր ու ան-
ծանօթ աշխարհ մը չուելու է, աղատելու համար
սա՛ գիտուններու ձեռքին :

Ի զուր կը մտմտամ թէ՛ արդեօք բոլոր այս
գիտերը կ'ըլլան՝ մարդկութեան երջաններութիւնը
ապահովելու համար. և սակայն, մարդկի, նուազ
երջանիկ չէին կարծեմ այն երանելի գարուն, ուր,
Տիար Աղամ, մեր ամէնուս հայրիկը, իրը ամբողջ
կահկարասի, ունէր միմիայն . . . թղենիի տերեւ մը :

Բայց, առանց ա՛յնչափ հեռունները երթալու և
առանց ջրհեղեղը կանխելու, չէ՞ք կարծեր որ
մարդիկ առելի երջանիկ էին ա՛յն օրերուն, երբ
տակաւին երկաթուղիի չիծերը չէին եկած ծած-
կել երկրիս չորս կողմը, տարին մէկէ առելի ան-
դամներ մարդկային արիւնով օծելով իրենց եր-
կաթները :

Անկեղծօրէն խօսելով, չէ՞ք կարծեր թէ եր-
կաթուղիի գիւտը բաւական խաթարած է մեր եր-
ջաններութիւնը :

Մէկդի ընելով բոլոր շոգեկառքի արկածները՝
որոր մեր նախահայրերը կեանքերնուն մէջ ո՛չ առ-
սած էին, ո՛չ երազած, նորէն անհամար են շոգե-
կառքի դիւտին պատճառած անպատեհութիւնները։

Զոր օրինակ, կարելի՞ է երբէք հանդիսա շանչ
առնել, երր, մեր միտքերուն առջեւ ունինք
միշտ ցցուած յաւիտենական մղձաւանջը այն դա-
ւառացի հեռաւոր ու մասաւոր աղքականներուն,
որմնք ամէն վայրկեան կրնան շոգեկառքով մեզի
պատռել իրենց ոչ հաճելի այցելութեամբ, յան-
կարծ մեր երեմները տեսնելու փախարէն մղուած,
մինչդեռ շատ աւելի աղէկ կը ընէին իրենց գիւղերը
նստելով, առանց մէկուն գլուխը արդուկելու։

Շոգեկառքին չնորհիւ, հիմա ա՛լ կարելի չէ
քանի մը ոսկի պարտք ձգելէ ետք գաւառի մը
մէջ, Պոլիս վերադառնալ, որովհետեւ պահանջա-
տէրը մէկ կը սպասէ, երկո՛ւ կը համերէ, և եր-
րորդ օրը, շոգեկառք մը նստելուն պէս, տանդ
դուռին առջեւ կը անկուի։

Կը տեսնէ՞ք գիւտութեան յառաջդիմութեան
փորձանքները։

* * *

Ուրիշ անպատեհութիւնն մըն ալ, նա՛:
Ենթագրենք թէ գաւառացի հարուստ ընտա-
սիքի մը դաւակ էք և Պոլիս կուգաք՝ գործով։
Սակայն, փոխանակ գործով զբաղելու, կը
նախընտրէք զբաղվլ . . . Բերայի կնիվներով։

Ու օրին մէկը, անկուտի կը մնաք։
Ի՞նչ լնել հիմա։ Օ՛ն, անմիջապէս հեռագիր
հայրիկին . . .

«Հիւանդ եմ, քսան ոսկի զրկեցէք»։
Քսան ոսկին վայրկենական կը համար, և դուք
ձեր հիւանդութիւնը կը դարձմանէք . . . սիրտեր-
նուդ սիրածին հետ գարեջուր խմելով։

Ինչպէ՛ գարեջուր և կին . . . Սակայն, կեցէ՞ք
վայրկեան մը։

Ձեր սիրելի ծնողքը՝ ձեր համառօտ հեռագրէն
սարսափահար՝ իմանալով իրենց սիրասուն զաւկին
հիւանդութիւնը, առանց վայրկեան մը կորսնցնե-
լու, շոգեկառք կը նետափին, և կը համնին ձիշո-
այն հոգեբանական վայրկեանին, երբ զբազած էք
ձեր Օֆելիային թօնե ճ'innocence հանելու, մինչ
անիկա իր ամէնէն intime ճերմակեղէնները կը
ցուցնէ ձեզի։

* * *

Ա՛ն, սա՛ շոգեկառքերը։

Հասլա շոգենաւե՞րը, Սասուա՛ծ իմ։

Կարելի չէ օգափոխութեան համար ամառը
գիւղ մը երթալ և սինչ գլուխով նստիլ։

Ամէն շոգենաւի գալուն, շարունակ ահուդողի
մէջ էք թէ՝ արդեօք ձեր սիրելի բարեկամներէն
մէկ քանին եկա՞ծ են՝ ձեր որպիսութիւնը հար-
ցընելու և ձեզի անհանգիստընելու բարի արամա-
գրութեամբ։

* * *

Հասլա հեռագի՞րը։

Սա՛ անհամ ու ասյդրսը հեռագիրը որ բոլո՞ր
գէշ լուրերը կը բերէ մեզի։

Արդէն ըստած է թէ հեռագիրը աղէկ լուր
չի բերեր, քանի որ գէշ լուրերն են որ շուտ կի-
մացուին։

Հեռագիրն է որ, բանը գործը ձգած, կը
փութաց մեզի իմացնել անանկ բաներ, զորս չէինք
հարցուցած իրեն և զորս յաւէտ անդիտանալ պիտի
ուղէինք գուցէ։

Հեռագիրն է որ զիշերանց կ'իմացնէ մեզի մեր
սիրելիներուն մահը, սիրուհիդ փախուսոր, պան-
քեռիդ անանկութիւնը և հաւկիթի հրապարակին
բարձրացումը։

կչեր պէտք են՝ թուելու համար բոլոր գէշ
լուրերը զրոս կիմացնէ մեզի հեռագիրը, որուն
սեւ թերերը, երաժշտութեան որտէներու պէս,
կ'երկարին օդին մէջ, խանգարելով դաշտերու
գեղջկական բանաստեղծութիւնը:

Ու եթէ, հրաշքով, հեռագիրը՝ բարի լուր մը
հաղորդէ մեզի, այդ բարի լուրն ալ՝ հարիւրին
վաթսուն՝ համեմուած կ'ըլլայ՝ հեռագրին խմբա-
գրութեան մէջ սպրդած ցաւալի սուզուկ մը:

Զոր օրինակ, ձեր եղացը՝ Մարսիլիա ելեւ-
լուն պէս կը հեռագրէ իր ընտանիքին. —

«Arrivé bon port».

Ու հեռագրատան պաշտօնեան սխալմամբ կը
հեռագրէ.

«Arrivé bien mort!»

Որով, ամբո՞ջ գերդաստան մը կը թագուի՝
սուզի, արցունքներու և յուսահատութեան մէջ:

* * *

Ու կ'երեւի թէ հեռագիրը չէր բաւեր, մէջ
մըն ալ... հեռածայնը հնարեցին:

Եւ իրը թէ հեռածայնն ալ չի բաւեր, նայիս,
ձայնագիրը ելաւ մէջտեղ, — այն հրաշալի գոր-
ծիքը, որ, ի մեծ որախութիւն ձեր տանջուած
վեսայի ականջներուն, յախտենապէս անջինց կը
պահէ՝ ճաթած ձայնը ձեր համգուցեալ սիրելի...
դոքանչին. ձայնագիրը, զոր նախանձու ամու-
սիններ կը սահեցնեն՝ իրենց Տէղոէմոնային բար-
ձերուն տակ, որով արձանագրող լրաստուն կը
դառնայ ան... չնացող տիկիններու:

Ո՞հ, գիտութիւն, ո՞հ...

* * *

Բայց, կամաց կամաց նորէն հանգիստանիս կը
գտնէինք, և ստիպուած՝ կը պարտաւորուէինք ինք-
զինքնիս վարժեցնել երկաթուզին, հեռագիրին ու



ՄԻ՛ ԿԱՐԴԱՔ

(ԿԱՐԴ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ)



Դիտէն վայրը Յէրաներական Տրպարանին,
Գործի մարդիկ հոն դիմելու չը վարանին:

* * *

Տիարէ Վահրամ եւ Հրաշեալ, զոյգ աղբարիկ,
— Արոնց սրբի ազնուուրեան ուուս կը փարիք, —
Տպագրական գործերու մէջ փորձ ու ներհուն,
Եւ ընդունած զովեսները խիս շատերուն,
Ունին խանուք մը ընդարձակ Սուլրան Համամ,
Թուղրի յատուկ ամեն ապրանք՝ ընտիր, քամամ
Պիտի գտնէն դուք ամեննիդ, մելան, տետրակ,
Մատիս, զրիչ ու պահարան, փոքրիկ, մեծկակ,
Վանառատանց բոլոր պիտոյիք վերջապէս,
Գիներն աման, տեսակներն ալ նոխ ու պէս պէս:

Վերի յարկը տպագրուին ամեն մատեան
Որոնց գինով մրցակցող մը չելլար յատեան:
Առնուլօ զարդ, մասմակուր տիպ, գիրերը նոր,
Շինուած գործեն կ'արտափայլին զել ու շնորհ:
Դասագիրեր ու տուարներ՝ կազմատունին
Մէջ կազմըւին, որք բացառիկ հըմայք մ'ունին
Խենց ձեւով ըրթեղ տոկուն. ալ այնպէս որ
Հրապարակին վրայ պահանք մըն է այօր
Այդ Տրպարանին՝ ուրսեղ դիմող մեր պատուաժան
Յանախորդներ գործ կը տեսնան աժան աժան:

Այս տոլերուն անկեղծուրեան երե չ'աւտափ,
Համոզուելու համար ուուսով այց մը կուտափ:

Թ.

հեռածացնին, նոյն խոկ աչք կը գոցէինք լուսանկարչոթեսն, այս բարի, միամբու ու սիրուն լուսանկարչոթեսն, որ պղտիկներուն զբօսանքն է և մեծերուն ժամանցը:

Իրա՛ւ, այս գիւտն ալ ունէր իր անպատեհութիւնները, բայց ի՞նչ ապուր կը խառնես, սիրելիս. կամայ ու ակամայ այս բանին ալ հարկ էրվարժուիլ:

Միայն, անո՞նք որ, իրենց դէմքին տգեղութիւնը՝ հայելիին մէջ ցոլացուած տեսնելով բաւականացած՝ աւելորդ կը համարին անդամ մըն ալ զայն թուղթին վրայ անջնջելիօրէն դրոշմուած տեսնել, կրնան գոհանալ լուսանկարչի խանութին առջեւէն չանցնելով, և փողոցին մէջ, անգիտակցաբար լուսանկարուելու վատանդէն ալ զերծ մնալու համար, ճամբան քալած ատեննին, միշտ հովանոցը երեմնին կրնան բռնել:

Սակայն, աւա՛զ, անդամ մըն ալ յուսախարեղանք. ա՛ս ալ պատրանք մըն է եղեր:

Մարդուն մէկը ելաւ... անտեսանելիին լուսանկարչութիւնը սահղծեց, իբր թէ իրմէ ասանկ բան ուղող ըլլար:

Թէ ինսո՛ր կ'ըլլայ այս... իրաւ որ, չեմ գիտեր և չեմ ալ հետաքրքրուիր գիտնալու: Սակայն, աս աս է:

Հիմա, կրնաք՝ տունիս առջեւէն անցած ատեննիւլ՝ ըսել.

— Ծօ՛, նայի՞նք սա միջոցին մեր թօլան ի՞նչ կընէ կոր:

Ու գործիքնիդ դէպի իմ տունիս կողմը կը դարձնէք, և նոյն բողեին ձեր վիլային վրայ կը պատկերանան իմ անձնական կեանքիս ամէնէն մտերիմ գաղտնիքները:

* * *

Այս հաշիւով, տեսէ՛ք ասկէ ետքը ինչեր պղտի ըլլան:

Երբ դերձակո՞ւ իր պահանջքը . . . չդահճելու միտքով, զարնէ դուռս և ես չբանամ, անմիջապէս լուսանկարչական գործիքը պիտի լարէ, և պատերութանձրութեանը ետեւէն, լուսանկարս քաշելով, ցաւի սիրտ պիտի տեսնէ թէ . . . քիթին կը խնդամ կոր:

Սիրուհո՞ւ այս գործիքին միջոցաւ, պիտի կրնայ գուշակել անհաւասարմութիւններս, և երեսիս պիտի զարնէ . . . գիշերային ծուլութիւններուս պատճառը:

Տիկինս — եթէ կարդուած եմ — զգեստներուս տակէն պիտի բառ առ բառ կարդայ գրագանիս մէջ գանուած սիրային նամակները և պիտի կրնայ ճշգրտօրէն համրել քսակիս դրամները:

Երբ, պաշտօն մը խնդրելու համար, տեր մը դիմինք, փոխանակ մեր կարողութիւնը հասկնաւու նպատակով՝ մեզի քննութենէ անցընելու, ասկէ ետքը, մեր առջեւ պիտի լարեն լուսանկարչական գործիքը մը, և մեր գլխուն պարունակութիւնը պիտի լուսանկարեն: Ո՞սպասափելիք:

Երբ, աղջիկտեսի համար տուն մը երթանք, մեր պաշտելին ձեռքը մեզի խոստանալէ առաջ, մեր աներ պատահ ու զորանչ տուտուն այդ նորագիւտ գործիքով պիտի լուսանկարեն մեզի, հասկնակութիւնը թէ Պրիէօի Les Avariés-ին մէջ դեր ունինք:

Սոսկալի է այս, պարոններ, և կրանքը, այս տեսակ պայմաններու տակ, երթալով անտանելի կը դառնայ:

Ու մէջ մըն ալ կ'ելլենք հոյակապ արձաններ կանգնել անսնց, որոնք հնարեցին երկաթուղին, հեռածայնը, հեռագիրը, շոգենաւը, շոգեկառքը, և մանաւանդ անտեսանելիին լուսանկարչութիւնը . . . հանելու համար:

Ո՞ զիտութեան մարդեր, գիտութեան մարդեր, մեղքէք մեզ:

ԳՐԱԳԷՏ ԸԼԼԱԼՈՒ ՃԱՄԲԱՆ

Սիրելի՛ս,

Եթէ կը փափաքիս յաջողիլ գրականութեան մէջ — ըլլա՞յ Հայ, Յոյն կամ Գնչուական — աղէկ միտ դիր հետեւեալ խրատներուն, որոնք արդիւնք են երկարամեայ փորձառութեանս:

* * *

Վերջացած է ա՛լ պոհէմութեան վշանը, և չանրի Սիրժէ, — տէր և անօրէնը Պոհէմական կեանքին, — ապուշ մը կը համարուի ա՛լ, և անօր հետեւորդները դատապարտուած են յափուեանս յափուենից կօչիկէ վեր չելլելու:

Պոհէմութիւն . . . : Բոլ աը Քոքի ատենը վսեմ քան մըն էր. բայց հիմա՞ — Oh! ma barbe!

Արդ, եթէ կ'ուզես յաջողիլ, —
Մտիկ ըրէ:

* * *

Նախ, աղէկ հագուէ՞:

Գաիր դերձակ մը, որ քեզի ձեւաւոր զգեստներ պատրաստէ, հոգ չէ թէ . . . ապառիկ:

Որովհետեւ մարդիկ՝ միշտ «Երեւոյթները խարուսիկ են» կը յանկերգեն, և միշտ . . . երեւոյթներէն կը խարուին:

Ու ասոր համար, կրցածիդ չափ կախե՛ աշխարհիս բոլոր դերձակները. — աղէկութիւնը ըրած կ'ըլլաս:

Մասնաւոր իննամք տար փողկապներուդ:

Փողկապը. tout est là! Գոմէտի-Ֆրանսէզի համբաւաւոր դերասանը՝ Պ. Ալ Պարժի՛ իր փողկապներուն չնորհիւ . . . մարդ եղաւ:

Սուանց ձեռնոցի մի՛ պարտիր երբէք և թո՛ղ մազերդ աւելի խնամուած ըլլան, քան ոճդ:

ինչու որ, անցած է ա՛լ մօսան այն գրադէտաներուն, որոնք Ռուպէնսոննեանն եղունգներ ունեին և որոնց մաղերը կը յիշեցնէին... Ա. Փրկէեան Հիւանդանոցին մէկ յարկաբաժինը:

Առենօք, գրագէաը ճգնաւորի կեանք մը կը վարէր և գերեզմաններու մէջ կը թափառէր:

Բայց հիմա... nous avons changé tout cela! Ինչպէս կ'ըսէ Մոլիէռ:

Կրցածիդ չափ աշխարհիկ սալօնները մտիր Ելլր, հոգ չէ թէ հրաւիրուած չըլլաս. բայց, եթէ չես կրնար ասիկա ընել, գոնէ անա՞նկ մը ձեւաց' որ ամէն մարդէ թէ ո՛չ մէկ երեկոյթէ պակաս ես:

Ասիկա ընելու համար, ամէն իրիկուն, սաջի իրիկունէ պաշտօնական ըլտէնկոթ մը հագի՛ր և շարունակ կարգա՛ Սրանկուլը ու Լէվանդը:

Այս կերպով, ամենայն վստահութեամբ կը ընաս խօսիլ այն երեկոյթներուն վրայ, ուր ստուերդ անդամ ներկայ չէր, և յիշել ըլլոր ներկայ Աղող անձերը, որոնց հետ, աւելորդ է ըսիլ, առաջին միանալու:

Երբ խոյոր տունէ մը դայ՝ իր աֆիշ-ները փակցնել, բանդալոնդ ծախէ՛, բայց ներկայացում մը մի՛ փախցներ, որովհետեւ թէեւ եկող արուեստագէաը միշտ կը կարծէ թէ՛ ամէն մարդ թատրոն կուգայ՝ զինքը տեսնելու համար, սակայն, իրականին մէջ, ամէն մարդ թատրոն կ'երթայ՝ միմիայն ինքինքը ցուցնելու և իրար տեսնելու համար:

Ու մա՞սաւանդ — սխալ կամ ոչ — մի՛ հաւանիր ո՛չ մէկ բանի, որովհետեւ հանձարեղ մարդ մըն ես դուն, և միայն ապուչներն են որ կը հիաւանան:

Երբ դանուիս սպօն մը, ուր քեզի մտիկ կ'ըս նեն, ունակ ձեւով մը փոռէ՛ թիկնաթոռիդ մէջ,

և կօշիկներուդ ծայրը նայելով՝ ըսէ՛ աշխարհիս ամէնէն բնական բանը ըսկելու պէս.

— Աղեքս. Փանոսեան երէկ իրիկուն կ'ըսէր ինձի թէ...

Աւելի մտերմական ձեւ մը տալու և աւելի էֆետ ընելու համար, լաւադոյն է մականունը չնջել և միայն «Աղեքսանդր» ը ըսկել: Ո՞ր Աղեքսանդրը, պիտի հարցնան անշուշտ: Այս ատեն աւելցնելու է՝ անտարբեր շեշտով մը՝ «Ճանալմ, սա մեր Փանոսեանը», իբր թէ մեր խոհարարին մասին խօսէիք:

Քիչ մը աւելի ոսկի փոչի նեսելու համար ցանութիւն, կրնաս շարունակել նոյն ոճով.

— Մրմրեանին ըսի որ...

— Երէկ եղիան ինձի եկաւ...

Հոգ չէ թէ ո՛չ Փանոսեանը ճանչաս, ո՛չ Մըրմրեանը և ո՛չ Եղիան. ասիկա զուրկ է կարեւորութենէ. բաւական է որ ներկաները, որոնք քենէ ո՛չ աւելի ո՛չ նուազ կը ճանչան այդ մարդիկը, գեղեցիկ համարում մը կազմեն քու մասիդ:

Միայն, ուշադրութիւն ըրէ՛ որ՝ վերոյիշեալ խօսքերը ըսած ատենդ, սալօնին մէջ չգանուին՝ Եղիան, Փանոսեանը կամ Մրմրեանը. այն ատեն, կացինը քարին զարկած կ'ըլլաս:

Նոյնպէս, յարմար է ատեն ատեն սա տեսակ խօսքեր ալ սպրոցեցնել.

— Քէշեանը գրական վէպ մը յանձնարարեց ինձի. բայց գրելու ժամանակ չունիմ, հիմակուն թո՛ղ սպասէ...

Միայն խնդիր է չփաղանց դէտաչէ եղանակով մը արտասանել այս բառերը, եթէ կ'ուզես որ քեզի մտիկ ընողները անմիջապէս կարեկցին սա խեղճ Քէշեանին, որ անհամբեր գրական վէպիդ կը սպասէ:

Ասկէ ետքը կուգայ հրատարակիչներու խընթիրը, զոր պէտք չէ մոռնալ և զոր՝ «Հայր մեր» իշափ դոց զիսնալու է:

Զոր օրինակ, սա՛ տեսակ նախաղասութիւնն
ները շատ յարգի են.

— Պալենցը՝ բանաստեղծութիւններու հաւա-
քածոյ մը ուզեր էր, սակայն միտք չունիմ տալու,
որովհետեւ նշան-Պապիկեաններուն խոստացայ-
արդեօք Պալենցը ո՞չափ սփսփ նեղանայ... բայց
որո՞ւ հոդ...:

Եւ կամ՞

— Սյսօր ճամբան Մարգարեանին հանդիպե-
ցայ. դարավերջիկ բարքերէ առնուած վէտ մը
կ'ուզէ կոր... բայց հիմակուհիմա ամեննեւին միտք
չունիմ գրելու, որովհետեւ լուրջ ուսումնա-
սիրութեամբ մը զբաղած եմ:

... Ահա՛ այս կերպով, սիրելի՛ս, քեզ մար-
դու ակղ կը դնեն, և կը գտնուին նոյն իսկ անանկ-
ներ, որոնք տաղանդիդ վրայ կը հիմանան:
Սակայն, ամէն պարագայի մէջ, սիրելի՛ս,
Աստուծո՞յ սիրուն, զգուշացիր միշտ տո՞ղ մը բան
զբելէ, որովհետեւ այն ատեն... ի՞նչ ըլլալդ կը

ԴԱԶԱՐՈՒՄ

Ու օր մը իմացանք թէ՝ մեր սիրելի բարե-
կամը Պազարս իր աղջիկը իրութեան տուեր է իր
ամէնէն ուսերիմ թշնամիին:

- Ի՞նչո՞ւ աղջիկդ տուիր, հարցուցինք իրեն:
- Վրէ՛մս լուծելու համար, պատասխանեց
մեր Պազարս:

Մեր քցրիկ որագէաններէն մէկը կըսէր Պա-

— Կ'ուզեմ գրել բան մը, որ մինչեւ հիմա
երբէք զրուած ըլլայ և որ բոլոր գրագէաններուն
մլարէն իսկ չանցնի:

— Զեր վրայ գովեստ մը գրեցէք ուրեմն,
պատասխանեց Պազարս:

?

Պազարս ինչ հարցուցին թէ՝ ի՞նչ ընելու է
մարդ, պարկեշտ ու պատուաւոր ըլլալու համար:

— Ուրիշներուն ըրածին հակառակը ընելու է,
պատասխանեց մեր խելացի բարեկամը:

?

Պազարս իր զրասենեակին մէջ կ'աշխատէր,
երբ եկան իրեն իմացնել թէ տունը կ'այրի կոր:

— Գացէք կնկա՞նս ըսէք, պատասխանեց Պա-
զարս, ես տունի գործերուն չեմ իսպնուիր:

?

Պազարս քանի մը անգամ փողոցի մէջ գո-
ղերէն կողոպտուած ըլլալով՝ ա՛լ չէր համարձա-
կեր դուրս ելլել:

— Բայց ինչո՞ւ համար քովդ ատրճանակ մը
չես առներ, հարցուցին իրեն:

— Ի՞նչպէս առնեմ, պատասխանեց մեր նշա-
նաւոր ապուշը, ամ ալ կը գողնան:

?

Օր մը, Պ. Պազարս՝ շատախօս սափրիչի մը
խանութը կ'երթայ՝ ածիլուելու:

— Ի՞նչո՞ր կ'ուզէք որ ածիլեմ, կը հարցնէ
սափրիչը:

— Առանց խօսելու, կը պատասխանէ Պա-
զարս:

?

Պ. Պազարս թարսնէ կը վերադասնայ:
կը հարցնեն իրեն թէ՝ ներկայացուածը ի՞նչ
խաղ էր:

— Երա՛ւ որ, կը պատասխանէ Ղաղար, թառած մտած ատենս ա'յնչափ սասափիկ կ'անձրեւէր կոր որ յայտագիրը չկրցայ կարդալ:

?

Ղաղարոս իր բարեկամներէն մէկուն նամակ մը գրելով, յետ-զրութեանը մէջ սապէս կ'աւելցնէ. —

« Ինչպէս գիտես, երբեմն նամակները կը կոր- « սուին, և եթէ այս նամակը մինչեւ քառասուն- « ութը ժամ ձեռքդ չանցնի, իմացուր ինծի, որ- « պէս զի ուրիշ մը զրեմ: »

?

— Ղաղարոս, գիտես թէ ինչո՞ւ մարդիկ, երբ երդում մը ընեն, ձեռուընին վեր կ'առնեն: — Հասկցնելու համար թէ ըսելիքնին՝ օդին մէջ մնալիք բան մըն է:

?

Ղաղարոս՝ իր մէկ բարեկամին. — Զեղի փոխ տուած հովանոց ի՞նչ եղաւ: — Դեռ չկրցայ գտնել. ո՞վ գիտէ ո՞ւր մոռ-ցեր եմ: — Ուրեմն ձեղի նուելոս ըլլայ:

?

Ղաղարոս թատրոնէն մեկնած ատենը բար- տըսիւն կ'ուզէ կառտ-րուպէն: — Զեր թիւը, կը հարցնէ պաշտօնեան: — Բարտըսիւս զրպանը նայեցէք... չկոր- մնցնելու համար հոն դրի:

?

Եեր սիրելի բարեկամ զ. Ղաղարոսին կը հար- ցնէին. — Ինտո՞ր կըլլայ որ միշտ դրամ ունիք:

— Որովհետեւ երբէք հին պարտքերս չեմ վճարեր:

— Հապա նորե՞րը:

— Ա.առն.ք ալ... կը հինդնեմ:

?

Ղաղարոս սուզի մէջ է:

Ու կը հարցնեն իրեն թէ հակառակ սուզին, այս տարի գիւղ պիտի երթա՞յ:

— Հարկա՛ւ, կը պատասխանէ մեր մարդուկը, միայն ի նշան սգոյ, Սեւ ծովու գիւղերէն մէկը պիտի երթամ:

?

Բնագիտական:

— Դիտելի է որ, ըսին Ղաղարոսին, սունկերը խոնաւ տեղեր կը բուսնին միշտ:

— Անոր համար է որ հովանոցի ձեւը ունին, արամարանեց Ղաղարոս:

?

Ղաղարոս՝ սինեմարովագիի ներկայացումէ մը կը վերադառնայ:

— Գէշ գիւտ չէ, կ'ըսէ, սակայն չեմ հաս- կնար թէ ինչո՞ւ միմիայն ժամանակակից տեսա- քաններ կը ներկայացնեն:

?

Դատարանի մէջ:

— Ղաղարոս, ասկէ առաջ բնաւ դատա- պարտուած ես, կը հարցնէ դատաւորը:

— Երկու անգամ... բժիշկներու կողմէ:

?

Ղաղարոս՝ սպասաւոր:

— Տիկինը հո՞ս է:

— Զէ, հիմա պտոյտի գնայ... բայց վայր- կեան մը կեցէք, հարցնեմ իրեն:

ՄՏՔԻ ՓՇՐԱՆՔՆԵՐ

Սիրուած կնոջ մէջ լինչ բան կը սիրենք :
 Շղա՞րչ, կամ ժանեա՞կ, թէ կապոյտ մուսլին,
 եւ կամ օ՞ղ, մատնի, թէ ապարանջան . . . ;
 Զէ, — սիրուած կնոջ մէջ, տիկին, միայն
 ձեզ կը սիրենք :

X

Կին մը կրնայ ծնած ըլլալ գեղեցիկ ըլլալու
 համար . բայց գեղեցկութիւնը կը սկսի միայն այն
 առնեն, երբ սիրալ կարող է սիրել :

X

Աղուար կիները միշտ իրենց ճականներուն
 վրայ կը կրնեն մէջմէկ յանձնարարագիր :
 Այս յանձնարարագիրները գրուած են բնու-
 աղդ կրնայ կարդալ զանոնք :

X

Արեւելեան բանասեղծութեան մէջ —
 Յօնիլ՝ կամար մըն է :

Նայուածի՝ նետ :

Ակուաներ՝ քոլքո՞ի չարուած մարդրիաներ :
 Արցունեցներ՝ առաւօտեան ցոլ :

Դեմք՝ լուսնկայ :

Մազեր՝ մետաքս :

Բերանը՝ կոկոն :

Այսեր՝ ինձոր :

Եւայլն, եւայլն, եւայլն :

X

Կին մը միշտ գեղեցիկ է իր սիրահարին հա-
 մար, — ըստ է . . . ամէն մարդ :

X

Սիրահարները երբէք սովորութիւն չունին տես-
 նելու իրենց սիրուհիներուն թերի կողմնը, և
 անոնց թերութիւնները յաճախ իրենց համար նոյն
 իսկ մէջմէկ առաւելութիւններ կը համարուին :

Պարապ տեղը չէ որ ըսեր են . — « Սիրա-
 հարները կոյր կ'ըլլան » :

Այդ խեղճ բաղդաւորներուն աչքին, — ըրծ-
 գոյնք . . . յատիկի ճերմակութիւն մը կը ստանայ :

Ահռելիօրէն աւ կին մը՝ անոնց համար . . .
 պաշտելի թուրի մըն է :

Չոփ-ջոր ու նիմար կին մը . . . հասակի նրբու-
 թիւն ու մարմնի հմայիչ ճկունութիւն մը ունե-
 նալ կը համարուի :

Գերը . . . վեհ քալուածք մը ունի :

Եթէ աղոտ է, անոր համար ալ կ'ըսեն թէ . . .
 նելլիմէ կին մըն է, և աս ալ հարկաւ իր հմայքը
 ունի :

Հակայ հասակ մը ունեցողք . . . դիցուհի մը
 կ'ելեւայ :

Իսկ կարնահասակը անոնց աչքին կ'ըլլայ . . .
 երկինքի հրաշալիքներուն մէկ ամփոփումը :

Եթէ հպարտ է, այն ատեն ալ կ'ըսեն թէ . . .
 վեհ ու վսեմ սիրտ մը ունի :

Չարաձձին . . . սրամիտ կ'ըլլայ և ապուշը . . .
 բարի :

Շատախօսք . . . ահ, որչափ գուարթամիտ է :

Իսկ բնաւ խօսիլ զիմսցողք . . . պարկեշտ ամօթ-
 խածութեան մը տակ կը պատսպարուի :

Այսկս ահա՛, երբ մէկը շատ սիրէ,

Թերութիւններն իսկ անոր կը սիրէ . . . :

Ինչպէս կ'ըսէ Մոլիէռ :

X

Գեղանի կին մը՝ չորս տարրեր նայուածքներ
 կը դրաւէ իր վրայ :

Աղուոր կիները անոր կը նային նախանձով :
Տգեղ կիները՝ ատեղորեամբ :
Ծերերը՝ ցաւեղով :
Ու երիտասարդները՝ սկաշութեով :

X

Կին մը գեղեցիկ ըլլալու համար, պէտք է
ունենայ . —

Չորս բան սեւ . — Մազերը, յօնքերը, ար-
տեւանունքները և բիբերը :

Չորս բան ներմակ . — Մարմինը, աչքերուն
մէջը, ակւաները և սրունքները :

Չորս բան կարմիր . — Լեզուն, շրթունք-
ները, լինդերը և այտերը :

Չորս բան կլոր, — Գլուխը, վիզը, թեւը և
ոտքին կոճերը :

Չորս բան երկար . — Կռնակը, մասները,
բաղուկները և սրունքները :

Չորս բան նեղ . — Յօնքերը, քիթը, շըր-
թունքները և մասները :

Չորս բան մսուս . — Այտերը, զիստերը,
հակափորը և տոլլեները :

Չորս բան նպատկ . — Ականջները, կործքը,
ձեռքերը և տոտիկները :

Ո՞ գեղանի ընթերցուհիներ, հիմա որ ա՛լ
հասկցաք գեղեցկութեան սահմանները, քննեցէ՛ք
դուք ձեղ և եթէ կրնաք բոլոր այս պայմաննե-
րուն պատասխանել, առանց ժամանակ կորսնցնե-
լու, շուտով փութացէ՛ք ցուցահանդէս մը, ուր
ապահովաբար առաջին բrix de beauté-ն դուք
պիտի շահիք :

X

Դեռատի աղջիկները կը կարծեն թէ կար-
գուած մարդիկ շարունակ իրենց կիները կը փայ-

փայէն և աղքատները կ'երեւակայեն / թէ ամէն
թուլաթլեան նստողին զրպանը լեցուն է :

Սակայն, քանիներ կան, որոնք ամէն իրի-
կուն թուգաթլեանին կը նստին և դրամ չունին :

X

Կուսութիւնը կիներու ամէնէն մեծ հարստու-
թիւնն է :

Սակայն, զարմանալի է որ, կիներուն մեծ
մասը՝ կը ձգէ որ զիրենք . . . կողոպտեն :

X

Աստուած խարտեաշ կինը չնորհած է Հիւսիսի
բնակիչներուն, միսիթարելու համար զանոնք արեւի
բացակայութենէն :

X

Կնոջ մը սիրով երբէք չի ծերանար, երբ դադրի
սիրելէ, ուրեմն զազրած է ա՛լ բարախէլէ :

X

Փետուրէ աւելի թեթեւ ինչ կայ :

Փոշի :

Փոշի՝ աւելի թեթեւ :

Հոյ :

Հովէն աւելի թեթեւ :

Կինէն աւելի թեթեւ :

Ոչինէն :

X

Աղջիկները՝ ոսկի են :

Կարգուած կիները՝ արծաթ :

Այլի կիները՝ պղինձ :

Եւ պատաները՝ թիթեղ :

X

Կին մը, մէկ տարեկանէն մինչեւ տասը տա-
րեկան, ձանձ մըն է :

Տասնէն մինչեւ տամնըհինդ՝ ծիծեռնակ մը :

Տասնըհինգէն մինչեւ քսան՝ դրախտահաւ :
Քսանէն մինչեւ քսանըհինգ՝ տատրակ մը :
Քսանըհինգէն մինչեւ երեսուն՝ աղաւնի մը :
Երեսունէն մինչեւ քառասուն՝ թութակ մը :
Քառասունէն մինչեւ յիսուն՝ բու մը :
Յիսունէն մինչեւ վաթսուն՝ ուրուր մը :
Անկէ ետքը, ոչ կին, ոչ թռչուն, այլ . . .
ոչի՞նչ :

ԾԱՂԻԿՆԵՐՈՒ ԼԵԶՈՒՆ

Սաղիկներու լեզուն ո՛չ զրաբար է և ո՛չ աշխարհաբար, այլ զուտ . . . բանաստեղծական :
Քանի որ բնադէսները երկար ատենէ ի վեր ապացուցած են արդէն թէ՝ ծաղիկները երար կը սիրեն, իրարու կը սիրահարուին, կը կարգուին ու կ'ամուսնալուծուին, անշոշտ պէտք է, լեզու մըն ալ տալ այդ էակներուն, որոնց սիրտը՝ մերիններուն հետ կը բարախէ :

Ծաղիկներուն լեզուն ստեղծեցին բանաստեղծները, ի պէտս սիրահարներու և սիրուհիներու, և այս լեզուն սիրուն ու թովիչ է իր տարօրինակութեանը մէջ :

* * *

Հարսնուկ. — Լքում կը նշանակէ :
Ճերմակ յամիկ. — Համակրութիւն :
Հալուէ. — Դառնութիւն :
Բաղեղ. — Բարեկամութիւն .
Մուրս. — Սէր :
Վարդ. — Գեղեցկութիւն :
Շահպակ. — Տեւական գեղեցկութիւն :

Դնեմախնձորի ծաղիկ. — Բարեգործութիւն :
Նունուժար. — Կարճատեւ երջանկութիւն :
Դաշտային շուշան. — Երջանկութեան վերադարձ :

Զնծաղիկ. — Բարի լուր :
Ելակի ծաղիկ. — Բարութիւն :
Ճերմակ մանուշակ. — Անբծութիւն :
Նարնջածաղիկ. — Կուսութիւն :
Ճերմակ վարդի կոկոն. — Միամիտ սիրտ :

Լերդածաղիկ. — Վասահութիւն :

Վայրի կակաչ. — Միսիթարութիւն :

Եղինն. — Անգթութիւն :

Կակաչ. — Յայտարարութիւն :

Դեղին շահներամ. — Արհամարհանք :

Շուշան հովտաց. — Նազելիութիւն :

Նոնի. — Յուսահատութիւն :

Նարգիս. — Բաղծանք :

Զարխոս. — Գաղտնապահութիւն :

Աղաւնարօս. — Հմայք :

Էլիօդրոք. — Գինովութիւն :

Ժանախնձորի ծաղիկ. — Խարդախութիւն :

Ճերմակ կամ կարմիր վարդ. — Սիրտի հուր :

Վերոնիկէ. — Հաւատարմութիւն :

Նարգիսական շուշան. — Հպարտութիւն :

Ունի. — Անկեղծութիւն :

Դափնի. — Փառք :

Ցախ. — Մեծութիւն :

Շահնարգամ. — Ատելութիւն :

Սոնի. — Յանդգն ութիւն :

Մատուտակ. — Ամօթ :

Կաղնի. — Հիւրնկալութիւն :

Վրանածաղիկ. — Խոնարհութիւն :

Դեղին վարդ. — Անհաւատարմութիւն :

Հրանունկ. — Ապերախտութիւն :

Գայլուկ. — Անարդարութիւն :

Մարզարիս . — Անմեղութիւն ,
Վարդի կոկոն . — Դեռասափ աղջիկ :
Թուշնած տերեւեներ . — Մելամազձոսութիւն :
Միոգօրիս . — Մի՛ մոռնար զիս :
Յուեն . — Հարստութիւն :
Ճերմակ վարդ . — Լոռութիւն :
Հաւամրգի . — Մենութիւն :
Դամելիս . — Տափակութիւն :
Լիլա . — Անհամութիւն :
Քրիզանդէմ . — Սրամտութիւն :
Միխակ . — Ապուչութիւն :
Վարդ . — Տափակ բանաստեղծութիւն :
Շուշան . — Երբեմն գրագիտուհի , բայց հիմա
այդ դործէն քաշուած նորատի աղջիկ :
Մարկրիք . — Խնկած երգիծաբանութիւն :
Դեռ երկար է այս քմածին բառարանը , սաւ
կայն պարտաւոր եմ ընդմիջել , որպէս զի՞ մի՛ գուցէ
ձեր մեծապատուութիւնները ձանձրանան :
Ամէն պարագայի մէջ , կրնաք այս ծաղիկնեւ
րով ծաղկեփունջեր կազմել ու անոնց խորհրդաւոր
պերճախօսութեամբը կրնաք թղթակցիլ , ճիշդ
ինչպէս պիտի թղթակցէիք անթել հեռագիրով :

ԿՆՈՉ ՇՈՒՐՉԸ

(ԻՆՉԵՐ Կ'ԸՆԵՆ ԿԻՆԵՐՈՒ Վ.ԲԱՅ)

Կնոջ մը գլուխը՝ տունի մը տանիքին վրայ
դրուած հողմացոյցին (girouette) մը կը նմանի , որ
ամէն հովի կը դառնայ :

— Երբ տունի մը մէջ պառաւ աղջիկ մը
կայ , այդ պահապան շուները աւելորդ են :

Երիկ մարդը կրակ է , կինը՝ լածուծ և սատա-
ցան՝ փքոց :

×

Ահա՝ գաղափար մը , որ աստահովաբար մեծն
Տարութինի եկյժին սփափ երթար . —

« Աշխարհիս ամէնէն սիրուն ու ամէնէն հրեշ-
տակացին կնկանը մէջ մի՛շտ նշանաւոր կապիկ մը
կոյ » :

×

Հարուսաներու բարեկամութիւնը , ձմրան
արեւը և կնկան մը երդումները . — ահա՝ երեք
բաներ , որոնց կարելի չէ հաւասար :

×

Կիները կոկորդիլուներու կը նմանին . Երիկ
մարդիկը գրաւելու համար՝ կուլան և զանոնք
գրաւելէ ետք՝ կը լափեն :

×

Կնոջ ուղեղը կազմուած է կապիկին գրիմայէն
և ալուէսին պանիրէն :

×

Տապանագիր մը . —

Աստ հանգչի կինս :

Ո՞հ , ի՞նչ աղէկ , թէ՛ իր հանգստին և թէ՛ ...
իմ հանգստիս համար :

×

Թռչունները , կատոնները և կիները այն երեք
տեսակ կինդանիներն են , որոնք ամէնէն աւելի
յամանակ կը զոհեն՝ իրենց արդուզարդին համար :

×

Կիները՝ պատյափ ատեն՝ սիրամարդիներ են ,
ըստաննեկան գործերու ատեն՝ անծեղներ , և գլուխ-
զլիսի ատեն՝ աղաւնիներ :

×

Բնութիւնը հակասութիւնները կը սիրէ . —
Ծանր կինը թեթեւամիտ կ'ըլլայ և թեթեւ
կինը՝ ծանրամիտ :

×

Կին մը՝ մինչեւ քառասուն տարեկան՝ զորսէն
կը շինէ մարմնին համեմատ և քառասունէն ետք՝
մարմնը զորսէին համեմատ :

×

Կին մը տասնըհինգ տարեկանին սէրը կ'ե-
րաղէ :

Քսանըհինգին՝ կը ճաշակէ :

Երեսունըհինգին՝ լինքվինքը սիրոյ համար կը
զոհէ :

Քառասունին՝ սիրոյ հանեւէն կը ցաւի :


Յիսունին՝ զայն կը վերյուշէ :

×

Ամուսնութիւնը վիճակահանութիւն մըն է :

×

Բարիզը՝ ձեւրու դժոխվն է, երիկմարդոց՝
քաւարանը և կիներու՝ արքայութիւնը :



ԳՈՅՆԵՐՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Ճերմակ . — Կուսութիւն, անմեղութիւն,
ամօթխածութիւն կը նշանակէ :

Կապոյշ . — Սիրտի սէր, ապահով սէր :

Վարդագոյն . — Երիտասարդութիւն, գեղեց-
կութիւն, ուրախութիւն :

Դեղին . — Անհաւատարմութիւն :

Սեւ . — Հպարտութիւն :

Կահաչ . — Ցոյս :
Կարմիր . — Սասափիկ սէր, եռանդ, կիրք,
նայն :

Մոլորազոյն . — Տիրութիւն, մելտսմաղձոսու-
թիւն :

Մանիւակագոյն . — Ցաւ, սուգ :

* * *

Ու քանի որ, ամէն բան իր գոյնը ունի, նոյն
խոկ . . . մեր թերթերը, Պ. Լէոն Կոզլան՝ հետեւ-
եալ բաւական original թուումը կ'ընէ . . . «իրերու
գոյն» յին .

Գթութիւնը՝ անուշ կապոյտ է :

Համակերպութիւնը՝ մարգրտագոյն :

Ուրախութիւնը՝ կանաչագոյն :

Յոզնութիւնը՝ զափհօցի :

Հածոյքը՝ թաւշավարդագոյն :

Քոնը՝ ծխախոտի մուխի գոյն :

Մամտուքը՝ նալինջագոյն :

Յաւը՝ մուրագոյն :

Նախանձը շոգոլայի գոյն ունի :

Խոշոր պարուք մը վճարելու ծանր մատածումը՝
կապարագոյն :

Տոնին վարձքը վճարելու օրը՝ մեռելագոյն :

Ստացուելիք դրամը՝ կարմիր ոսկեգոյն :

Սիրային ժամադրութեան մը երթալը՝ թեթեւ
թէյի գոյն :

Քսաներորդ սիրային ժամադրութեան երթալ՝
ծանր թէյի գոյն :

Կատարեալ երջանկութիւն . . .

Ըստ իս, ասիկա գոյն չունի :



ՆՕԹԵՐ

Սէրը կրակ է . ամուսնութիւնը՝ մուխ :
— Կիները , երբ չեն սիրեր , ծեր օրէնսդէտի մէ
ամբողջ պազարիւնութիւնը ունին :
— Կինը կ'ապրի ո՛չ միայն հացիւ , այլ . . . խըն .
կարկութիւններով , շողոքորդութիւններով ու պա-
տիւններով :
— Բացակայութիւնը՝ միայն միջակ յարաբերու .
թիւններու համար վտանգ կը սպառնայ :
— Աղուէսը շատ բան գիտէ , բայց սիրող կի-
մը աղուէսէն աւելի գիտէ :
— Աստուած , որ զղջացած է էրիկմարդի-
ստեղծած ըլլալուն համար , երբէք չէ զղջացա-
կինը ստեղծելուն :
— Սէրը , որ այնչափ պզափի բան մըն է ինք-
նին , կեանքի բոլոր բաններէն ամենէն լուրջն է :
— Սէրերու ամենէն հազուագիւտը . . . պղա-
տոնական սէրն է :
— Սիրահարի մը ըրած իւրաքանչիւր գործի-
եզրակացութիւնը՝ իր սիրուհին վրայ մտածեն է
— Կ'ուղէ՞ք սիրուիլ :
երբէք մի՞ սիրէք :
— Դերձակուհի մը առաքինութիւնը յաճա-
դերձանով կապուած կ'ըլլայ :
— Ի՞նչ է դեռատի աղջիկ մը :
— Կիսարաց դուռ մը :
— Միծ ապուշութիւնները սիրուէ կը բղխին :
— Ամուսնութիւնը սէրէն կը բղխի , ինչպէ-
քացախը գինիէն :
— Կինը՝ Օքէրայի թատրոնի մը կը նմանի . թ-
կը ձանձրանանք և թէ՛ կ'երթանը :
— Երբ ընթերցող մը կարդացած գիրք
ձանձրանայ , ի՞նչ կ'ընէ .
— Գիրքը կը գոցէ :

ՔԻՉ ՄԸ ԽՆԴԱՌՆՔ,

ԵԹԷ ԿԸ ՀԱՃԻՔ

Փաւասի մէջ , հացկերոյթի մը միջոցին :
Խոստովանանքի գաղանիքները կը հարցնեն
տեղւոյն տէրաէրին :
— Միայն սա՛չափ կրնամ բսել որ , ըստ յար-
դելի քահանան , առաջին ծուխս՝ էրիկը խարոզ
կին մըն էր :
Հացկերոյթէն ետք , տիկն մը ներս մտաւ ,
իր ամուսնին ընկերացած :
— Ահ , ո՛չափ էրջանիկ եմ ձեզ տեսնելուս ,
բացադանչեց նորեկ ախկինը , կը յիշէ՞ք , ես ձեր
առաջին ծուխն էի :

Tableau !

* * *

Հայլայփ ճաշարանի մը մէջ :

— Կասոսն , զիւր-տան մը :

— Երկու հատ ունինք , բայց երկուքն ալ սա-
միջոցին զրաւուած են . մէկուն գործը լմնալուն
պէս , անմիջապէս ձեզի կը բերեմ :

* * *

Բերացի պարսն մը՝ տիսուր ու մտաղբազ կը
պարսէր Բըդի-Շանի պարտէզը :
Բարեկամներէն մէկը հանդիպեցաւ անոր :
— Ի՞նչ ունիս , հարցուց , ի՞նչ կը մտմտաս :
— Ի՞նչ պիտի մտասամ , պարտք ունիմ և
չեմ կրնար կոր վճարել :
— Ապնւշ դուն ալ , պատասխանեց միւսը ,
սիկա թող պարտապահնջդ մտմտայ :

* * *

Յակորիկ ընդհանուր պատմութեան դաս
կառնէ :

— Բայէ՛ նայիմ, կը հարցնէ վարժապետը, այդ
միջոցն Ռուսիայ մէջ ո՞վ կը տիրէր:

— Կարծեմ... սասափիկ ցուրտ մը կը տիրէր՝
կը կակաղէ Յակոբիկ:

* * *

Ուսուցիչը ուրիշ հարցում մը կ'ուզգէ Յակո-
բիկն:

Յակոբիկ... լուսթեամբ կը պատասխանէ:

— Արդեօք հարցում քեզի կը շուարեցնէ
կոր, կըսէ բարեացակամ ուսուցիչը:

— Չէ, միսիւ, կը պատասխանէ Յակոբիկ
վասահոթեամբ. զիս շուարեցնողը հարցումը չէ,
այլ պատասխանը:

* * *

— Տեսնե՞նք, Յակոբիկ, ո՞րն է այն կենդա-
նին որ ամէնէն աւելի մօտ է մարդուն:

— Միւսիւ... ախվիւլը:

* * *

— Յակոբիկ, եթէ փոթորիկի մը միջոցին
ուժով մը շփելու ըլլաս կատախ մը կոնակը,
ելեկարականութեան գոյութիւնը վեր կը ցատկէ:
Յակոբիկ. — Ի՞նչպէս նաեւ կատուն:

* * *

Դատարանի մէջ:

— Տիկին, դուք ձեր ամուսին վրայ ձեռք
վերցուցեր, և յետոյ զայն նախատե՛ր էք:

— Ե՞ս, ի՞նչ եմ ըսեր որ:

— Ապօ՛չ ըսեր էք:

— Կը աւեսնէք որ չեմ նախատեր զայն, ...
Միմիայն ձմարտութիւնը երեսին եմ զարկեր:

* * *

Զավարանց հարուստ մէկը՝ մեռած վայրկեա-

նին՝ շուա մը կտակներ ըրտ կարգ մը մարդոց,
և միայն իր սպասաւորին բան մը չձգեց:

— Անոր բան մը չեմ տար, ըստ, որովհետեւ
քսան տարիէ ի վեր քովս կը ծառայէ:

* * *

Սպահ մարդ մը, որ կ'աշխատէր վարժեցնել իր
ձին բան մը չտաելու, օրին մէկն ալ տեսու որ
խեղճ կենդանին չորս ոտքը տնկեր է:

— Մե՛զք, մե՛զք, աւաղեց մեր մարդուկը,
եթէ քիչ մէն ալ դիմանար, պիտի վարժուէր:

Մարդ մը իր սիրելի կինը են flagrant délit
կը բռնէ:

— Ուրեմն դուն զիս չես սիրեր:

— Բայց ատիկա քեզի ո՞վ ըստ:

— Աչքերս:

— Կը աւեսնես որ զիս չսիրողը զո՞ւն ես եղեր,
քանի որ, փօխանակ ի՞մ խօսքիս հաւատալու,
աչքերո՞ւդ կը հաւատաս կոր:

— ՀԵՌԱՆ

ԲԵՐԱՆ

ԲԵՐԱՑԻՆ

ԲԵՐԱՑՈՒՂԻՆ

(Ս Ա Ն Թ Է Զ Ի)



թէ աշխարհիս երկու կոյ բան մը, զոր
տա՛սը մասուցներուս վրայ զիսեմ, հիմնովին կը
ճանչնամ և արմատովին ուսումնասիրած եմ, ատ
ալ, ո՛չ ֆրանսերէնի սենթախ է, ո՛չ հայերէնի
քերականութիւնս, ո՛չ Պոլսոց հայեվարը (գրեց՝
Թէկողիկ), ո՛չ գաւառի գաւառաբարբառը (գրեց՝
ամեն զաւառացի), ո՛չ նշանածիս հոգեբանութիւնը,

ո՞չ Այլաղեանի գրականութիւնը և ո՞չ գրականութեան... Այլաղեանը, այլ մի՛միայն... Բերան, Բերացին ու Բերացուհին (Տե՛ս վերնագիրս):

«Ծանի՛ր զքեղ», ըստ է կարծեմ պատմական մեծ շատախօսը, Սոկրատ, որ, խօսքը մէջերսիս, եթէ մեր օրերը ծնելու ըլլար, փոխանակ պատմութեան էջերուն մէջ մտնելու... Աղդ. Հինանդանոցը կը մտնէր շիտակ:

Միմիայն անոր ըստին հակառակ կը դործած ըլլալու անմեղ հաճոյքը վայելելու համար, ներեց'ք սակայն ըստ թէ՝ Բերայի մայթերը, Բերայի գարեջրատունները, Բերայի թատրոնները, Բերայի Կրաչուհիները, Բերայի բրօրիօնները, վերջապէս tout-Péra-ն կը ձանչնամ այնտի աղէ՛կ, որչափ... չեմ ձանչնար ինքնինքս, և շատ աւելի դիւրութեամբ պիտի կրնացի ըսել թէ՝ այսինչ տիկինը այս գիշեր ուր պիտի պառկի, քան թէ այս իրիւ կուն... ես ուր պիտի պառկիմ:

Բերայի մայթերուն վրայ, երբ յիսուն քայլ հեռուէն հանդիպիմ մէկու մը — արական կամ իգական՝ խնդիր չէ՝ կրնամ վայրկեանին մասնաւոր անդեկութեանց դործակալութենէ մը աւելի գոհացուցիչ կերպով պատմել ձեզի թէ՝ հազար ութ հարիւր քանի՛ին ծնած է, ե՞րբ կարդուած է՝ կամ պիտի կարգուի, քանի՛ սիրահար ունի՛ կամ ոիրուէի, կոմիկն գո՞հ է թէ ոչ, քանի՛տեսակ լաթ կոչիկ առաւ և ե՞րբ իր տիկինը խացեց (խարել բառը՝ իր վիպական նշանակութեամբ), և վերջապէս բոլոր այն չնչին ու անհշան մանրամասնութիւնները հոգի կուտան հասկնալու՝ իրենց զաւակը մէկու մը հետ կարգելէ առաջ:

Արդէն, ըսկ'ք, եթէ երբէք, Սոկրատին խարը չկոտրելու համար ինքնինքս ձանչնայի,

ի՞նչ օդուա պիտի ունինար: — Ապահովաբար, այն սատեն, տե՛զն ի տեղօք պիտի հասկնայի անունս, մականունս, հասցէս, միտքիս վիճակը, քսակիս մակարդակը, և ձ՛coup սնր, շատ գէշ գաղափար մը պիտի կազմէի իմ մասիս: Մինչդեռ հիմա, փոխանակ ինքնինքս ձանչնալու, ձեզ կը ձանչնամ, և եթէ միտք ունիմ գէշ գաղափար մը կազմելու, այդ գէշ գաղափարը... ձե՛ր մասին կը կազմեն:

... Միտքս ուղղակի նիւթիս գալ էր, սակայն, որովհետեւ, ինչպէս կը սեն, «ուզելը ուրիշ բան է, ընկըլը ուրիշ», հիմա հոս կեցեր... սրամտութիւն կը քշեմ կոր ձեզի:

Երեւակայած էի թէ քանի որ այս անդամ, երբ, կեանքիս մէջ առաջին անգամ ըլլալով, պիտի զրեմ նիւթի մը վրայ, զոր, բացառաբար՝ գիտեմ հիմնովին, բառերը ու ֆուազները պիտի ներկայանային գրչիս, առանց առաջուց... մասնաւոր հրաշիրագրի սպասելու:

Գրիչս մատներուս մէջ կազմ ու պատրաստ, կը ջանամ՝ օդին մէջէն թռչտող գաղափարը բռնել, սակայն, չեմ յաջողիր բռնել նոյն իսկ... ձա՞նձ մը, լոկ այն պատճառաւ որ... ձանձերու սեզօնին մէջ չենք դանուիր:

Ոհա՛ թէ մարդ ինչո՞ւ... իր գիտցած բանին վրայ չի կրնար զբեկ երբեք:

... Բարի տղայ մըն եմ սակայն, և բարի տղու իսիզնիս շատ ծանր պիտի գար յուսախար ընել Բերան, Բերացին ու Բերացուհին, որոնք պատրաստուած էին իրենց վրայ գրելիքս կարդաւու և... բարկանալու:

Եւ, որովհետեւ, գիտեմ որ՝ բարկութիւնը եթէ չպութիկայ, սատափի զլսուած ցաւ մը կը պատճառէ մարդուս, կամայ ակամայ կը փորձուիմ գրել Փանթէզիս, որ աւելի... առողջապահական նպաստակ մը ունի հիմա:

Ահա, եթէ կ'ուզէք, յառաջարանը յօդուածիս, զոր ուրիշներ պիտի անուանէին «Նախարան», կամ «Երկու խօսք», կամ «Ընթերցողին», կամ «Մեր նալատակը», և կամ «Առաջազրութիւն», և որ հակառակ իր անուններու փոփոխութեան, չի փոխուիր երթէք և միշտ կը մնայ ա՛յնչափ աւելորդ բան մը, որչափ նոյն ինքն... յառաջարանին յետագան:

Ծանօթուրիւն. — Ընթերցողներէս անոնք որ սակայն չեն ախորժիր յառաջարան կարդալէ կը բանաց բնել վերի տողերը և կարդալ միայն հետեւեալները:

* * *

Բերան իր աշխարհադրական դիրքովը աւելի երկինքին մօտ դետեղուած, բնակիչներուն մեծ մասը երկինքին հեռու մնացած է:

Բերայի համար կ'ըսեն թէ Բարիզի փոքրանկարն է, ինչպէս էնկիւրիւն է... Երկրորդ Բարիզ մը: Բերա ու Բարիզ իրարմէ կը ասրբերին միայն սա՛ կէտով թէ Pérasiensը Parisien չ և ոչ ալ Parisiensը՝ Pérasiens, ինչպէս ըսած է ա՛յնչափ ձիշդ կերպով... Պ. ար Լափալիս:

Բերա բնակիլը հայ-լայփութիւն կը նշանակէ, քանի որ հարուստ մը պատրաստ է օգափոխութեան համար վեց ամիս Բրինգիրո բնակիլ, վեց ամիս Բերա, և տարուան մնացած մասը... իր ուղած տեղը:

Բերացին իր բերացիութեամբ ա՛յնչափ կը պարծենաց, որչափ չպիտի պարծենար աղքատ կին մը իր հարուստ սիրահարով:

— Բերացի եմ, կ'ըսէ անանկ չեշտով մը ինչպէս սպանիացի մը իր մեծանուն նախնիքներուն տիտղոսները պիտի թուէր:

Բերացի ըլլալը քանի մը հազար ոսկիի տէր ըլլալու պէս բան մըն է, որով կը յանձնարարեմ

բարձրէամներուս որ եթէ կը փափաքին քանի մը հայոցար ոսկի ունենալու պատրանքը ունենալ, երաթան չխառակ բերացի ըլլամ:

Բերացի մէջ մարդիկ քալուծ ատենախն երրեք գետին չեն նայիր կորսուած դրամապանակ մը գանելու յոյսով, որովհետեւ դրամապանակ մը կորսունցնելու համար, ամէնէն առաջ պէտք է... դրամապանակ մը ունենալ, սակայն ամէն բերացուհի փաղոցը քալուծ ատենը շարունակ չորդին կը նայի գանելու համար էրիկ մը, զոր... չի գաներ, քանի ոչ ոք... կորսոնցուցած է զայն:

Բերայի մը էրիկ մը գանելը հազար ոսկի պարունակող քսակ մը գանելին աւելի դժուար է:

Բերացուհին հինգչարթի օրերը Ղալաթիոյ ժամը կ'երթայ. Բերացին ալ նոյն օրը նոյն ժամը կ'երթայ: Ու կը կարծէք թէ կ'աղօթին: Քաւ լիցի: Այլ քանի մը ժամ իրարու երես կը նային, որովհետեւ... աղօթելու զարավիրջիկ եղանակն է այս: Աղջիկները կը յուսան լուրջ նշանած մը գանել, որ իրենց հետ կարգուի. այլերն ալ իրենց կողմէն կը յուսան թեթեւ սիրուհի մը գանել որոնց հետ չկարգուին. և այս կերպով ո՛չ աս բան մը կը գանէ, ոչ ալ միւսը:

Բերացուհին կիրակի օր ժամ կ'երթայ հասկընալու համար թէ նոր շնան զգեստը իրեն վայցլո՞ր է. և այս կը հասկնայ այն ատեն միայն, երբ ճամբան մէկ քանի հոգի... հարգ նստեն իրեն:

Բերացի մայրը գատապարտուած է իր աղջիկը վեր վար պարացնել Աստուծուն իրիկունը, քանի մը ժամ շարունակ, միշտ ի խնդիր սիրահարի մը որ յանկարծ խենդերու պէս սիրահարուի իր աղջկան: Բայց կ'երեւի թէ այս մատային հիւանդութեան ալ մօսան անցած է, քանի որ ա՛յնչափ նուազած է... կարգուղներու թիւը:

Բերացին, շատ մը գաւառներու օրինակով՝

ա'յնչափ աղէկ ուսումնասիրած է պղտիկ պղտիկ կարգուելու հակառողջապահական անպատճենութիւնները, որ երբ կարգուի, վեսան առնոււազն... քառասուն է, իսկ հարսը՝ երեսունըհինգ, որով Բերայի մէջ աղուոր աղջիկ մը իր տղեղնալուն պէտք է սպասէ զինքը առնող մը գտնելու համար:

Սկիւտարցին, Գումգարուցին ու Սամաթիացին կ'երեւակայէ թէ՛ օհ, Բերացին ո'չափ կը զուարձանայ, սակայն մարդ Բերացի ըլլալու է, կարենալ հասկնալու համար թէ հոն մարդ ինտո՞ր կը ձանձրանայ:

Բերացուհին գերագոյն զրօսանքն է իրիկուան դէմ թուգաթլեանին երթալ և խանարհել. — Կը յօրանչեմ, կը յօրանջես, կը յօրանջէ...:

Բերայի մէջ ամէն մարդ ամէն մարդու վրայ կը զարմանայ թէ ինչաէս գործին մէջէն կ'ելլէ կոր: Ճշմարսութիւնը այն է որ սակայն Բերայի մէջ ամէն մարդ ամէն օր մնանկանալու վրայ է և չի մնանկանար:

Բերայի մէջ անլուծելի խնդիրներ են. — Ինտո՞ր սս կինը, որուն էրիկը չորս ոսկի ամսական կ'առնէ, հինգ ոսկինոց գլխարկ մը կը դնէ: Սա մարդը որ պարզ տոմարակալ մըն է, ինտո՞ր կ'ըլւաց որ երկու տարուան մէջ երկու արարդըման կը շնէ:

Բերայի մէջ ֆէմինիզմը ա'յնչափ առաջ գացած է որ կամաց կամաց ա'լ միայն աղջիկները կ'աշխատին: Երիկարդիկ իրիկուան դէմ իրենց խանութները կը գոյցն, մինչդեռ մինչեւ զիշերը ուշ առեն կը հանդիպնք կարուհիներու, որոնք աշխատութիւնէ կը վերագառնան, իրենց էրիկները գործածելով... իրը անտես:

Բերայի մէջ ամէն մարդ կը յաւակնի գրականութենէ ու թատրոնէ հասկնալ, և ոչ մէկը բան

կը հոսուինայ. — Կ'երեւայ թէ կլիման է որ այսպէս կը բերէ:

Բերացին մէկ օթեակին հինգ ոսկի տալով՝ Սառային մէկ խաղին կ'երթայ և բան մը չի հասկնար, և երեք մէջիտ չի տար երթալու համար Մնակեանին, ուրկէ բան մը կը հասկնայ: Եւ թերեւո այսպէս ընելուն իրաւունք ալ ունի, ինչպէս կ'ուզէք որ ելլէ դրամ տայ բանի մը զոր... կը հասկնայ:

Բերացուհին ա'յնչափ վայելչասէր է որ, նոր արձագեստ մը չինելու համար... իսկանոցին թենմիւրէն կը ծախէ:

Բերացուհին այնչափ սրամիտ է, որ երբ փողոքը սիրուն գումբլիման մը ընէք անոր, անմիջապէս կը պատասխանէ ձեզի.

— Կորառէ՛ սըկէց, ես քու վրադ չեմ թուքներ:

Պարկեշտութեան համար, պարկեշտ է Բերացուհին. եթէ չէք հաւատար ինծի, պանդոկատէրերուն հարցուցէք:

Իր էրիկը ա'յնչափ կը սիրէ որ, իր արդուզարդի ծախքերուն համար՝ անոր բեռ մը չըլլալու համար, առանց միտքէն գէշ բան մը անցընելու... կը խարէ զայն:

Բերայի մէջ ամէն մարդ վիզը գոլալը օձիք ունի և կունակը՝ քանի մը հարիւր ոսկի պարտք: Պարտք ունենալը բերացիութեան գերագոյն յատկանին է և ճշմարգիտ բերացիի մը համար անվայել բան մըն է... պարտքերը մաքրել:

Բերայի մէջ հացավաճառները, մասալաճառները ու նպարավաճառները մեծ խնամք կը տանին իրենց յաճախորդներուն առողջութեան, միշտ գողալով որ չելլեն մեռնին, որովհետեւ ամէնն ալ քանի մը տասնեակ ոսկիներ առնելիք ունին միշտ: Այս պատճառաւ, երբ Բերայի մէջ մէկը հիւանդ պառկի, բոլոր պարտապահանչները իրենց կողմէ

մէյմէկ բժիշկ կը զրկեն հւանդին :

Բերացուհին իր սիրահարներուն սիրափն վրայ
patinage ըրած ատենը, երբեմն կը սահի ու...
կիյնայ: Բայց, oh! n'insultez jamais une femme
qui tombe! Կ'ըսէ Հիւլո:

Բերայի հայը, — ինչպէս նաև Պոլսեցի հայը
— տարին անգամ մը եւրոպական երաժշտութիւն
կ'ունկնդրէ — Աղդ. Հիւմադանոցի տարեկան նուա-
գահանդէսին, ուրկէ ոչի՞նչ համ կ'առնէ:

Բերացին երբ ողէ սիրալանել, Բանկալթի
կ'ելլէ. երբ վախաքի սիրել... Բերս կը մնայ,
իսկ երբ անձնասովան ըլլալու աստիճան յուսահա-
տի, Դալաթիոյ քարափը կ'երթայ... սորճ մը կը
խմէ:

Բերացուհին չի սիրահարուիր, բայց երբ սիրա-
հարուի, խենդերու պէս կը սիրէ կամ ժամուն տի-
րացուն և կամ մանիֆաթուրաձիր մը զրագիրը,
որովհետեւ շատ աղէկ զիտէ թէ՝ tous les goûts
sont dans la nature!

Բերացուհին շատ կը սիրէ պարծենալ իր չու-
նեցած բաներուն համար, — ասոր համար է որ
գուցէ զորսածը քուրջով կը լեցնէ:

Բերացուհին բարոյալից յօդուածները կը դովէ
և կը կարդայ... Ալփիար ու Կալրօզ:

Բերացուհին դպրոց դայած ատենը տասնի
չափ ուսուցիչ կ'ունենայ և նոյնչափ ալ... պաշ-
տող, որոնք մէկտեղ կ'աշխատին անոր զար-
գացման. մէյ մըն ալ կը գանգատինք թէ մեր
աղջիկները բան չեն սովորիր:

Ամէն Բերացի չկրնալով արարդլմանի մը տէր
ըլլալ, ինքզինքը միխթարելու համար, գոնէ...
արարդլման-օձիքներ կը գործածէ:

Բերացին աղջկան մը զուգական համար
երբէք սկրենասներ չերգէր անոր պատշամին
տակ, թօն ու սովորագրեց:

ստանալու պատիւին չենթարկելու համար ինք-
զինքը, այլ երբ որոշէ ամէնէն անմատչելի օրիորդին
սédution-ը ընել, առեւ կ'երթայ ու կ'ըսէ.

— Քեզի հետ պիտի կարգուիմ:

Այս միջոցը ամէնէն դիւրինն է և բերացի
աղջկան... “Ouvre-toi, sésame”ը:

Բերացին երբէք ամուսնալուծման չի զիմեր,
մտածելով թէ ետքէն ամէն մարդ ի՞նչ կ'ըսէ:
Բարերազդաբար, Դատաստանական իրանուրդը
Բերայի մէջ չէ. եթէ հոն ըլլար, շուտով կը սնան-
կանար:

Բերացին կը ձգէ որ կինը ուղածը ընէ, կինն
ալ կը ձգէ որ էրիկը ուղածը ընէ. — et tout va
bien dans le meilleur des mondes!


Բերացին անպատճառ տարին քանի մը անգամ
հարբուխ կ'ըլլայ, քանի մը զոյդ կօշիկ կը հինցնէ՝
Եիւքսէք-Գալտըրըմի ճամբուն վրայ, իր վաստա-
կին երեք քառորդը կը ձնէ թիւնէլին, թրամուէ-
յին ու կառքին, և օր մը երբ մնանի...

Շիշիի գերեզմանասունը կը թաղեն զայն:

Սըկէ նըկէ զողցաւ, թիչ մը
զրամնէն հանեց, աշխատեցաւ, յոզ-
նեցաւ, ընթերցողներուն հրացուց
եւ սորագրեց՝

ՄՐՈՒԱՆԴ ԹՈՒԱՑԵՍՆ







**ՏԻՐԱ ԶԱՊԻՆ Ս.ՍՈՒ.ՏՈՒՔ
(ՍԻԹԻԼ)**

ՏԱՐԵՑՈՅՑ ՆՇԱՆ - ՊԱՊԻԿԵԱՆ - Բ. ՏԱՐԻ - 1906



ԴԵՊԻ ՑԱՀԻՀԵՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԳՐԵՑ ՍԻՊԻԼ



մափի, մեզի մէջ փարքրւած,
Դիմքը կննուո՞ս,
Կուրծին հովերուն տակ հեծեծուն, շնչասպառ
Կը հեռանայ հին տարին,
Բաժնըրւելով մեզմէ խապառ :

Մեր հինաւուց ափութեներէն արտահալած՝
Ուր կը դիմէ կամաց կամաց .
Աբղունդեներու փոսերն ի վա՞ր,
Կամ լեռներու լեփ կատարին
Ասինաններն ի վե՞ր կ'ելլէ յամրաբար,
Չըդառնալով իր ետին :

Ու մենի ասդին,
Ա՛լ չենք նայիր իր ետեւեն,
Մեր խրճիններն ու վայելիններ ցորչափ տեւեն :
Ա՛լ մեր յոյսը, մեր ցընորքներ նորեկ տարւոյն կը
Անոր կ'ուղղենք մեր մաղրաններն ու իղձեր.
Ազ մեր կեանքն է, մեր սերն է ան,
Մինչեւ հինայ, ու ալեւոր ծերունի

Հասնին օրերն անուշջներով ծիրանի :
 Յետոյ դարձեալ նոր տարիներ յուսատու
 Կանոնաւոր ու անսպասաւ
 Նոր երեւան պիտի ելլեն
 Ժամանակին ալմերէն,
 Ալիբներու հըման արագ,
 Կոհակ կոհակ
 Ցաջորդելով իրարու :
 Ու անոնց հետ պիտի բալենք
 Դեպ ի ո՞ւր . . .

Անդունզներու փոսե՞րն ի վար,
 Կամ լեռներու լեփ կատարին
 Աստիճաններն ի վե՞ր արդեօֆ յամրաբար,
 Չը դառնալով մեր ետին,
 Թեեւ անդուլ անդադար
 Սիրելիներ, զոր կը բողունք,
 Ըզմեզ կոչեն, ա՞ն, ի զուր :
 Եւ անձանօր մըսութին մեջ,
 Խարխափելով, լուրք խաւերուն տակ երերին,
 Պիտի վազենք, պիտի վազենք հեւ ի հեւ,
 Փետութերու պէս դարձարձիկ,
 Արձիւներու պէս հոլաբեւ,
 Դեպ ի վերին լոյս արեւները անչէզ :

Քերոքեներն, հուր ենրուածներն երկինքին,
 Խընկենիներն հոգեպարար
 Եւ նըւազներն նրեւսակիներուն համար հազար
 Պիտի տեսնենք, պիտի լսենք, պիտի անցնինք,
 Մինչեւ հասնինին
 Ճերմակ կամար խորաններուն տակ խորին,
 Որոնք անցեալ նին տարիներն են մերին,
 Եւ որոնց տակ
 Մեզ կը սպասեն քեւաբաց . . .

Ո՞վ Ասուած,
 Սիրելիներ զոր մե՛նք հողին ենք Տըւած :



Ա.Դ.ԵՐՍՍՆ.ԴՐ ՓՄՆ.ՌՈՍՏՈՎՆ
(ԱԼՓԱՍԼԱՆ)

ՏԱՐԵՑՈՅՑ ՆՇԱՆ - ՊԱՊԻԿԻԵԱՆ - Բ. ՏԱՐԻ - 1906



ԶԱՐԳԱՑԱԾ ՕՐԻՈՐԴԸ

(Ա.ՋՏԱ.ՍԱ.ՆԵԼԻ ԿՏՈՐ)

Գրեց՝ Ա.Լ.ՓԱ.ՍԼ.Ա.Ն.

ՔՐԻԶԱՆԹԵԼԻՆ
Անհայտնձաբար



Սու տանն օրիորդն, երկուէս ենի մինակ
Հիւրասահին մեջ:
Նուրք ու գեղունակ,
Հազիւ բոլորած տանեւուք զարուն,
Դևոն հրապուրիչ, աչքը բարբառուն,
Ժրափին ու նայուածն արբուն, խելսնի,
Պիծակի մէջով աղջիկ մ'է անի:
Եր տարմուճեն ու արդուզարդն ամեն,
Զարզացման չափն ու նաւակը պատմեն...:
Ճակտեն ցոլացող ժնորհիք ըղուղուն
Չիս պահիկ մ'յուզուած եւ լուռ կը բողուն...;
Կուզեմ օգտուիլ այս վայրկեաններեն.
Քայց ի՞նչ խօսի բանամ, ի՞նչ քսեմ իրեն
Ու պարզուին առջեւս այդ մասաղ միտին
Դաղնիարեն ու ծալիեր ներփին,
Եւ այն կոյս լանջին տակ հսկող հոգուն
Հասկնամ խոհանն ու խոյսներ բազուն:

Կը բաբախէ սիրս ուժգին՝ թի՛f, թի՛f, թա՛f,
Ու կը հարցունեմ.

— « Ի՞նչ զիրք կը կարդաֆ,
« Ո՞րն է ձեր սիրած հեղինակն օսար . . . :»
Օրիորդը, ժպտուն, պատասխան չի տար :
— « Պա՞յրըն, Լամարքին, Ալթուէ Տը Միւսէ
« Ու այնքան չենաղ տաղեր կը հիւսէ
« Փափուկ, արտաբուղիս ու սիրապատար . . . :»
Օրիորդը, ժպտուն, պատասխան չի տար :
— « Հիւկօ՞, Ժան Ռիշբէն, Միւսօ՞ կամ Զօլա՞
« Որոնց գրչին տակ կ'եռայ ու կուլայ
« Մարդկութիւնն իր կուռ կիրեռով վարար . . . :»
Օրիորդը, ժպտուն, պատասխան չի տար :
— « Հապա Երբազզած, յուզիչ Բիեռ Լորի՞ն
« Ու ճամբորդելով աշխարհի շոր դին
« Նկարէ զան այնքան բանասենդօրէն . . . :»
Ժպտուն, պատասխան չի՛ տար ինձ նորէն :
Կը շարունակիմ.


— « Հապա Ռոլինա՞յ,
« Ու ահաբեկիչ կոչեր կը բանայ,
« Մահուան ժան տեսիլն հեղնէ անդպար . . . :»
Օրիորդը, ժպտուն, պատասխան չի տար :
— « Ձե՞՞ կարդար—թի՛f, թա՛f, զարնէ սիրս ուժգին
« Սիեֆիկիչ, Խպսին, Թիենիսիլն, Բուլեֆին,
« Կամ Մարսէլ Բրէվո, Ժիբ, Պուրծէ, Գօբէ . . . :»
Օրիորդն, աջ ձեռնով ձախը կը ըրփէ . . . :
— « Բոլ Էրվիկօ, Ռուրան, Լալտան, Գուրըրլին,
« Նորերէն, որոնք տակաւ կը փայլին,
« Ո՞րն է որ լզձեղ կը հետարքէ . . . :»
Օրիորդն իր սիրուն ժիրը կը մերէ :
— « Ձեր նախասիրած ո՞րն է վիպասան,
« Տիւմա՞ Ժիւլ Մարտի՞ Տօսէ, Մօքասա՞ն,
« Բոլ Տը Քօ՞ Օնէ, Ֆելլյէ, Ռոպիսա՞ . . . :»
Օրիորդն անուշիկ - պշո՞ւ - կը փրունցայ . . . :
Ու մի՛շ կը լրու. ես՝ միշ կը խօսիմ.

— « Բոլ Ասան, Լօնպա՞ր, Լորկ՞ն, Ալպէր Սի՞մ,
« Հանելի՞ են ձեզ Մաս Նօրտառ, Նիչէ . . . :»
Օրիորդն, անխօսուկ, ժիրը կը խնջէ :
— « Նարօպրիանի ոնն ազնիւ ու սեզ
« Ձե՞ հրմայած ձեզ, կ'աղաչեմ, բսէ՛f.
« Գորնէյի մասին ձեր կարծիքն ի՞նչ է . . . :»
Կը բանայ բերանն ու . . . կը յօրանջէ :
« Պամաբաններէն՝ Թիեռ, Էտկառ Գինէ՝
« Մասնաւորապէս ձեր հաւնածն ո՞րն է,
« Միւըլէ, Կիզօ՞ Թէ՞ն, Տը Ռէմբրզմ . . . :»
Օրիորդն, անհամբեր, - ընը՞մ, - կը հազայ,
Եւ կը մեշէ . — « Դուրսն, ի՞նչ անպիտան օդ . . . :»
— « Անկապատեներէն ո՞րն է ձեզ ծանօր
Մերկլինեկի վրայ կարծիքն ի՞նչ է ձեր . . . :»
— « Թէրլիկի՞ վրայ . . . բան չեմ կարդացեր :»
Այս պատասխանէն ահուելի, վրաէմ,
Ճամբահար եղած . — « Ահ, Օրիորդ, կ'ըսեմ,
— Ու կը բաբախէ սիրս ուժգին թի՛f թա՛f —
« Ձեր տան մեջ ի՞նչ զիրք, ի՞նչ բերք կը կարդափ . . . :»
— « Պարոն, հայերէն՝ Փունչ կը կարդանի լոկ . . . »
— « Իսկ Ֆրանսերէն . . . »

(1905)



*Լուվր, Բարիզեան նորաձեռնեանց ամենամեծ վաճառատուն օլնէ, որ ձրիսապէս աշխարհի ամեն կողմէ ուզողին կը դրէ իր ապրանքներուն պատկերազարդ զնացուցակը (Catalogue).





Օ.Է.Թ.Է.ՌՍ ՊԱՐՊԱՀԵՑՄԱՆ

ՏԱՐԵՑՈՅՑ ՆԵՐՆ - ՊԱՊԻԿԵԱՆ - Բ. ՏԱՐԻ - 1906



ԴՐՈԶՄԸ

«Դաստիարակութիւնն է մարդոց մէջ տարբերութիւնն զնողը : »

Լ. Ռ. Ք.

ԳՐԵՑ Թ. Յ. ՊԵՐՊԱՀԵՑՄԱՆ



աս ըաներ կան որք մարդոց մէջ
տարբերութիւններ կը զնեն : Ոմն
աղնուական է, որ իւր ծնունդը կը
պարտի հին ու մեծանուն տոհմի մը, և այդ պատ-
ճառին համար արհամարհանօք կը նայի իւր դրաց-
ւոյն վրայ որ ոչ մի պատռոյ տիտղոս կամ ազ-
նուանիչ մասնիկ կը կցէ իւր ընտանեկան անունին
որ թերեւս դեռ իրմէ իսկ կը սկսի : Մի ազ ոք
հարուստ է, իր ծնողքէն ժառանգեր է ուկրոյ կոյ-
տեր կամ ինքն իսկ ճարտարական կամ առեւտրա-
կան յաջող ձեռնարկութեանց շնորհիւ կրցած է
զիգել պատկառելի հարստութիւն մը, և այդու-
ժնած առեն գտած է կամ յետոյ շինած է իրեն
ընկերական նկատելի կացութիւն մը, որով իրա-
ւունք ունենալ կը կարծէ — և իր շուրջը ա'նքան
շատեր կը հաստատեն զինքը իր կարծեաց մէջ —
մեծ խորհրդ մը տեսնելու իր և այնպիսեաց մէջ որք
դժուարաւ կը հայթայթեն իրենց օրապահիկը և

որոց հետ շփուելէ կը զգուշանայ առ ահի աղտուակու իր ձեռքը կամ հանդերձը։ Մէկը գեղեցիէ։ բնութիւնը ֆիզիքական ձիքեր առատօրէն շապահը է իրեն։ բարեհեւ հասակ մը, առոյգ ու կորովի կազմ մը, առատ ու աղուոր մազեր, կենդանի ու հրապուրիչ աչքեր, վարդափայլ երեսներ, անոյշ ձայն և ձկուն ու ներդաշնակ շարժուձեւեր հաճոյք մը կ'ընեն իր ներկայութիւնը և, բաղդատամբ տգեղ ու չնորհազուրկ ծնածներու, որք բնութեան խորթ զաւակներն են կարծես, կը թոփ վերաբերիլ մի տարրեր ու գերազանց ցեղի, աստուածներու սերունդէ մը կարծես բղխած ու զակի։ Եթէ կի՞ն է, իր ճակովին վրայ թագովլ մը ծնած է այն։ իսկ եթէ այր, դարձեալ իր գեղեցիութիւնը կեանքի մէջ յանձնարարականն մէ իրեն որ շատ յաջողութեանց դռներ անջան պիտի բարենայ իր առջեւ, լոկ այն հաճոյալի տպաւորութեանն համար զոր իր չնորհալի կերպարանն ու ձեւերը պիտի թողուն անոնց վրայ որոց պիտի մօդոց մէջ անհաւասար բաշխումէն բնութեան մտաւորական ձիքերուն, քիչ կարեւոր են։ այս ոք աւելի ուշիմ, աւելի փայլուն յիշողութեան մը տէր, աւելի վառվուն երեւակայութեամբ մ'օժառուած, աւելի սուր դատողութեամբ մը զինուած ի բնէ, մինչեւ ուրիշ մը իմացական տկար կարպայքարին համար, անգործ ուղեղ մը, ամպամած միտք մը, անհաւասարիմ ու դանդաղ յիշողութեամբ մը։ Միթէ այս ամէնքն բարդ է իր հետ կեանքի միտք մը, անհաւասարիմ ու դանդաղ յիշողութեամբ ի բնէ նուր իրունքն չե՞ն դներ, նպաստաւոր անոնց քով նկուն ու նուեմ դիրք մը՝ հակառակ դասերուն։

Սակայն Լոք, անդպիացի իմաստասէրը, կը

թուի առ ոչինչ զրել աղնուականութեան, հարըստութեան, ֆիզիքական ու մտաւորական բնատուք ձիքերու խարութիւնները և մարդոց մէջ ապրութիւն դնող գլխաւոր հանգամանք ընդունիլ դաստիարակութիւնը։

Ստուգիւ Լոք իր «Մտածուրիսնի դասիարակութեան վրայ» գրուածին մէջ ըսած է։ «Կը կարծեն թէ կրնամ վստահացնել որ հարիւր անձանց վրայ կամ ինսուն անձեր որք են ինչ որ են, լու կամ դէ՛, օգտակար կամ վեստակար ընկերութեան, իրենց ստոցած դաստիարակութեամբն։ Անզէ՛ց է որ յառաջ կուգայ մարդոց մէջ մն'ծ տարրերութիւնը»։ Լոք իրաւունք ունի զրեթէ զանց ընելու մարդոց մէջ խարի դնող ուրիշ պատճառները և ծանրանալու մանաւանդ դաստիարակութեան վրայ, մարդոց վրայ որոցիչ բուն զրոշմը դնելու կարողութիւնը անո՞ր ընծայելով։

Մենք կը կարծենք թէ ունի։ Արդարեւ ի՞նչ է աղնուականութիւնը։ — Յաւակնութիւն մը, ընկերական պայմանադրութիւն մը, սին տիտղոս մը։ Բնութեան առջեւ անշուշտ չկա՛յ աղնուականի ու անազգւոյ խարիը։ ամէն մարդիկ կը ծնին բնութեան զաւակ, հաւասարապէս իրաւոնք ունեցող անոր չնորհներուն, և եթէ մէկը ուրիշէ մ'աւելի փայտիայուած ու նախասիրուած նկատուի անկէ՛ անշուշտ ատիկա աղնուական հօր և մօր ծնունդը չէ հարկաւորապէս։ Ի՞նչ նուեմ պայմաններու մէջ կը ծնին շատ անգամ բնութեանէն ճոխարար օժտուած աղաքը, և ո՞չայի անդամներ սնդուած ու ժամանուած զարդարութեան զաւակնութեանց ու կարծեալ իրաւոնքներուն վրայ, և շարունակելու հաշեալ իրաւոնքներուն վրայ, և շարունակելու համար իր խունկն ընծայելու անոր՝ ծշմարիտ աղ-

Նուռոթեան մը , այն է ներքին ու ինքնայտուկ արժէքի առհաւատչեայներ սկսաւ պահանջել՝ վու խան ցեցակեր մագաղաթիներու և պապենական հնացած անուններու : Գիտենք թէ Պօալո ի՞նչ սուր ծաղրանքով կը խայթէր իր ժամանակի արժանազորկ այլ գուող ու մնապարծ տոհմիկ երիտասարդութիւնը . կ'ըսէր անոր համար . « Կը հաւանիմ որ սմոր հնօրեայ նախահարց արութիւնը նիւթ մատակարարած ըլլայ վաղեմի քրօնիկագիրներուն , և թէ կապեաներէն մին՝ անոնց անոնք պատուելու համար՝ երեք շուշանածաղիկներով պճանած ըլլայ նոյա վահանակը . ի՞նչ բանի կը ծառայէ անօգուտ փառքի մ'այդ սին գէզը , եթէ ինքն հիմայ , պատմութեան մէջ հոչականուն արդքանի գիւցադներէն , այլիւս ոչինչ կրնայ ի հանդէս բերել աշխարհի առջեւ բայց եթէ որդերէն խնայուած հին ու մին մագաղաթիներ . եթէ , թէպէտ արդարեւ աստուածային աղբիւրէ մ'ելած , այդ վեհածնունդ ծագումը ի սուտ կը հանէ իր վրայ իր սիրու , և ախմար գուողութիւն մը միայն ունենալով մէծ՝ թոյլ ու մեղի անգործութեան մը մէջ կը քնանայ : » Ճշմարիտ խոփր մը և ճշմարիտ մնաթիւն մը չի կրնար հիմնել ուրեմն լոկ ծնունդը , ու միայն անոր վրայ հիմնուած ու երբեմն օրինաւոր համարուած գասակարգական խարութիւններ և իրաւունքներ տակաւ մերժուեցան , իրբեւ ապօրին և հիմնաղորդ , լաւագոյնս ըմբռնուած ընկերային իրաւարանութեան մը առջեւ , բարձք և պաշտօնք ապացուցեալ արժանիքին վերապահուելով և ոչ թէ աւելի կամ նուազ կեղակարծ արիւնի մը որ աղնուօրէն խաղար մարդոց երակներուն մէջ :

Հարսաութիւնը գէթ ինքնին չի դներ կարեւոր ապրերութիւն մը մարդոց մէջ , երբ նա իր սահմանովն խոկ կարողութիւն մը , զօրութիւն մ'է ,

որով անոր ստացումն ու անկէ զրկումը զօրաւորներու և անզօրներու իրարմէ որոշապէս տարբեր գասակարգեր կը սուեղծեն : Դարձեալ ըստ ինքեան ո՛չ : Երբ հարսաութիւնը արդիւնք է անհատին խմասուն , զարգացամիտ և պարկեշտ գործունէութեան , կը խոստովանիմ որ պատուոյ տիտղոս մը կրնայ ըլլալ զայն ստացողին , բայց խոստովանեցէք դուք ալ ձեր կարգին որ այն առեն լոկ հարսաութիւնը չէ՝ ինքնին որ այդ պատուին կ'արժանացնէ հարսաութ , այլ այն խելացի և ուղղամիտ եղանակակը որով այդ հարսաութիւնը չահուեցաւ . ըստէ պատուոյն առիթ իմացական ու բարոյական յատկութիւններն են որովք հարսաացեալն առակաւ իր տնտեսական վիճակը բարձրացուց , նիւթական զօրութիւն մը գոյացուց իրեն համար : Նոյնը կրնանք ըսել սմմիտ ու շուպ ժառանգութին որ աղտոտ ճամբաներու մէջ չիմարաբար ու խայտառակօրէն կը փացնէ իւր հարց հարսաութիւնը , կամ այն հարսաութն համար որ ամէն միջոց լու կը համարի իր գանձը ճոխացնելու և չի խրաչիր բնաւ խզի ու պատուոյ դէմ ո՛ր և է արարքէ , բաւական է որ չան մը հայթայթէ իրեն , ոսկի մը յաւելցնէ իր զբամարկզին մէջ : Այդպիսի ամօթալի աղբիւրներէ բզիսող հարբառութիւնը բնաւ պատուաբեր խոփր մը չսաեղծելէ զատ իր տիրոջ համար , մարդկային ընկերութեան ներկայացուցած աստիճաններան վրայ , բոլոր իր ճոխութեան բնանդերձ , զինքը վա՛ր վա՛ր կը մզէ , շա՛տ աւելի ստոր քան այն աղքատը որու մաքուր է ճակատը և որ իրեններուն նետ անդորր ու անարաս խզմով մը կը ճաշակէ չորաբեկ հայը զոր ճակատն քրանքովն ու արդար վաստակովը չահցաւ : Ուրեմն հարսաութիւնը չէ ըստ ինքեան որ ճշմարիտ ապրերութիւն մը կը զայն մաղուր է ճակատը և որ իրեններուն նետ անդորր ու անարաս խզմով մը կը ճաշակէ չորաբեկ հայը զոր ճակատն քրանքովն ու արդար

ւունք ունի անդլիացի իմաստամբը :

Բայց բնական տրամադրութիւնները, Փիզիքական թէ իմացական, անոնք նոյն իսկ մարդոյն մէջ, անոր մարմնոյն ու հոգւոյն մէջ կը ստեղծեց նպաստաւոր կամ աննպաստ տարրերութիւններ, որոնց մով էապէս, բնապէս պիտի դանազանին մարդիկ իրարմէ ի լաւն կամ ի յոտին, յօդտակարն կամ ի վեսակարդն : Այս, բայց պէտք է դիսնալ թէ ոչ մէկ առաւելութիւն զրեթէ բնութիւնը կուտայ մեղ դարդացեալ ու կատարեալ վիճակի մէջ, այլ իրեւ սերմ մանաւանդ, իրեւ ընդունակութիւն ու տրամադրութիւն, և ապրելու կերպը, մեր կարողութեանց կիրարկման եղանակն է որ պիտի աճեցնէ կամ չքացնէ սերմերը, պիտի դարդացնէ կամ ամէլ ընդունակութիւններն ու տրամադրութիւնքը : Նոյն իսկ Փիզիքական ընասաւոր գեղեցկութիւն ու կորով՝ մատաղ ու դարդացուն հասակիներու մէջ իմաստոն և զգոյշ խնամքի կը կարօտին աճելու և բնութեան սահմանած չափին ու կատարման համեմերու և անվթար մնալու համար, գէթ որքան հնար է բնական կարգին մէջ : Ու յետոյ, արտաքին չնորհ ու գեղեցկութիւն, զորս չոգեւորմբ ու չաղնուացներ կրթութիւնը, որքան կը կորմնցնեն իրենց արժէքէն, մինչեւ կրթեալ անգեղեայն իրաւամբ նախամեծար համարել քան անկիրթ գեղանին : Մտաւոր յատկութիւններն ալ այնպէս չ'ն : Առանց կրթութեան՝ ամենէն փայլուն իմացական ձիրքեր կը թօշնին, կարողութիւններ կը թիին, ընդունակութիւններ ամուլ և անպտուղ կը մնան, իսկ ընդհակառակն չափաւոր և համեստ զօրութիւններ կրնան մարդանքով ու ջանքով մեծնալ և նոյն իսկ աւելի արդիւնաւոր հանգիստանալ քան ի բնէ ուժեղ բայց անվնամ լքուած կարողութիւնները : Մոլութիւններ կրնան խաթարել ու անգարման տկարութեամբ վարակել ամեւ-

նէն գեղեցիկ ու առոյդ ծնած մարմինը, և կրնան նաեւ ապչեցնել ամենէն փայլուն իմացականութիւնը : Աննախատես անխմաստուն զանցառութիւնը ամենէն լուսալիր աչքը յաւիտենական մութով կը լնու, և անմշակ մնացած միտքը, թերեւս հանձար մը, բեղմնալից զաշտ մըլլալու սահմանուած բնութենէն, տղիտութեան փուշերով և նախապաշտրմանց մացաներով մոլեալ վայրենի գետին մը կը դառնայ : Ո՞ւր մնաց տարբերութիւնը օժտեալին ու անօժիտին, երբ համեստ ու անժառանգ ողին ջանքին ուժով կրնայ իր ետեւ ձգել բնութեան ժառանգաւոր ճոխածին զաւակը : Էսուած է թէ հանձարը բնածին կարողութիւն մ'է, որով պահուած էակը, առանց ձիգերու պէտք ունենալու, արագ կը թեւակոխնէ արուեստի և գիտութեան բարձրագոյն մարզերը և իր հեշտ ու հրաշալի արդիւնքներով չուսալ իր վրայ կը հրաւիրէ տիեզերաց զարմացումը : Սակայն պէտք չէ խարուիլ . չկայ հանձար մը որ պէտք չունենայ ձիգերու . Նոյն իսկ հեղինակ մը հանձարը սահմանած է « ձիգեր ընելու կարողութիւնը » : Բոլոր հանձարի ծնունդ եղող հրաշակերտ գործերը, որոց կատարելութիւնը որ այնքան հեշտ կ'երեւի մեղ՝ կը զարմացնէ զմնզ, արդիւնք են յարաւետ աշխատութեամբ կատարելագործուած կարողութեանց, յամառ ձիգերով արգասաւորուած ընդունակութեանց : « Երկարաւեւ համըերութիւն մը » կը կոչէր Պիւֆոն հանձարը : Բանաստեղներուն ներդաշնակ առղերը, պերճախօններուն հեշտ ու դիւրաթաւալ պարբերութիւնները, արուեստագէաներուն այնքան ընական երեւցող ստեղծումները, գիտնոց գիւտերը, որքան ալ նուիրական հրովր բորբոքած ու մուսաներէն ներջնուած համարուին անոնց հեղինակները, մի՛ խարուիք, երկարաւեւ ու անխոնջ ձգանց արտադրութիւնք են, — միշտ երկունք կը

կանխեն ծնունդը — , զի նախ լնդ երկար հարկ
եղած է անոնց ուսմիլ իրմաց գործոյն արուեստա-
կան ու աեսական մասը , փորձի նախնական շրր-
ջաններ անցունել , և յետոյ ի ծնանելն՝ յղկել
ոլորկել անդու գործն իր գեռ թերակասար վի-
ճակին մէջ՝ ճղամբ տալու համար ուսոր այն կա-
տարելութիւնը որ այնքան անձիգ ու իբր ինքնա-
րեր կ'երեւի :

Նախնական ու հիմնական ճիզը դաստիարա-
կութիւնն է , այսինքն այն ճիզը զոր այլք և մենք
եւս , ու մանաւանդ մենք ի գործ կը դնենք մեր
կարողութիւններուն վրայ՝ զանոնք ներդաշնակօրէն
զարգայնելու համար , մեր միաքը մշակելու , մեր
սիրան աղնուացնելու , մեր մարմինը առողջ և կո-
րութի ընելու համար : Դաստիարակութիւնը , ա՞ն է
ձմարիտ աղնուականութիւնը , որ մաքի լոյսին և
զգացմանց աղնուութեան մէջ կը կայանայ : Ա՞ն
է ձմարիտ հարստութիւնը , վասն զի նոյն իսկ
հարստութեանց արտադրիչն է , անոնց պահպա-
հողը ու զարգայնողը , ու զարգայեալ միտքն է որ ,
հարստութիւնը արտադրելէ յետոյ , կրնայ խորհիլ
լուագոյն եղանակը սնոր օգտակարակէս գործա-
ծութեան : Ա՞ն է որ բնատուր կարողութիւններն ու
ձիրքերը կը պահպանէ ու կը մշակէ , թերութիւնները
կ'ուղղէ , տկարութիւնները կը զօրացնէ : Անո՛վ
բարերեր տաղանդները ու բարեկիր նկարագիրները
կը կազմոյն , և ա՞ն կուտայ անհատներուն , և նոյն
իսկ աղգերուն , այն ստոյդ զրոշմը որով անոնք
երարմէ կը տարբերին ձմարիտ մեծութեան տատի-
ժաններան վրայ :

Եւսկիւտար , 4 Մայիս 1905



ՀՅՈՒՆՏ Ա.ՍՍ.ՏՈՒՐ

ՏԱՐԵՑՈՅՑ ՆՇԱՆ - ՊԱՊԻԿԵԱՆ - Բ. ՏԱՐԻ - 1906



ՅԱԿՈԲ ՊԱՐՈՆԵԱՆԻ „ԹԱՏՐՈՆ”Ը

Գրեց՝ ՀՅՈՒՆՏ Ա.ՍՍ.ՏՈՒՐ



Ա.ՏՐՈՆի առաջին թիւը հրապարակ ելած է 1874 Ապրիլ 6ին։ Մեղուի նախկին խմբագիրը, Յարովին Սրվաճեան, թոքախտէ բնեուած և անկողին ինկած Խասդիւղի մէջ, ձրես բար փոխանցած էր իր արտօնատէրի լրաւութք Յակոբ Պարոնեանի, որ Թատրոն անունով կը ոկուր հրատարակել զայն։

Պարոնեան, որ նորեկ մը չէր դրուիանութեան համար և երգիծաբան լրագրողի գեղեցիկ ասաղանդ մը ի յայտ ըերած էր արդէն Եփատի և Մեղուի մէջ, իրր յաւածաբան Թատրոնին կը հրատարակէ յարերգութիւն մը ժամանակին Կ. Պոլսոց հայ լրագրութեան վրայ։ Այդ միջոցին, մայրաքաղաքին մէջ լոյս կը տեսնէին տասնի չափ թերթեր, որոնց խմբագիրները գերձակի մը խանութը հաւաքուած կը ներկրացնան։ Մանզումիի խմբագիրը, որ 1874ին սկրզբները պատկերագարդ նույշիթ թերթ մըն ալ կը հրատարակէր, «մկրատ և ձեռին կանանց համար նոր հագուստներ կը ձեռէ»։ Մասիս «կողով ի ձեռին բառարանին մէջէն պղտիկ բառեր կը ժողվէ»։ Օրագիր «Տրամասնութիւն մը կը թղթատէ»։ Հոն հոն նաեւ Փունջի, Դիտակի, Աւետարերի, և որիշ թերթերու խմբա-

գիրներ, ամէնքն ալ իրենց նկարագիրը յատկա-
նշող զբաղման մը մէջ։ Թատրոն իր մուտքը կ'ընէ-
հանդիսաւորապէս ձևաբառութեան կերպարանքով։
Մանզուրի կը մօտենայ անոր.

— Օրինակ, ապրիլ ամսու մօտային նոր շըր-ջաղգեստ մը կարմէմ ձեզի:

— Ա՛յ, կ'ըսէ ձշմարտութիւնը, ես հագուստ չինել տալու համար չեկայ հոս. ասկից զատ ես հագուստի պէտք չունիմ. ես այն տան միայն աղէկ հագուստ կ'ըլլամ, երբ բան մըն ալ չհագնիմ,

Այս սրամիտ ու յանդուզն յայտաբարութեամբ
է որ մեր մեծ երգիծաբանը կը սկսի Թատրոնը : Իր
նշանաբանը պիտի ըլլայ մոլութիւնները ձաղկել,
կեղծիքը դատափետել, առանց ձեռնոցի, առանց
արդուգարդի, բոլորովին մերկ, ինչպէս կը վայէ
ծշմարտոթեան : Եւ իրաւ ալ, հաւատարիմ իր
նպատակին, կը սկսի իր բարոյախօսի դերը, սաւ
առնելով՝ արծուաթեւ՝ ժամանակին մեր կրօնաւ
կան, զրական և ընտաննեկան կեանքը շահագրգ-
ռող իննշիբներուն վրայ, անսպաս գուարիթամտու-
թեամբ :

Թաւրոնի տնօքէն-խմբագրին ամէնէն բարկ
երգիծանքները իր պաշտօնակիցներուն կ'ուղղուին,

Սովոր չի փախցներ բնաւ սրախօսութեամբ
ընդգիմարաննելու Մանզումիի խմբագրին, որտես
հետ յաճախ համակարձիք չէ։ Նոյն ատենաները
Պատրիարքարանի մասուկը պարաքի տակ էր։ Ար-
քանամ փաշայէ և Սարգիս պէտէ կը իմադրուէր
վճարել այդ պարաքը, որ կը հասնէր 4000 սոկիի։
Կարապետ Փանոսեան կը բողոքէր այս բանին դէմ։
«Եթէ, կ'ըսէր յօդուածի մը մէջ, միայն երկու
հոգի վճարէ այդ պարաքը, մեր տոհմակիցներուն
անհոգութեան դաս մը տուած կ'ըլլանք։» Թատրոնի
խմբագրիը, աւելի դրական, կը քննադատէր այս
կարծիքը և կ'ըսէր. «Անսարբերները, առանց այդ-

դասին, անհոգութեան մէջ պիտի լողան դարձեալ և Պատրիարքարանի սնտուկն ալ . . . պարտքի մէջ :)

Ուրիշ անդամ մը Փանոսեան ըսած էր թէ
ապշութիւն, աւանակրտիւն է տուտ լուրերու հաւ-
ապը: Պարոնեան այս առթիւ սիրուն վանդրէցի
մը կը գրէ, որուն սկիզբը Բաղասմի կենդանին
ուղղուած հետեւեալ տողերը կ'երեւան. «Երգեա՛
ինձ, աւանա՛կ, նստարան խոնարհութեան, տիւ-
պար յամառութեան, քաջածնոտ էակ, արարա՛ծ
հրեշտակատես, կենդանի՛ աստուածակիր, երգեա՛
ինձ:» Այս դիւցազներգական նախերգանքէն ետքը,
խօսքը կուտայ Սւանակին, որ սապէս կը սկսի.
«Մեծապատիւ Պարոնեան էֆէնափ, — Զեմ կրնար
առանց արտասութիւնկատել մեղի եղած անար-
գանքը: Մենք որ Ծալկազարդի օրը բոլոր կեն-
դանիներէն զեր ի վերոց անցած ենք, ոյս օրուան
օրս գրեթէ ամէնէն կը նախատուինք:» Սւանակը
կը բողոքէ Փանոսեանի դէմ, որ աննպաստ ակ-
նարկութիւն մը ըրած է աւանակներուն, մինչեռ
պատուարեր բաղդասութիւններ ալ կրնան ըլլալ
իրենց մասին. այսպէս կարելի է ըսել աւանակի
պէս աշխատող, աւանակի պէս սկզբունքի ժեր:
— «Աշխարհի վրայէն չպիտի ջնջուին աւանակները,
կը գոչէ Սրկադիոյ սոխակը. աշխարհ քանի կայ ու
կը մնայ, աւանակներն ալ կան ու կը մնան,
առանց աւանակի աշխարհ չկայ, ինչպէս որ առանց
աշխարհի ալ աւանակ:»

Թաւրոնի խմբադը ըլ խիստ լեզու մը կը գործածէ նաեւ Մասիսի դէմ, որ յաճախ առարկայ կըլլաց իր հեղնանքին։ Ամէն առթի մէջ կը ծաղրէ մանաւանդ անոր հին լուրեղը։ « Խւթիւձեան Օրագիրին պէս ամէն օր կարծիք չի փոխեր, կ'ըսէ Պարնեան, և իր այս կարծեաց հաստատութիւնն աւելի յայտնի կ'երեւաց իր հրատարակած արժեաւ

թըղթոց գիներուն վրայ, զորս կը փոխէ . . . ամիսը կամ երկու ամիսը անդամ մը միայն : » Ուրիշ թիւի մը մէջ, իւթիւնեանի տուած մէկ կանխահաս լուրին առթիւ կը գրէ . « Մեր հայրերէն մնացած աւանդութիւն մ'էր որ Մասիս լուրերը ուշ կուտայ: Զարմանապի է տեսնել որ Մասիս այս անդամ քաւր է իր այս մեղքը Հիւնքեարպէյնտեան Արժ. Տէր Յովհաննէս Հայրը երեքարթի օր Բարիգ զըր կելով, մինչդեռ նորին Սրբանապատութիւնը երեքարթի իրիկուն հոս էր և Մասիս կարդալով կը լսէր. — Ինձի հետ մի՛ խօսիք, ես հոս չեմ. ես այսօր Բարիգ գացի: » Այստեղ չեմ ուզեր աւելի ծանրանալ այն երգիծանքներուն վրայ, զորս Պարսկան յաճախ կ'ուղղէ 1874ի հայ խմբագիրներունապիտին. անմոց պերճախօս համազրութիւնը կը գտնէք Զոցերուն մէջ: Բայց միայն թէ Պարմեան կը ճանչնար ու կը գնահատէր այն ծառայութիւնը զոր իւթիւնեան կը մատուցմանէր աշխարհարպին, օտար բառերու համազօրները գտնելով հայերէնի մէջ զոր քաջ գիտէր, գործածութեամբ նուիրագործելով կարդ մը հին բառերու արուած նոր առումները, և յաճախ նոր բառեր ալ կերտելով գրաբարի բարդութեան և ածանցման օրէնքներուն համաձայն:

Օրագիրի խմբագիրն է սակայն որ ամէնէն աւելի կը զբաղեցնէ զինքը: Թատրոնի մէջ հրատարակած է այդ նշանաւոր պերճախօս հրապարացերին կենսագրականը, զոր չէ զետեղած Զուռուն մէջ, որովհետեւ 1880ին Խօճասարեան մեր էր արդէն և Զոցերը այն ժամանակ ապրող պարունակի: Օգսէն Խօճասարեանի կենսագրականները միայն կը կանը կ'արդէր որ ամբողջապէս արտասարուէր: Հուն իյայտ եկած է առաջին անդամ Պարոնեանի մեծ տաղանդը երգիծանքով գրուած կենսագրա-

կաններու սեռին մէջ, ուր իրմէ ետքը ոչ ոք գերազանցեց դայն:

Պարմնեան կը ցափ նախ որ չէ կրցած գանել, հակառակ իր լրած ջանքերուն, Խօճասարեանի ծննդեան թուականը, սակայն ծերունի մը ըսած է իրեն. « Օգսէնին ծնած օրը Սամաթիոյ սրձարաններուն մէջ կ'ըսէին թէ աշխարհի վրայ փորձանել մըն ալ աւելցաւ: »

« Օգսէն խիստ նիհար ծնած ըլլալով, կը գրէ մեր սրախօս կենսագիրը, ծնողքը կարծեցին թէ հիւանդ է, և վախնալով որ չըլլայ թէ առանց կուռնքի մեռնի, շուռ մը մկրտել տուին զինքը: Երբ մկրտող քահանայն կը հարցնէր թէ « Երափայն վինչ ինդրէ », և երբ կնքահայրն « Հաւատք, Յոյս, Սէր » կը պատասխանէր, մէկչն ի մէկ Օգսէն նետվեցաւ և ըսաւ թէ՝ երափայն օյի ալ կը ինդրէ: Սաով Օգսէնը կենդանութեաննշան տուաւ և ներկայ եղողներուն արտամութիւնը ուրախութեան փոխեց: »

Պարմնեան զուարթացուցիչ ակնարկութիւններով կը պատմէ թէ ինչպէս Խօճասարեան աշակերտած է Սամաթիոյ Ս. Սոհակեան վարժարանին, ապա 1856ի սրատերազմի միջոցին թարգման եղած է անդիխացի զրապետի մը քով, յետոյ ուսուցիչ եղած է Հիւանդանոցին մէջ, և հուսկ ուսումն օգնական խմբագիր Մանգումիի: « Եսոս մը յօդուածներ զրեց հոն, որոնց ամէնն ալ աղէկ Ընդունելութիւն գտան ժողովուրդէն: Ամուսնութեան վրայ ալ անաւէկ յօդուածներ զրեց որ քանի մը օր ետքը ամէն մարդ սկսաւ կնիկը ձգել: »

Երբ փաստաբան, Խօճասարեան նշանաւոր է կնաթողութեան դատերուն մէջ. « Որչափ որ կմիկը ձգել ուղող ըլլար նէ՝ չոնչը Օգսէնի զրասեներակը կ'առնէր: . . . Օգսէնի փաստաբանութեանն միջոցին եթէ շարաթը երկու հարմակք ըլլար, հա-

բիւր կնաթողոթիւն կ'ըլլար: Եւ եթէ Դատաստանական Խորհուրդը փաստաբան չընդունելու դրութիւնը չ'ընդունէր՝ պայօք կնիկէն չըաժնըված մարդ չփափի կրնայինք տեսնալ:

Խօճասարեսն տարիուկէս Մանզումիի մէջ օգանական-խմբագրութիւնն ընկելէ ետքը, կառավարական արտօնագրով իր անուան փոխանցել կուտադ Մարկոս Ազարէգեստնի Ծիլնը, զոր կը սկսի հրատարակել իշր օրաթերթ: «Այս թերթին մէջ, կ'ըսէ կենսագիրը, Օդուէն այնքան շուտ սկսաւ փոխել իր կարծիքները որ ընթերցողը ա՛լ ետեւէն չկրցաւ հասնիլ:» Ուրիշ յօդուածի մը մէջ թատրոնի խմբագիրը կը գոչէ. «Օրագիրի մէջ այնչափ հակառակիւն կայ, որչափ որ աւազ ծովափը, որչափ որ գաւակ ունի Հայր Արքահամը, որչափ որ փոչի կայ Պատրիարքարանի սանդուղներուն վրայ . . .»

Թատրոնի հրատարակութեան միջոցին Գէորգ Այգիազեան կը շարունակէ իր Մանուլը և Յակոբ Համեան կը սկսի իր Միմուր. հայ լեզուի մասին երկուքին ալ ունեցած տգիտութիւնը կամ չունեցած հմտութիւնը առիթ կուտայ Պարոնեանի դառներգիծներու ուղղել անոնց: Իսկ Փունջը իր ամենորեայ քաւութեան նոխաղն է. չկայ առիթ որմէ յօդտուի իր չարաձմիութիւնները արձակելու «Փունջ պատուական լրացրոյ խմբագիր Մեծապատի Համբարձում էֆէնտի Ալածանեանի:» Լրացիր, որուն խմբագիրն է Նիկոլոս Թիւլպէնտեան, իր ծաղրին առարկայ կ'ըլլայ, որովհետեւ ֆրանսերէն այնպիսի բառեր՝ կը գործածէ որոնց հայերէնը կայ. Թատրոն կը հրատարակէ այդ բառերուն ցանկը «Բառարան ի պէտո Լրացրի» վերնազլին տակ: Սրմաշու վանքին մէջ հրատարակուած կրօնական և բանափական հանդէսը, որուն խմբագիրն էր Խորէն վարդապետ Աշեղեան՝ յետոց Պատրիարք

Կ. Պոլսոյ, իր մէկ բանագողութեան համար կը քննագատուի Թատրոնի մէջ, և Կիլիկիայի խմբագիր Տոքթուր Մանուկը իւթիւնեան կ'արժանանաց Պարոնեանի մէկ հակիրձ կենսագրականին, որ ապահովաբար ամէնէն մեղմը չէ:

Իր ժամանակակից բոլոր խմբագիրներուն մէջ միայն մէկուն կը խնայէ, Մատթէսս Մամուրեանին՝ որուն համար մեծ յարգանք ունի: Արեւելքան Մամուլի խմբագիրը 1874ին արգէն սկսած էր Շահնուր ծածկանանով թղթակցութիւններ գրել, որոնց հեղինակին ո՞վ ըլլալը երկար ատեն խնդիր եղած է Կ. Պոլսոյ Հայոց մէջ: Շատեր կամկածուած էին, մանաւանդ Բարթող Թելեան, որ Մամուրեանի մամրիմն էր, և հաւանօրէն Պատրիարքարանի շրջանակներուն վերաբերեալ անփայ տեղեկութիւններ կը հազորդէր անոր՝ իր նամակներով, և այսպէս Պոլսէն գրուածի Երեւոյթը կը արտելին այն նշանաւոր թղթակցութեանց, որոնք 1872էն մինչեւ 1880 մեր ժամանակագրութիւնն վրայ այնքան լոյս կը սփառն, և այնքան գեղեցիկ էնէր կը պարունակիմն բարձր գրականութեան: Այս թղթակցութեանց մէջ Թատրոնի խմբագիրը միշտ յարգանքով կը յիշուէր:

Մամուրեան Պարոնեանի մասին ինձ ողջած էր մէկ կարեւոր նամակին մէջ, այդ ժամանակին Վրայ խօսելով, կ'ըսէ. «Ինչպէս յայտնի է, Թատրոնն մինչեւ անդամ անստարբերներ կը լափէին: Թէւ անձնապէս անձանաթիւ իրարու՝ փոխադարձ համակրութեամբ կապրած էինք, մեր պաշտօնակցութեան և գաղափարակցութեան բերմամբ, այնպէս որ նա մնորթ Շահնուրի գրածներէն կ'արտապէր և Արեւելքան Մամուլ՝ Թատրոնի:»

Լրագրողներու հանդէս գործածած իր ընդհանրապէս կծու ոճը չը քաշուեր գործածելէ նաև Պատրիարքարանի շրջանակին վերաբերող բոլոր

այն խնդիրներու մասին, որոնք առարկայ կ'ըլլա-
յին իր սրամտութեան ցայտագերուն։ Յաճախ խճն-
դիրներ կ'ունենայ կրօնական ժողովին հետ։ Կրդկ-
նամուսութեանց ցանկ մը կը հրատարակէ, և այդ
ցանկին վրայ բացատրութիւններ տալու համար կը
կոչուի կրօնական ժողովի ատեանը։ Թատրոն այս
առթիւ հրատարակած է երկար յօդուածներ, որոնք
այսօր ու եւ է շահեկանութիւն չունին։ Նոյնպէս
հրատարակած է երգիծական ու քննադատական
հատուածներ Աղթամարի Խաչատրու կաթողիկոսին,
Ամբրոսիոս վարդապետին, և Վանցի Պօղոս վար-
դապետին խնդիրներուն նկատմամբ, որոնք տա-
րիներով այնքան զբաղեցուցած են մեր թերթերը
և այնքան մելան սպառած։ Կարծեմ Պօղոս վար-
դապետին կ'ակնարկէ հետեւեալ մանրալուրը, զոր
հրատարակած է անոր խնդրոյն ամէնէն տաք միշ-
ջոցին։

- «Ուսկից կուգաս, Հայր Սուրբ՝
- ձամբորդութիւն մը ըրի։
- Ուր:
- Ուխտի գացի։
- Ուր:
- Սրմաշու Զարիմափան Եկեղեցին։
- Անկարելի է որ հոն գացած ըլլաս, ոււտ եռա-
— Ինչո՞ւ սուտ խօսիմ։
- Բլլալու բան չէ, անկարելի է։
- Ինչո՞ւ համար։

— Անոր համար որ եթէ Զարիմափան Եկեղե-
ցին գացած ըլլայիր, Եկեղեցին զքեղ անպատճառ
կը խափանէր։»

 1870ին խօսք կ'ըլլայ Ժառանգաւորաց Վար-
ժարանի մը հաստատութեան մասին։ Պարօնեան
իր բոլոր ոյժով կը բազոքէ այդ ծրագրին դէմ։
«Շատ անգամ ժառանգաւորները իրենց կոչման
չեն համակերպիր, կ'ըսէ։ Տասնըշորս տարեկան

տեսայ մը վարդապետութիւն սորմիւ կը սկսի,
քանին սէրը կը սկսի երգել, քսանըհմգին վար-
դապետութենէ կը վախնայ և երեսունին Հայր
Սուրբ ըլլալու տեղ հայր... զաւակաց կ'ըլլայ։»

Ուսումնական Խորհուրդը մանաւանդ առար-
կաց է իր խիստ քննադատութեանց և հեղնու-
թեանց։ Ուսուցիչ մը նարկիլի կը խմէ եղեր դպ-
րոցի մը մէջ, և Ուսումնական Խորհուրդը անպա-
տիմ թողեր է զայն։ «Կրթական քննիչ մը պէտք
է, կ'ըսէ Պարօնեան, ի վեր հանելու համար այս
կարգի դեղձումները։ Վարդապետանոցը հաստատ-
ուելիք չունի։ Սայոց աղբիւրները կ'ըսն թէ
Վարչութիւնը այս խնդրոյն կարեւորութիւն տալ
սկսեր է, սակայն կան խնդիրներ որ կա-
րեւորութիւն տրվելով կը լուծվին, կան ալ որ
սոսակ տրուելով կը լուծուին, և դժբաղդաբար այս
խնդիրն ալ վերջիններէն է։» Դպրոցները ողբակի
վիճակի մէջ են. զպրոցներէն ելլող աշակերանները
անգործ կը մնան։ Այս բոլոր պէտքերուն առջեւ-
Ուսումնական Խորհուրդը անտարքեր կը գտնուի,
կը քննանայ։ Ու Թատրոնի խմբագիրը Ուսումնա-
կան Խորհուրդի քունը կը հեղնէ ամէն ձեւով,
խմբագրականով, առեւտրականով, ծաղրապատ-
կերով, մանրալուրով։

Խմբագրականի մը մէջ կը գրէ թէ Ուսումնա-
կան Խորհուրդը «Մորիէսի եղբօրը տղան է։»
Առեւտրականի մը մէջ, խօսելով ափիլոնի վրայ,
կը գրէ։ «Ափիլոնի վրայ այս շարժու քանի մը
գործ միայն եղաւ։ Պարփարքարանը ափիլոնի
պայմանագրութիւն մը ստորագրեց վաճառականի
մը հետ... Ուսումնական Խորհուրդին կլեզմնելու
համար։» Երկու ծաղրապատկերներ ալ նոյնը կը
կրկնէն։ Մէկուն մէջ երկու հոգի կ'օրբեն քնացող
մանկիկ մը, որ Ուսումնական Խորհուրդն է։ Միւ-
սին մէջ Ուսումնական Խորհուրդի մէկ նիստը կը

պատկերանայ . երեք հոգի կը քնանան աթոռներու վրայ . չորրորդ աթոռը պարապ է . ծաղրապատկերին տակ գրուած է . «Պարապ աթոռին տէրն ալ փողոցը քնացած ըլլալու է :» Վերջապէս նոյն բնարանին վրայ է հետեւեալ մանրալուրը .

— «Հիւանդնիդ ինչպէս եղաւ :

— Առաջուան պէս է . բոլոր գիշերը չի քնար . մինչեւ տուտու կը հազայ :

— Քնանալու համար այնչափ դեղ տուի . օդուտ չըրաւ :

— Զըրաւ :

— Բնաւ չի քնանար կոր :

— Ամենեւին :

— Անանկ է նէ ասիկա Ուսումնական իյորհրդոյ անդամ ըրէք :

— Այդ բանը մինք ալ խորհեցանք , սակայն կը վախնանք որ այն տաեն ալ բնաւ չ'արթնար :

Ամէն անդամ որ լուր մը կը հազորդէ , թատրոն միջոցը կը գտնէ այդ առթիւ սրամիտ դիտողութիւն մը կամ խայթիչ ակնարկութիւն մը ընելու :

Սապէս , երբ Յովհաննէս Այլազովսկի 1874ի վերջը կ . Պոլիս կուգայ , Պարոնեան անոր գալուստը ձանուցանելու պահուն կը գրէ . «Այլազովսկի մեր Մանկումնի յօդուածներուն մեծութեամբը . . . համը ունի նկարչութեան մէջ . անոր ամէն մէկ պատկերը այնչափ գոյն ունի որչափ կարծիք ունի Օրացիր մէկ խնդրոյ մէջ :» Երբ Մշեցի Մամբրէ և լինակովու վանահայր կ'ընտրուի Մշոյ Ս . Կարաս պետի վանքին , թատրոն այս լուրը հազորդելէ ըսած է . «Երբ մէկը ինծի դէմ խօսի , բոլոր եկեղեցականներուն դէմ խօսած կ'ըլլայ :» Եւ յետոյ լուրը կուտայ սա ձեւով . «Հայոց բոլոր եկեղեցաւնորդ Մշոյ Ս . Կարապետի վանքին վանահայր

Պետրոս Դուրեանի մահէն յետոյ Յանձնաժողովը կազմուած էր անոր գործերը հրատարակելու և անոր գերեզմանին վրայ մահարձան մը կանգնելու համար : Գրեթէ երեք տարի անցած էր այդ մահէն ի վեր և դեռ մահարձանը կանգնուած չէր : Օր մը , Պարոնեան հետեւեալ հարցումը կը հրատարակէ իր թիրթին մէջ .

«Մեզ կը հարցնեն թէ վաղամեսիկ Դուրեանի մահարձանը ինչ տեսակ մարմարէ պիտի ըլլայ և ե՞րբ պիտի կանգնուի :

«Մարմարին տեսակը չգիտենք . կանգնուելիք չունի , այն գիտենք :»

Հետզետէ տասնեւակ մը թիւերու մէջ նոյն հարցումը կը կրկնուի նոյն պատասխանով :

Երբ կը լսէ թէ մահարձանը շինուած է , հարցումին ձեւը կը փոխէ .

«Մեզ կը հարցնեն թէ վաղամեսիկ Դուրեանի մահարձանին վրայ ե՞րբ ստանաւոր պիտի զրվի :

«Գրվի նէ կ'իմացնենք :»

Եւ քիչ օր ետքը մահարձանը կը կանգնուէր Դուրեանի գերեզմանին վրայ , պատշաճ արձանագրութեամբ :

Այս դրութիւնը , զոր Ֆրանսացիները Տու կոչէն , ուրիշ խնդիրներու մէջ ալ գործադրած է Պարոնեան , յաճախ միեւոյն հարցումը թիրթին երեք չորս տարբեր սիւնակներուն մէջ հրատարակելով . սակայն , մշտ նոյն յաշողութեամբ պատշաճ չին իր այդ սրամիտ հետապնդումները :

Իր ժամանակին գրական շարժումին հետապնդում է Թատրոնի խմբագիրը : Հրատարակուած կարեւոր գիրքերը միշտ ստարկայ կ'ըլլան իր ուշադրութեամ :

Այլազովսկի Գարբիէլ եպիսկոպոսի Հազար և մի առաջաւոր բանիը առիթ կուտայ իրեն անոր

պարունակած առածները ժամանակին դէպքերուն
և անձեռուն կիրարկել։ Ահա քանի մը նմոց
անոնցմէ.

Անխելք զիսին ձեռացը
Խեղն ոսքը ինչ կը բաւէ.
— Ռուսինեանի ձեռացը
Հայ լեզուն ինչ կը բաշէ։

Գինին զինովի ձեռին,
Թոշունը տրդի ձեռին,
Փողը տուլի ձեռին.
— Սուրբ Օբաբի ձեռին։

Զուրը աղբիւրեն,
Աղջիկ զաւակը մօրեն,
Խսկ մանչ զաւակը հօրեն.
— Զգաւորութիւնը՝ վարժապեսներեն։

Խսկին հարցուր ոսկերիչին
Զին ձի հեծող կորինին.
— Հին լուրերը Մաստինին
Սիսակները մեր Փառջին։

Մելքիսեդեկ վարդապետ Մուրատեան կը հրա-
տարակէ Հայ. Եկեղեցւոյ և Հայ Եկեղեցական Մա-
տենագրութեան վրայ ժամանակագրաւական կարեւոր
Երկասիրութիւն մը։ Սարկաւագ մը կը քննադատէ
այդ գործը հրապարակաւ, Տէրոյենց Պատուելին
ներշնչուած։ Պարոնեան լսելով որ այդ սարկա-
ւագը վարդապետ պիտի ձեռնադրուի, և ուզելով
զգացնել թէ ո՞վ է եղած իր թելաղիրը այդ հրա-
տարակութեանց մէջ, կը գրէ. «Ինչո՞ւ Տէրոյենց
պատուելին եպիսկոպոս չեն ըներ, քանի որ իր
աշակերտ վարդապետ կը ձեռնադրուի»։
Ստեփան Փաշա Ասլանեան, որ ամուսնացած

էր Տոքին. Բարունակ պէտ Ֆէրուխանի այրիին
հետ, կը հրատարակէ հանդուցեալ Տոքիթորին ձա-
նապարհուրդուրին ի Բարեղոն գործը։ Փաշան այս
առթիւ նամակ մը հրատարակած էր Մասիսի մէջ
ուր կըսէր. «Այս գրքոյկը մեծայիշատակ Պէլին
սրտի հատորոյն հետ երկինք ինձ պարզեւեցին
ի ժառանգութիւն։» Պարոնեան սրամիտ յօդուածի
մը մէջ Բարունակ պէտի գրքին վրայ խօսելով,
յիշեալ նամակին վրայ կը ծանրանայ. «Ե՛ինչեւ
հմատ կը կարծէինք թէ դրամը, արժեթուղթերը,
կարասիները, կալուածները միայն կը ժառանգուին.
հմայ սորվեցանք թէ ուրիշն կոփին ալ կը ժա-
ռանդուի եղեր։»

Թատրոն, որ ժլատ էր գոլեստի մէջ, պերճա-
խօս ներբողներ կը հիւսէ Մկրտիչ Տամատեանի
մահուան առթիւ. այս երիտասարդը զբարար ոսա-
նաւորի թարգմանած էր Ռասինի մէկ ողբերգու-
թիւնը և, տխուր զուգագիտութեամբ մը, այդ
թարգմանութիւնը հրատարակուելէն օր մը ետքը,
26 Յուլիս 1874ին, մեռած էր Օրթագեղի մէջ։

+ 1874ի վերջերը Ս. Էթմէքճեան հայերէնի
թարգմանած և հրատարակած էր Սամուել Սմալսի
Խնինօնուրինը։ Պարոնեան իր ամէնէն սրախօս
յօդուածներէն մէկը գրած է այդ գրքին առթիւ,
խօսելով ինքնօնութեամ գէմ։ Ճշմարտագանցու-
թիւնները կը սիրէր Թատրոնի խմբագիրը, մանա-
ւանդ երբ զանոնք պաշտպանելու համար ճարտար
վաստիր գտնէր։ Երսէր թէ Խնինօնուրեամ սկըզ-
բունքները մասնաւրապէս մեր հարուստներուն
գործին չատ կուգային, որովհետեւ անոնք այդ
գրքին չնորին պիտի կընային մերժել իրենցմէ
իննդրուած ամին օգնութիւն։ այս կերպով աղ-
խնդրուած ամին գունութիւն։ Եւ որովհետեւ ամին
քանի զուարթ կողմը կը փնտուէր, իր տեսութիւնը
կը վերջացնէր հետեւեալ մանրալուրով։

«Առջի օրը մարդուն մէկը իր տղուն կ'ըսէր .
— Մարտի'կ, սըկէց ջուր մը բե՛ր :
— Ել՛ր խմէ՛, հայրի'կ, այս ըսածդդ ինքնօգ-
նոթեան դէմ է . քու տեսած ըոլոր մեծ մարդերդ
ջուրը իրենք կ'ելլեն կը խմէն եղեր :»

Թատրոնին գլխաւոր հրապոյրներէն մէկը եղած
է ծանօթ Հայերու կինսագրականները : Պարսնեան
Թատրոնի մէջ սկսած է նախ Փրանսերէնէ թարգ-
մանել երգիծական կինսագրականներ Եւրոպացի-
ներու վրայ, ինչպէս Ժիւլ Ֆէրրի, Ժիւլ Ֆալո,
Տօն Քարլոս, ևայլն : Այս թարգմանութիւններէն
ներշնչուած, կը մտածէ հայ դէմքերու ալ կինսա-
գրաթիւնները հրատարակել Թատրոնի մէջ՝ ծաղ-
րապատկերներով : 1874 Սեպտ. 4ին կը գրէ .
«Խոսանում մըն ալ : Ասկից վերջ պիտի սկսինք
տոհմային գործերու մէջ դեր խաղացող երեւելի
անձանց երգիծական կինսագրութիւնները ընել,
ինչպէս որ կ'ընեն ուրիշ ազգաց մէջ :»

Առաջին կինսագրականը Կիլիկիայի խմբագիր
Տոքթոր Իւթիւնեանին է, որուն կը յաջորդեն
Կարսպետ Փանոսեան, Նահապետ Ռուսինեան,
Խաչատոր Միսաքեան, Օգաչն Խօճասարեան, Կա-
րսպետ Իւթիւնեան, Քրիստոնաւոր Ղաջարոսեան,
Ստեփան Փափաղեան, Վարդովեան, Թաղէոս
Պէկեան, Սիմոն Եազըճեան, Համբարձում Իփէք-
ճեան, Սիմոն Ֆէլէկեան, Ֆասուլեանեան, Երա-
նուհի Գարագաշեան, Տոքթ . Յովսէփ Շիշման-
եան, Տէրոյինց և Յարութիւն Մերեէմգուլի : Այդ
տասնըութը կինսագրականներուն երեքը միայն,
Տոքթ . Իւթիւնեան, Շիշմանեան և Մերեէմ-
ցեալ տասնըինցին շատ յաջող պատկերները գծած
է Սիմոն Եազըճեան, Պարսնեանի բարեկամը :
Առանց փորագրիչը եղած է Թէնկըր : Պէտք է
խոստովանիլ թէ այդ պատկերները կընան մըցիլ

նոյն ժամանակուան եւրոպական թերթերու փորա-
գրութեանց հետ : Անոնց մէջ դէմքեր կան որոնք
ուրիշ անգ բնաւու հրատարակուած չեն, ինչպէս,
օրինակի համար, Խաչատոր Միսաքեանի պատ-
կերը, որ նմանութեան տեսակէտով շատ յաջողած
է, ըստ վկայութեան մեր այդ ինքնատիպ դրա-
գէտը անձամբ ճանչցողներուն :

Այս կինսագրականներէն առանցվեցը Պարոն-
եանի գրչին կը պարտինք, և երկուքը միայն,
Ռուսինեանի և Տէրոյինցի կինսագրութիւնները՝
աշխատակիցներու : Ատոնցմէ Խօթը՝ Փանոսեան,
Միսաքեան, Իւթիւնեան, Ղաջարոսեան, Փափաղ-
եան, Իփէքճեան, Շիշմանեան նորէն հրատարակ-
ուած են Լոյսի մէջ և ապա Զոջերու մէջ, 1880ին,
որբագրուած և ընդարձակուած, գրեթէ նորէն
դրուած : Մնացեալ ինը կինսագրականները չեն
ամփոփուած Զոջերուն մէջ, թերեւու անոր համար
որ 1880ին՝ հեղինակը այլ եւս չէ ուզած աթոռ
տալ այդ դէմքերուն՝ իր Զոջերուն շարքին մէջ :

Գալով Տէրոյինցի և Ռուսինեանի, Պարոնեան
Զամուրծեան Պատուելի կինսագրականը գրած է
Լոյսի մէջ և ապա ամբոփած Զոջերուն մէջ, իսկ
Ռուսինեանի մասին կինսագրական չէ գրած ընաւ,
որովհետեւ 1879ին, երբ Լոյսի մէջ սկսու հրա-
տարակել իր Զոջերու շարքը, միևն Պլասի թարգ-
մանիչը մեռած էր արդէն : Եւ սակայն Թատրոնի
Խօճապիրը յաճախ առիթ ունեցած է՝ իր թերթին
մէջ խօսելու Ռուսինեանի վրայ : Միշտ քննագա-
տած է Ուղղախօսութեան հեղինակին ոճը : Թա-
տրոնի մէջ ազդ մը գրած է ուր կ'ըսէ . «Ռւսուցիչ
մը կը փնտուուի որ գիտնայ Տոքթոր Ռուսինեան
է Փէխստիի ոճը, որպէս զի կարենայ բացատրել անոր
Քրուածները» : Անոր շնած բառերը կը ծաղրէ .
«Երբ ելեկարականութիւն բառը գոյութիւն ոնի,
կ'ըսէ, ինչ հարկ ստեղծել շիուր բառը» — «Փո-

խանակ բարխանային հայերէնը վնասուելու, աւելի աղէկ կ'ընէր եթէ միջոց մը գտնէր թաղային վարժարաններու մէջ տոնամային դաստիարակութիւնը արդիսնաւոր ընկելու :» Զայն կճելու համար միշտ պատրաստ խայթոցներ տնի թէեւ, սակայն տողընդմէջ կը զգաս թէ կ'ընդունի անոր մտաւոր գերակայութիւնը իր ժամանակակիցներուն վրայ, և լռելեայն պաշտօն կը մատուցանէ անոր հմտութեան և արժանիքին :

Պարսնեան, որ իր առաջին երիտասարդութեան մէջ գերասանութիւն ըրած էր և չաս կը շահագրգուռէր թատերական խնդիրներով, Թատրոնին մէջ ընականաբար սիմֆոնի զրագէր նաեւ «Թատերական» ով : 1874ի սկիզբները Օրթագեղի, Բերայի և Գատրզիւզի թատրոններուն վարիչն էր գերասան Մաղաքեան, Վենետիկի Ռափայէլեան վարժարանին նախկին աշակերտներէն : Պարսնեան չէր հաւելեր Մազաքեանի գերասաններուն արտասահմութեան : Օրթագեղի թատրոնին մէջ ալուած ներկայացման մը վրայ խօսելով, որ թատրոնութիւն մըն էր ֆրանսերէնէ թարգմանուած, կը գրէ : «Սնոր ասհուն և զիւրաթաւալ լեզուն թաւալզլոր եղաւ գերասանաց ոմանց բերնին մէջ :» Մազաքեան Գատրզիւզի մէջ կը ներկայացնէ Թափառական Հրեան : «Ինչպէս որ յացանի է, կ'ըսէ Թատրոն, այս խաղին մէջ Տակոսէրը և Ժօվիալը մնձ գեր կը կատարեն . եկու տե՛ս որ բեմին վրայ ձի հանելը գդուար ըլլալով՝ Տակոսէրը լադի կաորի ձի մը շիներ, — կամիէ շիներ նէ աւելի աղէկ կ'ըլլար (*) — ու վրան ալ երկու գերասանուէի է հեծցուցեր : Այս գերասանուէիք Բոզի և Պլանչի գերմոր խիստ աղէկ ներկայացուցեր են . . . դէմք գերնուն վրայ :»

Սյդ ատենները Վարդովեան կը վարէ Օսմա-

նիէ Թատրոնը, ուր գեղեցիկ կերպով կը ներկայացնէ օրենքներ, ինչպէս Լա Պէլ Ելկն, Ժիրօֆլէ Ժիրօֆլա, ևայլն : Իր գլուխաւոր գերասաններուն մէջ են ֆասուլեաձեան, Թրեանց, Չափրաստճեան, Պէնլեան, Թօսպաթեան, Բարազեան . գերասաններներուն մէջ նշանաւորագոյն տեղը կը զրաւեն Գարագաշեան քոյլիքը : Պարոնեան անոնց ամէնուն մասին կը յայտնէ իր դաստիարականները թատերագէտի ճաշակով :

Թատրոնի հրատարակութեան միջոցին է նաեւ որ Չուխաձեան ներկայացնել կուտայ իր օրենքախմիները : Պարոննեան այս խաղերը կը քննադատէ, բայց զանոնք ներկայացնող գերասանները կը գովիէ . լուսնակ և Աձէմեան մեծ յաջողութիւն գտած են ըստ իրեն . «Չուխաձեանի եղանակները չեն զուարիթացներ այլ կը լացնեն», կ'ըսէ : Եւ սիրուն ծաղրանկարի մը մէջ կը հեղնէ արեւելեան և արեւմտեան եղանակներու խառնուրդը՝ իրը անընական :

Պարոնեան թատրոնի մէջ հրատարակած է Վարդովեանի, Ֆասուլեաձեանի և Երանուհի Գարսագեանի կենսագրականները և պատկերները : Ստոնցմէ յաջողակագոյններն են երկու վերջինները :

Թովմաս Ֆասուլեաձեանի կենսագրութեան մէջ շատ լաւ պատկերացուցած է նշանաւոր գերասաննին կեանքը և նկարագիրը . «1869ին Իզմիր զնաց, կը գրէ, ուր ամենալն յաջողակութեամբ ներկայացուց Կոյրին զաւակը : Այնչափ բնական կերպով կոյր ձեւացաւ որ հանդիսականք բռուն ծափահարութիւններով թատրոնը թնդացուցին : Թովմաս այս ծափահարութիւններէն քաջալերուած բաւական ժամանակ կոյր մնաց . . . իր սպակասութեանց համար : Իզմիրի մէջ իր անունը սկսաւ համբաւ վաստիլ, իր տաղանդը պայծառացաւ :

(*) Մազաքեան միանգանայն վարպետ կօշկակար էր :

Ասոր վրայ՝ ինք ալ պայծառացաւ Օրիորդ Պայծառին
հետ ամուսնանալով :»

Երանուհի Գարագաշեանի կենսագրականը սա-
պէս կը սկսի . « Երանուհի Գարագաշեան , դերա-
սանուհի , ծնաւ համարիէ իր հաշուով 1859ին , իմ
հաշուով 1851 Դեկտեմբեր 4ին : » 1865ին գերա-
սանուհի կ'ըլլար անսանկ ատեն մը ուր « դերասա-
նուհի գանելը , կ'ըսէ , հիմակուան ներկայացութեա-
րուն՝ թատրոնի մէջ հանդիսական գանելէն աւելի
դժուար էր : » — « Երանուհի Գարագաշեան անսանկ
յաջողութիւն մը գտաւ սիրուհիի գերերուն մէջ
որ Տիկին Արուսեալի նախանձը շարժեց : » —
« Երանուհի ամէն հովէ չի շարժիր : Թատրոնին բւելն
չափ լայն սիրտ մը ունի . եթէ մեռեալ մը աեռնէ
սիրտ թունդ չ'ելլեր , այլ աւելի կը մօտենայ զայն
քննելու համար , որպէս զի տեսարանին վրայ մեռ-
նիլ հարկ ըլլայ նէ բնական մեռեալ մը ձեւանայ :
Նոյնպէս եթէ մէկը բարկանայ , դիմամբ աւելի
կը բարկայնէ որ բարկութեան ձեւերն ու շարժում-
ները աղէկ սորմի : » — « Եթէ գերասանական
կեանքին մէջ պակասութիւն մը ունի , ան ալ սա
է որ տեսարան ելած ժամանակը սրդողածի երե-
ւոյթ ունի . կարծես թէ հոգաբարձու մըն է որ
վարժարան կը մտնէ : »

Պարոնեան թատրոնի մէջ ամէն օր երգիծանք-
ներով և զուարձալիքներով կը հարուածէ մեր
տոհմային մոլութիւններն և ընսանեկան զեղ-
ծումները :

— Հայ կիները շատ կը զբաղեցնեն զինքը : Ծաղ-
րապատկերներով և յօդուածներով կը հեգնէ անոնց
շպարը , սորաձեւ գլխարկները , երկար կրունկով
կօշիկները , tournaireը , կեղծ կուրծքերը : Անոնց
շոայլութիւնը յաճախ առարկայ կ'ըլլայ իր կծու
երգիծանքներուն : Կը բողոքէ այն կանանց դէմ
որոնք առանց ճանչնալու իրենց ամուսնին նիւ-

թական վիճակը , մեծ ծախքեր ընել կուտան հա-
գուստի կապուստի համար : Կը պարսաւէ կարգ մը
կանանց պչբանքի բնագդները . լաւ գաղափար չունի
անոնց բարյականին վրայ . « Պարկեշտութիւնը , կը
զրէ , հիմայ տեսակ մը կանանց քով՝ երեմնուն քաված
բոււրային պէս է . ամենափոքր հովէ մը կ'իմայ կը
կորարվի կոր : » Ուրիշ տեղ մը ծաղրով կ'այսպանէ
այն կիները որոնք առաւոտէն մինչեւ իրիկուն
պատուհանին առջեւ կը նստին . « Անոնք կը նմա-
նին պարտէզի մը պատին ետեւը անկված ծառե-
րուն . ամէն անցնող բան մը կը փրցնէ : » Հաւատք
չունի կանանց գաղտնապահութեան վրայ . « Կա-
նանց սիրտը Ղալաթիոյ թիւնէլին կը նմանի . մէկ
կողմէն առած գաղանիքը միւս կողմէն դուրս
կուտայ : »

Ամուսնութեան մասին ալ շատ յուետես է :
« Ամուսնութեան յերականութեան մէջ՝ հաւածայ-
ներին չկայ , կ'ըսէ : » — « Կինը կազմող ութը մա-
տոննք բանիներն են . պանախութիւն , ինընապաշ-
տորին , բամբասանի , նախանձ , շատախօսութիւն ,
զուարձասիրութիւն , թերեւութիւն , շինծու ախու-
վային : » — « Այն աղջիկները , որք անուս և հա-
րուստ են ուղղականին մէջ հարս կ'ըլլան , սեռա-
կանին մէջ վորձանին և կոչականին մէջ ով դժբաղ-
դութիւն : » — « Այն երիտասարդները որ ուղղականին
մէջ յասն տարեկանին , սեռականին մէջ վարսունի
կը փոխիլն եթէ կոմիկին շուալ ըլլայ , արականի
մէջ բանտի կը փոխիլն և կոչականին մէջ զերեզ-
մանի կը փոխ (ադր) զին : »

1875ին Խառն Ժողովը ամուսնական նոր կա-
նանագիր մը պատրաստած և գործադրութեան
դրած էր : Այդ կանոնագրին մէջ՝ Պարոնեանի ու-
շաղրութիւնը գրաւած գլխաւոր կէտերն էին .

Ա. Փեսացուն առ նուազն 18 տարու պիտի
ըլլայ և հարսնցուն 15 տարու :

Բ. Պատրիարքարանը բնաւ չպիտի լոէ դրամօժիտի գատերը :

Գ. Հարսնիքը եկեղեցւոյ մէջ տեղի պիտի ունենայ :

Դ. Հարսերը թեղինի չպիտի գործածեն :

Թատրոնի այս կանոնագլիքն դէմ վեսացուներու և հարսնցուներու կողմէ բողոքագիրներ կը հրատարակէ : Փեսացուները կը յայտարարեն թէ քանի որ դրամօժիտը կը ջնջուի ա'լ չպիտի կրնան ամուռնանալ և «զաւակներ հասցնելով անձնուիրաբար ծառայել ազգին» : Հարսնցուները, չորհակալ ըլլալով դրամօժիտի ջնջման համար, կը բողոքեն թեղինի ջնջման դէմ, իսկ Պարոնեան կ'ըսէ . «Ասկէ առաջ երիտասարդները դրամ շահն համար կ'ամուռնանային, այսուհետեւ դրամ շահն պիտի որպէս զի ամուռնանան» :

Պարոնեան Թատրոնի մէջ առիթ ունեցած է դրել ամուռնական միջնորդներու դէմ, զորս հեգնած է ճարտարօրէն : Յուջողութեամբ պատկերացուցած է աղջիկուսի տեսարաններ, միշտ ի վեր հանելով այդ հասուանդ սովորութեան ծաղրելի կողմերը : Իսկ դրամօժիտը միշտ առարկայ եղած է իր հեգնական ակնարկութեանց և պարսաւանքին :

Իր գրած ընտանեկան տեսարաններուն մէջ ջղիկի լեզուն շատ չի սիրեր գործածել : Թատրոնի հրատարակած է արդարեւ շատ մը յօդուածներ՝ ուր հայ կիները կը խօսին այնպէս ինչպէս հիմայ տակաւին կը խօսին Սալմաթօմրուքի կամ Զլք սալընի պառաւները : Բայց ատոնց ամենամեծ մասը իր գրչէն ելած չեն : Ինձի անծանօթ մնացած աշխատակիցներ են որ ծածկանուններով ոյժ տուած են այդ սեռին՝ Թատրոնի մէջ : Ընտանեկան տեսարաններու գեղեցիկ շարք մը կը կազմեն այն բաղմաթիւ յօդուածները, զորս Ես ծածկանուին

առև ոպահուող աշխատակից մը հրատարակած է Հիմ աշխարհին Խաչիկը նոր աշխարհին Գարիկը վերնադրով : Տակաւին կը լիշեմ այն մնած խանդավառութիւնը, զոր ներչնչեց թատրոնի ռամիներով ընթերցողներուն ամիսներով չարունակուած այդ հրատարակութիւնը : Անոր գըլւսաւոր հրապողն էր Ակնցիի գաւառաբարբառով խօսող Հայ մը, որուն բարքերն ալ լեզուին չափ չահնեկան էին : Աշխատակիցներ են որ գրած են նաեւ այն յօդուածներու շարքերը, որոնց վերնադիրներն են Բարեկենրամի զիշերները, Պախմին Պատուելի, Տաղ եկարիստիս ապտայ եկարիստին և որոնք կը ներկայացնեն ժամանակին բարքերուն նկարադեղ տեսարանները :

Պարոնեան գեղեցիկ պատկերներ գծած է նաեւ Գօմիսիոն խոնի մէջ շահադիառութեան զոհ գացողները ծալլըւով, որոնք յաճախի իր գրչին նիւթի կը հայթայթեն : Բամբասանքի տեսարաններ ունի, որոնք իրականին վրայ լուսանկարուած են : Պարտվերնեն չվճարող մարդիկ յաճախ իր ուշադրութեան տարկայ կ'ըլլան : Պարտ ունեցողներուն գործածական պատախանները վերնագրով իր մէկ սիրուն հատուածը, ուր անոնցմէ երեսունի չափ կը շարէ տակէ տակ, «հիմնական սկզբունքներ» կը պարունակին «ի պէտու պարտականաց» :

Պարտվերնին չվճարողները յաճախ իր գթութեան ալ արժանի կ'ըլլան . կը զգասս թէ ինք ալ քիչ մը անոնց գասակարգին մէջ է և այդ բանը չի քաշուիր խստավանելէ : Երբ Թատրոնը օրաթերթի կը վերածէ և կը թուէ այն օգուտները զորս պիտի անենայ այդ առօրեայ ծաղրաթերթը, կ'ըսէ . «Եթէ պարտք ունեցողները պարտվերնին վճարելու օրերնին ստակ չունենան և ծանր խօսք լսեն ակնու օրերնին ստակ չունենան և ծանր խօսք լսեն լով վիրաւորաբին նէ խկոյն Թատրոն կարդալով պիտի զուարձանան և ցաւերնին պիտի մոռնան :

Նոյն իսկ ես ալ երբեմն պիտի կարդամ. . . .»

Թատրոնի առաջին թիւը լոյս տեսած է 6 Ապրիլ 1874ին։ Նախ կը հրատարակուէր չորեքշաբթի և շաբաթ օրերը. 23 Յուլիսին Ս. Թերզեան թերթին խմբագիր-անօրէն կը ըլլայ, պաշտօն զոր կը վերստանձնէ Պարոնեան 21 Սեպտեմբերին և թերթը կը վերածէ ամենօրեայի։ 1875 Յունուար 16էն սկսեալ Գ. Մ. Էզամեան խմբագիր-անօրէն էր Թատրոնի որ Յունուար 28ին կը սկսի շաբաթը երեք անգամ հրատարակուիլ։ Ապրիլ 12ին դարձեալ Պարոնեան իր վրայ կ'առնէ թերթին վարչութեան հոգը, և Օգոստոս 2ին Թատրոն շաբաթաթերթ կը ըլլայ առելի ընդարձակ դիրքով։ Այսպէս կը շարունակէ մինչեւ 1876 Սեպտ. 29։ Այդ թուականէն սկսեալ կը հրատարակուի նորէն շաբաթը երկու անգամ, և ութը ամիսի չափ շարունակելով բոլորովին կը դադրի։

Այս եռամեայ շրջանին մէջ Թատրոն կռւաց 256 թիւ միայն։ Խրաբամչիւր թիւ ձեռքէ ծախուած է նախ 40 փարայի, յետոյ 20 փարայի, յետոյ նորէն 40 փարայի և հուսկ ուրեմն 50 փարայի. բաժանորդադինն ալ ենթարկուած է փոփոխութեանց։ Պարոնեան նիւթեական մեծ դժուարութեանց մասնուած կ'երեւայ. հակառակ իր խոստման չի կրնար հրատարակել Շիշմանեանի և Մերեէմդումի պատկերը, որոնց իւրաքանչիւրին պատրաստութեան ծախքն էր միայն 80 զրուշ. երեք տարուան մէջ տասնուշորս անգամ տպարան փոխած է, հաւանաբեկն չկարենալով ժամանակին ընել իր վճարումները. իր տպագրիչները եղած են հետզհետէ Ե. Տնտեսեան, Յ. Պարոնեան, Յ. Գավաֆեան և Յ. Պարոնեան, Յ. Ֆ. Թօղլեանց, յետոյ անսանուն տպագրիչ մը, յետոյ դարձեալ Ե. Տնտեսեան, յետոյ տպագրիչ մը Պալաթիոյ մէջ, ապա

դարձեալ Պոլիս՝ Ե. Տնտեսեան, Ճ. Արամեան, Ս. Միքայէլեան, Յ. Պարոնեան, հուսկ ութեան դարձեալ Ս. Միքայէլեան։

Պարբերականութեան, դիրքի, գինի, տպարանի, վարչութեան այս բարոր փոփոխութիւնները ապացուց են անյաբատեւ ողիի, որ գլխաւոր յատկանիշերէն մէկը եղած է Պարոնեանի նկարագրին։ Այդ ողին ցոյց տուած է նաեւ իր կարգ մը շարունակելի գրուածներուն մէջ։ Եփրատին, և ապա Մեղուլին ու Թատրոնին մէջ, սկսած է շաբաթը յօդուածներ զորս չէ աւարտած ուրիշներ սկսելու համար, ինչպէս ըրած է Եղիս Տէմիրձիպաշեան ալ իր Գրական և իմաստափրական հանդիսին մէջ. այսպէս Տարեր անուանութեան Գրուածներ Եփրատի մէջ սկսած, Թատրոնի մէջ տւարակել խոստացած և կիսատ թողած է. նոյնպէս Թատրոնի մէջ կիսատ թողած է Պոլսոյ թաղերուն մասին զրած երգիծական նկարագրութիւնները, զորս 1880ին ամբողջացուցիր Պոյոյ մը Կ. Պոյոյ բաղերուն մեջ գործով։ Իր Բանարանը և Խորհրդածութիւնը ուր ազուոր դիւտեր ունի, որոնցմէ մաս մը պիտի գտնեն ընթերցողները այս յօդուածին վերջը, ցանցաւ կերպով միայն կ'երեւան և յաճախ ամիսներով կ'ընդհատուին։

Թատրոնի խմբագիրը պարզ աշխարհաբար գրածէ. ինք կատարեալ աշխարհաբարեան մըն է, և անոնցմէ եղած է որոնք արդի աշխարհաբարին հիմնիրը գրած են։ Որո իշ յօդը, անորոշ յօդը, հոլովումները, բայցերը արդի աշխարհաբարին համեմատ կը գործածէ ընդհանրապէս։ Կը զանազանի արդի գրողներէն վիմսաւորաբար կրտսորականի և անցողականի կաղմութեան մէջ։ Ուուսինեանի հետեւելով կրտսորականը վիշտ կը կազմէ փոխանակով ուղիի. բայց անցողականը ցումել մասնիկով փոխանակ ցնելի իր ոճը թէեւ միօրինակ չէ քերականական

տեսակէտով, սակայն ունի լեզուական որոշ դրուժ
մը որով կարելի է առանց վարանման բացայացա
կերպով ցոյց տալ Թատրոնի յօդուածներէն անո՞նք
զորս ծածկանուով ստորագրած կամ անստորագրի
գրած է Պարոնեան, և անո՞նք զորս գրած են իր
աշխատակիցները:

Պարոնեանի միտքը Թատրոնի մէջ այնքան
բեղմնաւոր չէ գիւտերով որքան եղած է Մելոնի
մէջ, այնքան հասուն ալ չէ որքան ետքը ոլիսի
ըլլար Կիլիարի մէջ: Եթէ տեղ տեղ կուսակցական
ողին և անձնական բարեկամութիւնները կ'աղջին
դատաստաններուն վրայ, պէտք է ըսել սակայն
թէ ամնուորեք կ'երեւան իր անվիրտելի տրամա-
րանութիւնը և ողջմտութիւնը: Պարոնեան խան-
դաղատանք չունի, բանաստեղծութիւն որիթէ
բնա՛ւ: Իր գործածած բառերուն մէջ միշտ զդո՞ւ
և պարկեշտ է, երբեք կոսկու: Պիզծ նիսթերէն
չ'ախորդիր: Թեթևեամիտ չէ բնաւ. լուրջ է ծալ-
րին մէջ իսկ: Երբ բանի մը վրայ կը իսուայ, եր-
բեմն զայրոյթ ունի, երբեմն դառնութիւն, քիչ
անդամ առելութիւն, երբեք չարութիւն, իսկ ան-
կեղծութիւն՝ միշտ: Անկեղծութիւնը յաճախ ծայ-
րայելութեան տարած է, իր շահուն վնասելու առ-
տիճան: Միշտ յարդանք ունի հանրութեան համար
որուն կը խօսի. իր կարծիքներուն մէջ միտութիւն
ունեցած է և սկզբունք փոխած չէ: Կարելի չէ
ըսել թէ բնաւ հակասութեան մէջ ինկած չէ, բայց
ապահովաբար գլխաւոր խնդիրներուն մէջ իր գա-
ղափարները յատակ, որոյ և անփոփոխ եղած են:

Քանի մը խօսք ալ Թատրոնի հաստարակութեան
երեք տարիներուն մէջ Պարոնեանի ներքին կեան
քին վրայ: 1874ին արդէն Սկիւտարէն Օրթագիւղ
անցած էր: Ամուրի էր տակաւին և 32 տարեկան:
Սենեակ մը վարձած էր տան մը մէջ ուր կը բնակի
երր pensionnaire. այդ տանը կը վերաբերէր Տիկին

Աղապի կթմէքնեանի որուն աղջիկը, Օրիորդ Սա-
թենիկ, 1879ին իր կինը պիտի ըլլար:

Քանի մը արտակից բարեկամներ ունէր որոնք
իրեն ացցելութեան կուգային երբեմն, և յաճախ
անոնց հետ զուարթ երեկոյթներ կ'անցընէր. արե-
ւելեան երգերը կը հաչէին երբ այդ խումբը կը
բալորուէր օղիփ ափաէին շուրջը: Պարոնեան յանոն
զարնելով կ'ընկերանար այդ երգերուն: ինք ալ
կ'երգէր, և իր նախընտրած եղանակներն էին մա-
նակները: Քանի մը գաւաթ օղիով կը զուարթա-
նար. այդ թեթեւ գինովութիւնը անդիմադրելի
հրապոյր մը կուտար իրեն՝ ընկերութեան մէջ:
Սովորաբար լուսակաց, օղիին ազգեցութեան տակ
լեզուն կը բացուէր. սուր խօսքեր կ'արձակէր
աջ ու ձախ. սիրուն կատակները կը թթուա-
յին շրթունքներուն վրայ: Իր բարեկամներն
ալ իրեն արժանի ընկերներ էին. առանց մէջ
էին Սնատոն Ամպէրեան, առաջնակարգ հաշուակալ,
փորձառու և ապրած մարդ, որ մինչեւ Հաղկաս-
տան և Զինաստան ձամբորդած էր, Մկրտչէմին-
եան, քաջահմաւտ արեւելեան ձայնագրութեան,
Եղիա Տնտեսեան, տաղագրիչ, ձայնագրագէտ և
գրող, Թրեանց, Ռաֆայէլեան վարժարանի նախ-
կին աշակերտ ու նշանաւոր կատակերգակ դերա-
սան, և ուրիշներ: Առողջմէ ամանք ոչ միայն իր
զուարթութեան ընկերներն էին, այլ և իր աշխա-
տակիցները:

Այս զարգացած բարեկամներուն հետ ամե-
նօրեայ շփման մէջ էր Պարոնեան: Հաւասնօրէն օր-
ուան խնդիրները իրենց խօսակցութեան նիւթ
կը լային, և առոնցմէ կը ներշնչուէր յաճախ Թա-
տրոնի խմբագիրը: Այս մտացի մթնոլորտը որ կը
շրջապատէր զինքը հզօր խթան մըն էր իր ուղե-
ղին համար: Օրուան խնդիրները ճոխ էին և գրե-
լու առատ նիւթ կը հայթայթէին իրեն: Եւ այս

ամի՞նը շատ նպաստաւոր պայմաններ կը ստեղծէին
Պարոնեանի շուրջը՝ յաջողցնելու համար թատրոնը։
Սակայն գդրախտաբար ժողովուրդին մէջ չկար
տակաւին ընթերցողներու զարգացած դասակարգ
մը որ կարենար ըմբռնել իր հանձարը։ Կոչտ կա-
տակիներէն, ջլդիկի տեսարաններէն, Ակնցիի և
վանցիի բարբառով զաւեշաներէն աւելի կ'ախոր-
դէին ընթերցողները քան աղնուական սրամառ-
թիւններէն, նրաճաշակ հեգնութիւններէն, զբա-
կան հակադրութիւններէն, որոնք այնքան հրա-
պոյր կուտան իր ոճին։

Սաոր համար սնչուչտ թատրոն զինքը ապ-
րեցնելու չափ ընթերցող չգտաւ։ 1877 Մայիսի մէջ
Պարոնեան կը ստիպուէր գաղրեցնել անոր հրամա-
րակութիւնը, և առժամանակեայ կերպով քաշուիլ
խմբագրական ասկերախտ ասպարէզէն։

27 Օգոստո 1905.

ԲԱՌԱՐԱՆ ԹԱՏՐՈՆԻ

Յ. ՊԱՐՈՆԵԱՆ

Աղջիկ. — Գոզ մը որ իր հօրը տունը կը կո-
ղոստէ։

Աղյատուքիւն. — Ապահովագրական ընկե-
րութիւն գողութեանց դէմ։

Ամռանանուքիւն. — Այն մասունք բանիներէն
է, որոնց վերջաւորութիւնները կը փոխուին։

Անառակ. — Հականիշ անառիկի երբ խըն-
դիրը կահանց վրայ է։

Բախս. — Տղայ մը որ ժամ մը առաջ տուածը
ժամ մը ետքը կ'ուզէ։

Բաղանիկ. — Մարմեռյն քաւարանը։

Բժիշկ. — Գործակասար Գարրիէլ Հրեշտա-
կապետի։

Գերեզման. — Անդիի աշխարհին թիւնելը։

Դագաղ. — Անդիի աշխարհ բանով սուրհան-
դակին նամակառուփը։

Դագաղակիր. — Մեռելոց ձրուիչը։

Երախայ. — Երկու հակասական նախադա-
սութեանց ուզիդ եզրակացութիւն։

Երկարուղի. — Ճամբաներու ողագործիւնը։

Երկուուրեակ. — Երկու հատոր մէկտեղ կազ-
մուած։

Խնամուքիւն. — Գրաւ մը որուն մէջ միշտ
աղջիկ տութզն է որ եասկո կ'ըսէ։

Խրամ. — Դեղ մը որ ականջով կ'ուտուի։

Կնիկ. — Փոշի մը որ մէկու աչքը երբ մանէ
շատ դժուարութեամբ կ'ելլէ։

Կնիք. — Հականիշ կնիկի, ինչ որ չի կրնար
պահել մէկը միւսը կը պահէ։

Կրօնափխուքիւն. — Հաւատաքին գաղթակա-
նութիւնը։

Հին առնելիք. — Քարի կտորներ գորս վա-
ճառականները կը զնեն հաշուեկանին մէկ կողմը,
որպէս զի պարտքը ծանր չկոխէ։

Հիւանդուքիւն. — Մեկենաս բժիշկներու։

Խսկի. — Ճարտասանութեան դաստառ։

Խռուում. — Խորհուրդներու նաւահանգիստը։

Պատմուքիւն. — Դիտակ մը որով մարդ ետեւը
կը նայի և առցեւը կը տեմնէ։

Պարկեւուքիւն. — Շանթարգել աղուորու-
թեան։

Վիճ. — Սպասաւոր ամուսնութեան, որուն
կտեւէն կ'երթայ միշտ։

Բառարան. — Մեռելոց քարանթինան։

Օղի. — Վարպետ խոստովանահայր։

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՔ „ԹԱՏՐՈՆ”Ի

— Երիտասարդներէն ոմանք աղջկանց այնպէս կը փակին, ինչպէս դրաշմները լրագրաց վրայ, առանց թուղթին վեսակերու չեն կրնար բաժնուիլ:

— Շատ մը աղջիկներու ի՞նչ վարքի տէր ըլլալը դէմքերնուն վրայ գրված է, բայց բեւեռաւ գիր, ամէն մարդ տարբեր կերպով կը կարդաց :

— Աղջիկները սեխի կը նմանին, որչափ որ ծանր ըլլան այնչափ համեղ կ'ըլլան, և այնչափ սուզ և շուտ կը ծախուին :

— Աղջիկներէն ոմանք իրենց սիրականներուն հետ այնպէս կը վարուին ինչպէս կատունները մուկերուն հետ, հետերնին բառական խաղալէ ետք՝ փախչելու առեննին վրանին կը յարձակին :

— Երեսը քաված կինը վաճառականաց քերթված տեսարակին կը նմանի. միշտ մնանկութեան նշան է :

— Անբարոյական կնիան մը համար էրիկը սեղանաւորի մը քով դրված դրամ մըն է. սիրականներն ալ դրամին տոկոսներն են :



ԶԲԱՂ ՔԻԼԻՔԻՆ

(ՖԻՆԼԱՆՏԱԿԱՆ ԶՐՈՅՑ)



Գրեց՝ Ե. ԵԹՍ. ԴՈՒՐԵԱՆ

ԻԵԼԻ ՈՒ ԼՈՒՍԻԲ'

Կը սիրեին տարփանեով մը մոլեգին
Զբնաղ Քիլիքին :

Այդ չորս դիմերն ա'լ օր մը դեպի վար
Իջան մեր աշխարհն.

Ամեն մեկն անդորր

Ընկողմանա'ծ եր կառքին խորն,
Ու հինգ ձիք

Լըծածիգ,

Կը բատին զայն բալերով հանդարտազնաց,
Ու ծառաներ ծուռ կուգային դարձադարձ :

Բայց զեղեցիկ աղջրկան

Աչեր բնաւ չը ըլացան

Այդ նառերէն մեծապանձ :

Նե կը փնտուեր գերազանց

Անյոդդոդդ բարք ու կերպարան՝

Եւ ո'չ քէ փառք ընդունայն :

Ուսի բառ առ կուսին.

« Զեմ ընտեր զեղ ամուսին,

Վասրճ զի միւս լեղիդուկ

Դեմք մը ունիս դուն, եղուկ.

Մեր կը պակսի նակտիդ լոյ,
Մեր կը լայնիս ըս հանոյ.
Այդ բնրացնով բնմահան.

Տուն մը երեք չըլլար իրօֆ բարգաւան:
Յեսոյ ըսաւ Արեւուն.

« Ձեմ ընկունիր բզբեզ ինձ
Երեւ ընկեր կենակից.

Դուն ալ չունիս երկարագիր հաստառուն.
Քեզմով ամրան մեջ մարդիկ
Կը կրեն սօր մը սաստիկ,
Ու ձմրան մեջ կը բողոս
Որ տանջրւին ցրտասոյզ.
Խար երճակը ժամանակ՝
Շաղ կը տեղաս ամեն դի,
Ծիլ կ'արձակէ երբ վարսակ.
Հուր կը բափես երածի:

Մերժեց Քիլիիի նախ Արշը Մեծ,
Ու ա'յս խոսերով անոր առարկեց.

« Ինչո՞ւ այդքան ընդարձակ
Տեղ կը գրաւես մեջ երկենին կապուտակ,
Մինչդեռ ե'ս անգամ
Թէ հո'ն ըլլամ կը ցանկամ

Երբեւ բիծ մը զալ երեւան,
Երկայնաձիգ մեջ զիւերին ձրմեռուան :»

Նախամեծար ընտեց ապա
Բեւեռին ա'սդը հեռակայ.

« Կը հաւանիմ բու սիրոյդ,
Ըսաւ անոր Քիլիիի,
Վասրն զի բու սովորոյք
Յարմարաւոր և կեանի.

Մի՛շ տանդ մեջ՝ ինչպէս զիւեմ՝
Կ'ապիս խաղաղ ու զուարքադէմ.
Հաւատարիմ մնալով տեղւոյդ այն յարգի՝
Զոր կը գրաւես ինքնուրոյն:

ՔՈՒԱ ԵՒ ԷՄՄԱՐԻՔ

(ԹԻՆԱՆՏԱԿԱՆ ԶՐՈՅՑ)

Քուա եւ էմմարիք՝

Մեր հաւատարիմ ու մի՛շ միաբան,
Կը կատարեն իրենց պատօնն անխափան :
Ուրախ եր Ռուֆօ՝ հայրն ալեւորիկ,
Ու զանաց զանոնի յաւիտենապես
Զուգել իրարն ւ սիրով սրտավիկ :

Երե անոնի հաւանիկն՝

Ըսուզապէս ամբողջ տարին
Պիտի ծագէր
Տիւ լուսաբեր :

Բայց չէ ծանօր՝ ի՛նչ կար պատհան՝

Որ Արտալոյսը-Քուա պայծառ

Ու Վերջալոյսը-Էմմարիք՝

Զը փոխելով իրենց դիրէր խաղաղիկ
Հեռուեն լոկ ուզեցին յար

Սիրել զիւար :

Առաջարկեց Ռեֆօ՝ ամբողջ տարւոյն մեջ

Քանի մ'օրեր գեր իրարու հանգչի գոզ.

Ու էմմարիք ա'յդ օրերուն զահն իր շէջ

Մօսէն առ Քուա կը կարկառէ անձկանօ :

Երբ իրարու ձեռք կը սեղմեն,

Ու էմմարիք համբոյր կ'առնի երբ Քուային,


Սա ամօրէն շառագունած կը շիկնի :

Առոր նշանն է յայտնի՝

Հորիզոնին ա'յն կարմրութիւնն

Որ կը տեւէ այդ օրերուն :(*)

(*) Հիւսիսի այն զաւաներուն մէջ՝ ուր ապս գրոյցը կը պատմուի՝ Մայս ամսուն առաօտեան եւ երեկոյի կրինակ մթնշաղները (crépuscule) իրարու կը խառնուին քանի մը օրեր :





ՅԱԿԱՆ ԳՈՒՐԳԻՆ

ՏԱՐԵՑՈՅՑ ՆՇԱՆ - ՊԱՊԻԿԵԱՆ - Բ ՏԱՐԻ - 1906



ԳՐԱԿԱՆ ՀԱՄԲԱԽՆԵՐ

Դրեզ' Յ. ԳՈՒՐԳԻՆ



Եջին Դարու ասպետական դղեակներուն պէս անմատչելի բաներ կը դառնան յաճախ սա գրական համբաւները : Անանկ բարձրարեծ համբաւներ կան որ մարդ կը վարանի անոնց մօտենալու , վախնալով գոցէ որ իր վրայ փլչին : Առասպելական հոկաներ են անոնք , որ որչափ հեռանան՝ այնչափ մեծ կ'երեւան աշքերու : Մարդ չի փորձեր այդ դղեակներուն պատերը ծեծել , կամ այդ տիտանեան ուրուականներուն քար մը նետել : Ուրիշներու համոզմամբ՝ սրբութիւններ են համբաւները , խունկ ու մոմ միայն ունին անոնց համար , հիացում պաշտում՝ անոնց առջեւ... միշտ հեռուէն :

Ու համբաւները , անմատոյց ամբարտակներու պէս , կանգուն կը մնան , վէս կերպարանքով կը նային բարձրէն , ինչպէս հինաւորց խրոխտ ասպետը դղեակն պատկանէնէն , խեղձ ու կրակ մահկանացուներու , որ կ'անցնին կը դառնան անոնց ստորոտէն պատկառու երկիւղածութեամբ , անշշուկ , անլենդու :

Յետոյ կուդայ պատմութիւնը , երբեմն աներազգած ու յաճախ չողոմարար պատմութիւնը , — որ իր բազաղը թեսն մէջ աննշան քանակու

թիւն մը միայն կընդունի աշխարտորիւն բսուած բանէն, — կուգայ նուիրագործելու ինչ որ միա կողմանի կամ միականի համոզումները տածած էին երկար ժամանակ, ինչ որ կարճամիտ աւանդամոլութիւնը պահած պահպանած էր տարիներով:

* * *

Եսա ցանցառ հանդիպած եմ, — վասն զի ամենեւին ալ չեմ կրնար ըսել, — համբաւի մը որ արժանիքէն նուազ կցիո ունենար կամ անոր հաւասար գոնէ: Ամենեւին չեմ գտած առանց համբաւի արժանիք. առանց արժանիքի համբաւ՝ զիմուս մազէն աւելի, որ դեռ ձալատ չէ: Ուր կարելի է գտնել, չեմ գիտեր, արժանիքի և համբաւի համաստիճան ամուսնութիւն մը զոր պատմութիւնը օրհնած ըլլայ:

Կան գրական համբաւներ որ գիտուածի ծնունդ եղած են. ամէն խաւերու մէջ մոտած տարածուած են պատեհութեան թեւերով. երթեւեկի տոմս, արժանիք, հարցուած չէ իրենց: Օր մը մէկուն զրադէտ մը տեսնուած է համբաւի շողերուն եալն: Ալ իր հաւատքը հաստատուած է անոր վրայ, և կարելի չէ խախտել: Երբ բերանը բանայ, կարծես անոր սիրահարն է. պատկերը ամենեւին տգեղ կողմէ չունի իր աշքին. զուգաւկիու մը, երբ ենթականերէն մին իր պաշտաճն է, սրբազնութիւն պիտի ըլլար իրեն համար:

Այսպէս շինուած են մեր մէջ կարգ մը զրաւկան հին ու նոր համբաւներ, որոնք նոյն խոկ վարկարագի քննութենէ մը պիտի քայլայուէին դիւրաւ: Համբաւ համելու համար՝ կանխաւ մէկ երկու զմայլողներ կամ ժողովակիցներ ճարելու է, գերասանին պէս՝ որ ծափեր կը վարձէ թատերական սրահին մէջ. այնուհետեւ դժուարին չէ յաջողութիւնը:

Առանց նախանձորդ ըլլալու մէկուն, կարծեմ կրնայ մարդ նախանձախնդիր ըլլալ համբաւի զուգակից արժանիք որոնելու, գրական անոնին տակ զրադէտ մարդը վնասուելու: Գրական դէմքեր կան մեր մէջ, համբաւի չորս թեւերով պարուած, որոնք բնականէն մէկ երկու փետուր միայն կրցած են ունենալ. մնացեալին համար քանի մը տասնեակ սիրամարդ փետուած են, կամ թութակներու դպրոցին աշակերտած:

Ոչ ոք փոյթ պիտի ընէր անարժան համբաւներու բարձրաթռիչ սաւառնումներուն, եթէ անդին ճշմարիտ արժանիքներ մութի մէջ մնալու չդատապարտուէին: Այնքան պատկառու եղած ենք համբաւներու առջեւ, և այնքան անակող իրական արժանիքի, որ մեր զրական ասպարէզին մէջ շատեր ՀԱՄԲԱՒԻ ՀԵՏՍՄՈՒՏ ԳՏՆՈՒԾԾ ԵՆ ԱԼԵԼԻ, ՔԱՆ ԱՐԺԱՆԻՔ ՍՏԱՆԱԼՈՒ: Բայց համբաւի բովանդակ լէգէոններ մէկ ճշմարիտ արժանիք չին արժեր հարկաւ, և ամենեւին օգուտ չունին հանրութեան. Ընդհակառակն՝ վնասակար են անհատական տաղանդներու կազմութեան ու զարգացման: Լաւ է անտարակոյս որ արժանիք մը, դեռ նոր կազմուելու սկսած, անզիտակից ըլլայ ինքն իրեն՝ քան համբաւի տարածած թռիչներով Աւտուի և ախեղծ մնայ ընդ միշտ:


* * *

Անընտրող ճաշուն է յաճախ որ կը ստեղծէ գրական համբաւի մը կուռքը, և առիթ կ'ընծայէ բարեմիտ ուամկութեան և մանաւանդ ուամիկ գրականութեան՝ բերել դնելու իր խունկն ու մոմը անոր պատուանդանին առջեւ: Եւ այն օրէն որ կը սկսի պաշտումը, անարժան փառագրութիւնը, միամիտ սպասարկութիւնը, ա'յն օրէն տկարութիւնը կը յաղթանակէ ենթակային, որ իր չորս

թեւերը ամփոփած և գլուխը ագուցած փետուր-
ներուն մէջ՝ անշարժ կը մնայ իր բարձունքին
վրայ, միշտ ակնկալու հասարակաց խնկարկու-
թեան և հազիւ հինդ տասը տարին անգամ մը
ձայն կ'արձակէ գրական հրապարակին վրայ, վճիռ
մը գրականութեան համար, պատկամ մը նոր ու-
րունդի հասցէին :

Ճշմարիտ արժանիքն է որ ամենեւին չի սի-
րեր լոյս, ոչ համբաւի թեւեր, ոչ փող ու թմբուկ:
որ իրազեկ է թէ անընտրող ողին կը շփոթէ յա-
ձախ պատուախնդիրն ու պատուարժանը, և որ
կ'աճի ստուերի մէջ լոին ու ինքնամփոփ, մանու-
շակին պէս որ կը փթթի թուփերու մացաներու-
տակ հոտաւէտ բուլումնալից :





ՄԱՐՏԻ Զ. Ա. Ճ. Մ. Ե. Ա. Դ.

ՏԱՐԵՑՈՅՑ ՆՇԱՆ - ՊԱՊԻԿԵԱՆ - Բ. ՏԱՐԻ - 1906



Ա Պ Ո Ղ Ո Ն^(*)

(ԲԱՐԿԵՆԴԱՆԻ ԿԱՏԱԿԱՆԵՐ)



Գրեց՝ ՄԿՐՏԻՉ ԱՃԷՄԵԱՆ

յն մեծ եերողն՝ իր ներշնչման
իր վեհութեան մէջ աննըման,
Դից սիրելի՝ անմահ երգիչ
Որ արծիւ մ'կ բարձրաբռիչ
իր հանճարով եւ սրլացգով,
Եւ ես որ չեմ ննեղուկ մ'իր քով՝
Ինձ մօս զալով՝ կարեկցաբար
Չեռէս բոնից ու բարձրասար
Լերան մը ծայրը զիս տարաւ,
Հեռու հեռու, ուր դժուարաւ

(*) 1893ին է. էֆ. Եսայեան — մէկը մեր հին բանասեղծներէն — հրատարակած էր «Մեծանորի ներշնչմունք» անունով ոսանաւորներու հատու մը : Ասոր մէջ դրած էր «Դասաւորն Ապողոն» ի մեր Պատնաս» քերթուած մը, ուր իր թէ Ապողոն այցելութեան կուզայ մեր Պատնասին՝ վարձաւելու համար մեր ամէնէն արժանաւոր հեղինակները, եւ այլու համար մեր ամէնէն արժանաւոր հեղինակները, եւ այլոր մեր բանասեղծներուն մէջ զի՞նքը մինակ կը գտնէ իր ամէնէն արժանաւորը : Մ. էֆ. Աճէմեանի այս քերածը ամենասիրուն ու սրամիս parodie-ն է այդ զործին :

ԵՎ. ՀՐՏ.

Վեր մազլելով ցից ժայռերէն
Հետեւեցայ հազիւ իրեն :

Ծրծըմբահոս ամպեր դեղ դեղ
Պարուրեցին յանկարծ ըզմեզ.
Փայլակ կայծակ որոտագոչ
Փուշ փուշ բրին սիրս դողլոջ:
Եթք բոցերուն շեկ ու կիզիչ
Վարժեցան իմ աչեր ֆիշ ֆիշ՝
Տեսայ տաճար մը կանգնած հոն,
Ուր կը բազմէր Մեծն Ապողոն.
Գրուխը դրած մեծկակ շամախ
Մեկ կողմ ծրոած երգեր ուրախ,
Հին եակունչի մ'ուսին վրան
Հազիւ ծածկէր իր մերկ իրան.
Էն, երեսուն դարուց ի վեր
Ուշափ փոխուած՝ բանձրացած էր
Տերն արեւու եւ ենրութեան.
Բաց ալն օրն էր բուն բարկենդան.
Ոլիմպոսէն զզուած՝ ֆիշ մ' ալ
Կուզեր անուռէս զրւարհանալ:

Ամանի նիմար, ոմանի կըլոր
Մուսայի՛ շարուած շուրջը բոլոր,
Ունէին զոյնըզգոյն տարազ,
Կեղծ ակուաներ ու ներկած մազ.
Անմահներուն անզամ, եղուկ,
Գեղեցկուրինն է խուսափուկ:
Մին այս կնտիկ խարուններէն,
Որուն անունն էր Մելքոնէն,
Տեսաւ ընկերս, անմիջապէս
Ընդոս վազեց խնդրումերէս,
Ու անոր լայն նակտին վրայ
Դրաւ խուռու պըսակ դափնեալ,
Մինչ Պոլիմերս ու Երասով
Գրզուեին զինքն անուշ մպտով,
Եւ իբրեւ ասն ու կնիմար

Համբուրէին յափ յափ գիրար.
Ես խոյն տալով տեղ մը յարմար
Կըծկըսեցայ, զի մեկ լիմար
Խնդալու տենջ մը զիս առաւ
Ու կեղծեցի սուս փորի ցաւ :

Հոս, Ապողոն որ մեկ լսրիչ
Ընել ուզեց ըլլացուցիչ,
Նախ բացաւ տուփն ընչաղեղի՝
Խում մը բաշեց մատով մեծդի,
Ու փրութեաց այնպէս ուժով
Որ բնդացին լեռներ ու ծով.
Յետոյ զոչեց՝ «Ողջոյն տամ էեզ՝
Արարածոց ամենէն հեզ
Բայց ամենէն փայլուն հանհար,
Ուրախ մտի՛ր այս սուրբ տաճար,
Ողջոյն տամ էեզ մեծրդ ենրոդ,
Հայ դպրութեան հասը կորող,
Որ մուսայից կ'ընես դարպաս,
Ու լոկ ենզմով պահճայ Պառնաս.
Եւ ո՞վ կրնայ երանգ երանգ
Հիւսէլ էեզի պէս հարուս յանգ.
Ո՞հ, ինչ աշխոյժ եւ ինչ կորով
Երբու երգես վսեմ լարով,
Ուշափ արցունիք հառաչ խըլես.
Միքէ Ովրէս ու Սոփոկլէս,
Կամ կովերուն երգիշ Վիրգիլ
Կրնա՞ն էեզի հաւասարիլ . . . »:

Լուց ու զոհ՝ ընչաղեղին
Տուփն հրամցուց մեր ենրոդին.
Բայց այդ պատիւն արտասովոր
Շարժեց նախանձը՝ ինչ եւ նոր
Մեծ եւ պատիկ ենրոդներուն.
Ու բորուելով իրենց խոր քուն
Պէփիրաւելան եւ Ադամեան,
Դուրեան եւ այլ՝ վեր կանգնեցան

Մերկ մերկ իրենց գերեզմանէն.
 Շիկնոս խպնոս մուսային ամեն
 Սկսան լալ ու մարմրիլ,
 Մինչ պաղ քրինք բափեր Սիսիլ,
 Զի Ապողոն նիշդ իր դիմաց
 Զինը դիտեր բերանը բաց.
 Խոկ դուրսը խել մը պապուկներ.
 Տաճարին ուրջն էին խրոներ,
 Ու մուրային փառքի փրսոր
 Գոնի դափնեայ տերեւ մը չոր:
 Գրագիտներն այս անկապաօս՝
 Գրաբարին հետ միշտ անհաօս,
 Կը դիտին դրան ծակին
 Թէ ներսը զո՞վ կը պակեն:
 Բարկենդանի առքիւ ծագեր
 Էին անոնք սարբեր սարբեր.
 Մեկն առած էր Պոսիդոնի
 Ճերմակ մօրունն ու երկժանի.
 Ուրիշ մ'իբրեւ մահուան պատկեր
 Երկայն մահգաղ մը կը շալկեր.
 Հեփեսոսի մէկն ալ նման
 Կալալ փորձեր շաս բընական.
 Չորրոդ մ'առած էր սատանի
 Արդէն իրեն ուրեն ընտանի.
 Կըլորիկ փոր զրւար Բաֆու՝
 Շիշ մը գրկած կը ննիկեր հոս,
 Մինչ անառակը կուպիտն
 Ուր կապարն կը պարէր հոս.
 Դեռ կային շաս ասենց ետեւ
 Արբանեակներ՝ ամենն ալ խեւ.
 Առակերտներ նորուս, որոնց՝
 Տաճարին դուռն էր յաւես զոց:
 Ո՛չ մեկ աղերս, ո՛չ մեկ բողոք
 Զի շարժեցին սիրսն անողոք
 Դոնապանին՝ որ իբրեւ փաս՝

Ճօնելով բիր մը կուս ու հաս,
 Կ'ըսէր իրենց. « Շան լակոններ,
 Ներս որ մտնէք հա՛ ձեր ոսներ
 Կը կոսրտեմ, Ասուա՛ծ վրկայ,
 Տօ՛, լաներուն հոս տեղ չըկալ: »
 Սակայն մարդուկը մեծախոս
 Զայնը կտրեց, երբոր Բաֆոս
 Իրեն տուալ զաղտագողի
 Շիշ մը զինւոյ զուս խաղողի:
 Տաճարին մէջ բարձրանալին
 Խոպոս ձայններ մեռելային,
 Ճիշդ այդ պահուն՝ սրբանըւէր
 Հոգեհանգիս մը կատառուէր,
 Լաւ չեմ զիսէր ինչու համար՝
 Զի լեզուն էր շաս զրւարա.
 Դոնապանն ալ օրինէր զանուն
 Եւ լիւատակ մեռելներուն.
 Ու սէկպ սէկպ՝ զորովարա
 Գինւոյ շիշին համբոյր կուտար,
 Մինչեւ եղաւ լաւ մը լոլիկ.
 Դուրսի խենթերն ալ՝ խրպլիկ
 Կըծկումով ներս սրպրդեցան
 Ու սուերին մէջ՝ իբրեւ արձան
 Անշարժ կեցան, կազմ՝ համամիտ:
 Արդէն շատոնց մայրն Անահիտ
 Վառած էր իր արծար լավտեր.
 Հոգեհանգիւնն ալ կ'աւարտէր.
 Եւ Ապողոն՝ լուրջ դաւաւոր,
 Կուտար պատգամն այս ահաւոր.
 « Ապրին անոնք որ սուրբ լեզուն
 Կը մրժակեն Մուսաներուն.
 Սակայն իմաստ մ'իննին տափակ՝
 Գրաբարին նոխ ձեւին տակ
 Ա'րլայ միայն վեհ զեղեցիկ.
 Արդ, դուք որ խորք ու գրուեհիկ

Լեզւով գրեմ, ձեզ չ' մերբող
 Այլ յորջորջել պես և կրտն' դ.
 Թէ որ՝ մասուկ էիմ երբոր
 Մուսայի ըստն ձեզի օրոր,
 Դուք չեմ կրնար բլալ պուէս,
 Այլ շատ շատ խեղն լրագրապես,
 Կամ բնեադաս մը գարելիի,
 Թուղի մրուսող՝ սանկ չարշլի.
 Օ՛ն, բզուկնե՛ր, գացեմ ի բաց
 Խօսիր բերնին մէջ կհս մընաց,
 Զի պարագլուխ խումբին ըմբռոս
 Նշան տալով՝ լաներն ընդոս
 Յարձակեցան խառնաշընփոր.
 Բիր, հովանոց, աւելի կոր,
 Ծեծ ծեծկրուուք, հարուած ու կից,
 Պոռչըսուեներ որոսալից,
 Եւ սուտ կանչեր հուռա՛յ հուռա՛յ
 Ժողովն ըրին տակնուվըրայ.
 Ապողոն բազ էր ու անվախ,
 Բայց կորսնցուց խելքն ու վասիսին
 Եւ բակրսատ խօսիլ կակազ:
 Մուսաներուն ալ ժինծու մազ
 Եւ ընկերոց հոյլ հոյլ մերբուած,
 Շամբուրներու ծայրեն կախուած,
 Տատանեցան օդապարիկ.
 Այն նրւագներ չընաշխարհիկ՝
 Գրլուխ-գործոց գրաբարի,
 Նուրբ ու խորին գաղափարի,
 Այն հատուներ չբնաղատան,
 Ափսո՞ս, եղան պատառ պատառ . . .
 Կարծելով թէ կատղած իժեր
 Տարտարոսէն հոն են խուժեր՝
 Ապողոն մունջ ու կամացուկ
 Յեսակողմէն կծկեց գաղտուկ,
 Եւ Մուսալից հետ միասին

Փրկեց պատիւր Պառնասին :
 Իրապատճեներ անկէ ի վեր
 Դրաւեցին տանարն անտէր,
 Ուր պարզեցին յայտնի որու
 Բաբելոնեան լեզուի դրօս:
 Եւ ա՛լ անկէ ի վեր, ափսո՞ս,
 Մեր դպրութիւնն է մեկ տառ :

25 Օգոստոս 1893





ԲՈՒՆ ԵՒ ՍՈՒԱԿԸ

Գ. ՏԱՅԻՆԵԱՆԻ ՑԼԵԱՏԱԼԻՆ

«Արդէն արեւը մարք մտած է.
Եւ խաւարը կը ծածկէ քեզ,
բայց ճայնը կը թրթուայ տալաւին,
ճայնը, որ սիրտին խորէն կ'երգէ իր Արարիչին
սիրտս միշտ կը պաշտէ զանի : [փառքը,
Մահաստուեր ու քնացող անտավին խորէն
երգէ լուռին մէջ,
եւ թող քու սիրտդ բարձրանայ — ո՛վ սոխակ —
երկինքին իշխող Աստուծուն :

ԳԵՐՄԱՆ. ԺՈՂ. ԵՐԳՆԵՐ



ԳԵՐԵց՝ ՄՈՒՇԵՂ ՎԱՐԴԱՊԵՏ

ոս, միեւնոյն փշուտ աքացիային
տակ, երկու գիշեր առաջ, Գրիգո-
րին հետ կուշտ կուշտի նստած,
խաղաղ ու պարզ երկինքին ներ-
քեւ, լուս պաշտուենի մը բոլոր ցողերովը կը նա-
յէինք այն խորհրդաւոր համաստեղութիւններուն,
որոնք անսահմանութեան հսկայ կուրծքին վրայ
բացուած լուսաւոր պատուածքներու պէս, աւելի
հեռաւորը կը ցուցնէին մեր աչքերուն : Կը խոկանք
մութին մէջ, ու մութին վրայ, երբ անոր խորհրդա-
ւոր լեզուն մեր հոգիներուն կը պարզէ լուս թեան
և խոկացումի, հոգեկան մուայլ ու ցնցող իրակաս

նութիւնները : Վանքին հանդիպակաց կողմը մութ ու թաւ թփուաններ, վարդաբոյր փշտոտ ագուցումներով, չեշտ ու կուռ սեւով մը վրձնուած, մերթ ընդ մերթ կը շարժին զիրենք փայփայող հովերու շունչին ատկ, ու տարութերուած իրենց նիշար բուներուն վրայ, պահ մը կանդ կ'առնուն, լոխ ու մտաշոն, եթերային լոյսերու երաժշտութիւնը ունկնդրելու, և լսելու այն նուազկոտ երդերը, որոնք համատարած լուսթիւնը կը խզեն իրենց թաւիչէ վէտլէտումներով : Մեծ ջինարը, հոկայ տիտանի մը պէս իր տերեւոտ թեւերը կը շարժէ, կարծես վանելու համար իրմէն ուրուներու հոկայ ամբողջութիւն մը, որ իր դիւթային՝ առասպելական ու կրօնաբոյր կողերէն կը ծնին :

Կը նայէինք իրարու, քանի որ ա՞ն այլ եւս պիտի բաժնուէր վանքէն : Ճշմարիտ բարեկամներու մտամիտի նայուածքին մէջ կրօնք մը կայ, որ հոգիին խորէն կը ծնի : Եւ այդ հոգեկան երկնումը ամբողջ գոհացում մըն է, որ կը մշտենչենաւորէ սիրտի յարաբերութիւնները : Զէինք խօսիր, կը մտածէինք միայն : Եւ երկուքս միեւնոյն մասածումը ունէինք : Խորհուրդը միեւնոյն վերելքը կը քալէր մեր սիրտերէն մինչեւ մեր ուղեղը, և հոն մեղի ունկնդրել կուտար բնութիւնը, որ մեր ուրախութիւնը և արտամութիւնը կ'երդէ :

Բուն և սոխառիլ . . . :

Երկուքին ալ կտուցին ծայրը վիշտ մը կայ, աննոցմէ մին վայելով կը խմէ այդ վիշտը, և միւսը երդելով : Երկուքն ալ կուլան ու կը լայնին : Բայց սոխակին լայր անձառ ուրախութիւններու աղքերացումէ մը կը կաթի :

Եւ երկուքն ալ բուխն ու սոխակին, աննոց վային ու երդին վրայ կը խոկանք : Մարդիկ որ ծաղիկներուն զգացում և լեզու փոխ տուին, առասպելներու փետուրներով պիտի զարդարէին

նաեւ շատ մը առաքինութիւններ ու մոլութիւններ, պատիժներ ու փրկանաւորումներ, որոնք այսունեւու իրենց անձնաւորումը պիտի ունենային նաեւ թուչնաշխարհին մէջ : Այսպէսով յօյն դիցաբանութիւնը բուն կը նկատէ մէկը Միդասի երեք աղջկիներէն, որոնք որդեսպան զոհէ մը վերջ, Դիոնիսոսի պաշտամունքին նուիրուեցան և իրմեւ պատիժ՝ Հերմէս զանոնք բուի, ջղիկի և զետարձիւի փոխեց, երեք թուչուններ, որոնք պատժապարտ ամօթի մը աղզեցութեանը ներքեւ, չեն կարող իրենց աչքերը լոյսին բանալ : Կարծես աստուածային պատուհաս մը, լոյսի ճառագայթներուն մէջ կրակէ պատիժ մը դրաւ անմնց համար : Իսկ քրիստոնէական աւանդապէսի մը համաձայն, զոր Ուկէի կը պատմէ, և Շէքսբիր կ'որդեգրէ, հայագործի մը աղջկին էր, որ Յիսուսի հանդէպ կաշ վարուած ըլլալուն իրբեւ պատիժ, բուի փոխուելով, լոյսին նայելու համարձակութիւնը կորսնցոց : Եւ պատիժներուն հետեւանքով բուն, այդ թուչուն աղջկիլը, տաներէն վանստուած, աւերակներու իր դրացնութեանը մէջ կուլայ իր գուման երդերը, մերթ կաղկանձելով և մերթ ունալով, և կուգայ գիշերէ գիշեր նոր խոռվք մը տալ արդէն իսկ անդոս հոգիներուն, որոնց համար խաւարին բեհեղը, գագաղի ծածկոցին տպաւորութիւնը կ'ընէ :

Բայց Աստուած իմ, ան ի՞նչ ոգեւորութիւն է զոր ունի ձորամշի փշուտներէն բարձրացող սոխակին երգը : Կրայոյզ մելամազծոտութիւն մը, տարփիկ արբշունք մը, տենդային արբեցութիւն մը, բիւրեղ հաչականութիւն մը, որ կը հոսի իր կտուցին ծայրէն, իր մոխրագոյն կուրծքը ուռեցնելէ վերջ : Զայներու բիւրերանգ ելեւէջ մը, մտեռանդուն և անմոլոր գաշնակութիւն մը սոյլերու, սուր ու նուազկոտ հառաջանք մը, իրբեւ հուսկ

աւագումը բոլոր թոչուններու երգերուն։ Սոխակը կ'երգէ իր սէրը ու մեր հոգիները, վուշէ թառը սպիրօծելով իր հրաշտնչ երգին դայլազներովը։ Սոխակ և ծիծառն մէկան կը վերազարթնուն իրրեւ գարունի թոչուններ, և վարդերը անոնց երգին տախն է որ կը կարմրտախն, անոնց երգին խնկաւէտութիւնը ծծելով։ Ծիծառին սուր աղաղակը և սոխակին եղերերգակ տրտունջը մէկ վէրքէ ծորող արիւնի կաթիլներ կը թուին ըլլալ։ Հեռաւոր խընամութիւն մը, ներքին կատ մը կայ իրենց վերադարձին միաժամանակութեանը և իրենց երգին համամանութեանը մէջ։ Ուստի ի զուր չէր որ յոնական դիցաբանութիւնը սա զրոյցը պատմեց մեղի։ Պանախոն, իր Պրոկնէ և Ֆիլոմէլ աղջիկներն առաջինը կին տուաւ Սրէսի տղուն, Տէրէի, որ Պրոկնէչն Իդիւս անունով զաւակ մը ունեցաւ։ Տէրէ սիրահարեցաւ Ֆիլոմէլի և պատրուակիլով թէ Պրոկնէ մեռաւ, զանի կնութեան առաւ, ու անմիջապէս անոր լեզուն կարեց որպէս զի չկրնայ գաղանիքը ուրիշն պատմել։ Ֆիլոմէլ զդաց խարկանքի մը զո՞ եղած ըլլալը, ու շրջազգեստի կերպաւոն մէջ զիրեր բանեցաւ, իր պատմութիւնը հոն դրոշմելով։ Պրոկնէ երր այդ կերպասի կոտրէն իմացաւ գործուած սրբազդութիւնը, իր ձեռքով սպանեց իդիւսը, և զայն հօրը կերցնելէն վերջ, տունէն փախաւ քրոջը հետ։ Տէրէ հետապնդեց զանոնը։ Երբ ա՛լ աղասում չկար, երկու քոյլերը աղաչեցին աստուածներուն որպէս զի զիրենք թըռչունի փոխեն, աւելի շուտով կարենալ փախչելու համար։ Պրոկնէ՝ սոխակի և Ֆիլոմէլ ծիծառի փոխուեցան։ Ա՛յդ օրէն երկու թոչունները անքածան են իրարմէ։ Պրոկնէ կ'երգէ իր սէրերը, իր ասրբանքները, հոգիին ամրող օծութիւնը տալով անոնց։ Իսկ Ֆիլոմէլ՝ զրկուած իր եղուկուն, ծիւ, ծիւ կը պուայ իր երգերը առանց զանոնք

կարենալ ներդաշնակաւորելու։

Մենք ամէնքնիս առանց այդ զրոյցին աեղեակութիւն առնելու, կը պաշտենք սոխակը իր երգին հետ, և կը գթանք շարունակ ծիծառին վրայ, անոր միրասուած երգին և ուր թեւերուն խորը խորհրդաւոր գաղանիք մը կանխատեսելով։ Իր առանձնացումի կոյս խոներուն մէջ սոխակը կը նախինարէ գիշերուան լուռը, որովհետեւ ա՛ն միայն կրնայ իբրեւ սեւ՝ սգաւոր շրջանակ մը ծառայել իր երգին, որուն մէջէն ամբողջ կենդանութիւն մը, սիրով ու վշտով, ծիծառով ու լացով խառնուած մելամաղձու կենդանութիւն մը կը պութկայ։ Իբրեւ սիրերգակ թոչուն, սոխակէն մասնաւոր խրաչում մը ունեին լատին եկեղեցինե հայրերը, Միջին Դարուն։ Զրոյց մը կ'ըսէ թէ Ս. Պետնարոսս որ մը կիստերկեանց վահքը այցելեալ տեսաւ թէ հոն շատ թոյլ էր սիրով կարգապահութիւնը, և երբ վանքին շորջը լսեց սոխակներուն հեշտասէր երգը, շուտով ըմբունեց եղբայրներուն աշխարհիկ ոգիին պատճառը։ Սրտմահցաւ և ձեռքը վերցնելով, վանտեց բոլոր սոխակները, որոնք գացին կիներու վահքի մը մէջ ապաստան վնսուել։ Կ'ըստի թէ, հոն, շատ աւելի նշանակական յաջողութիւններ ունեցան այդ վտարուած սոխակները։ Ինչ որ ալ եղած ըլլաց սոխակին երգին կմախքը գեղերինող զդացումներուն թելակրոնքը, հակառակ բոլոր նախապաշարումներուն, սոխակը մնաց իր գեր սղանց երգողը ամէն աղգի սահաստեղծներուն համար, այնպէս որ երբ վայրկինական ներշնչում մը բացաւ ժողովրդական երգիներուն, աշուղներուն բերանը, անոնք առաջին անգամ վարդն ու սոխակը երգեցին՝ միոյն մէջ տեմնելով գունագեղ սէրը, լուռ ու հոտաւէտ, և միւսին մէջ ասրբանքը՝ համակ երդ ու գաշնակութիւն։ Ասոնց երգին ու տեսքին պէսսիսութիւն-

ները իրեւ կենդանի և յարածուն վառարաններ,
պիտի ջեռուցանեն շարունակ մարդկութեան յոգ-
նած ու պարտասած հոգիները, իրենց ցնցող բոյ-
րովն ու երգով, և սոխակը պիտի մնայ լեռներու
և ձորամէջերու թագուհին, բիւրեղէ երգը իր
կտուցին ծայրը, մինչ վարդը պարտէզներու գե-
ղուհին պիտի մնայ կարմիր շրթունքին վրայ պա-
հած՝ իր բոյրերու անփւթ սրուակը:

Լեռներու կուշտը, հողի կոչտ դուզձերուն
վրայ, կամ կակուզ մամուռներու հեշտանկողին-
ներու գիրկը, հովանիներու տակ մրափող հովլու-
չին, արօաղիր երկրագործն ու յոգնած մշակը
մաիկ պիտի ընեն շարունակ սոխակին երգը, որ
գիշերուան վառ ջահերուն ներքեւ, օրհնութեան
մը պէս պիտի գեղգեղէ՝ բնութեան Մեծ-Տա-
ճարին կապացուլը հւսոււած զմրուխտ կամարին
տակ, և այդ երգը մշակներու, հօտաղներու և
գեղջուկներու ալօթքին թարգմանը պիտի ըլլայ
յանիսենապէս, քանի որ կեանքը տռանց երգի
չպիտի կրնայ ապրիլ։ Երգը — սոխակին երգը մա-
սաւանդ — կրօնք մըն է, որ կը սփոփէ, կը յու-
զէ մութին մէջ արձագանգող իր նուրբ կո-
հակներովը, և փրփուրներ կը ծնցնէ ճերմակ ո-
մաքուր, կոյս հոգիներէն ներս։ Եւ արդէն ի՞նչ
է կրօնքը, եթէ ո՞չ «յաւիտենականութեան նուր-
ուած բանաստեղծութիւն մը»։ Եւ հաւատքը,
Ասսուծոյ նուրիրուած երգը, հոգիի երաժշտու-
թիւնը չէ միթէ։



ՎԵՐԱԴԱՐՁ



Գրեց՝ ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԵՒՆԵԱՆ

կո՛ւր, քրնար, սեւ օրերուս ընկերդ իմ,
Մատներո՛ւս տակ մոռացութեամբ ոն-
րազործ,
Եւ յագեցուր կարօները մտերիմ
Զբւարնասէր լիմար սրտին իմ անփորձ։

Պատրանեներու թիրեռներուն հոյն յետին
Կը խուսափի հորիզոնի շուբին մէջ,
Ու ցաւազին վաճկեր ալու երգի մ'նին
Հոգւոյս խորը կ'առնեն յուշիկ ելեւէջ։

Եկո՛ւր, քրնար, տո՛ւր ինձ կուրծքը, գրկեմ թեզ
Մոռացութեան ապաւառով զզահար,
Եւ յոյզերուն կիհակները դեղ առ դեղ
Թողլ կուտակուին սրտիս վրայ, — խօլ ժամիար։

Ժողվենի հետըդ փունջը ցրուած վանկերուն,
Փրնըրուե՛նի հոն միբրարանին ապահով.
Ցոյիեր, կայծեր կը մարին մեր շուշզը, հեռուն,
Ու կը փշէ միայնութեան ցրտին հով։


Վա՛ղ ժեզ մոռցայ, լքուած քընարս իմ տխուր,
Անփուրութեան համբաներուն մէջ մոլար,
Ու վերադարձն հոգւոյս լի է զերասուր
Տազնապներով դառնակսկիծ, խղիահար :

Մի՛ անգոսներ դժբաղդ այս սերն յետամնաց.
Թող քրբուան նորէն ինձմով քու լարեր,
Եւ սրբազն պահարանին դոնէն բաց
Նոր սաղմոսներ բող թեւ առնեն դեպի վեր :

Եկուր, քրնար, միակ դու ինձ բարեկամ,
Պատմեն յուշիկ մեր երազներն իրարու,
Մեր ցաւին մէջ՝ մինակ, հպարտ այս անգամ,
Եւ հեղիանեն մարդոց խապառ մենին հեռու :



ԾՈՒՐԵՐՈՒԻՆ ՏԱԿ



Տնօնիներու բուրումնաւէս շուրին մէջ
Կը սարփայ դալարին,
Ու ցոլֆերու հմայնոս բիւր ելեւէջ
Թուփերուն տակ կը մարին :

Զեփիւռն անուշ, անմուն համբոյր խնկաւէս,
Կը սարսրուայ ծառերուն,
Սաղարբներուն միջեւ ու երգ մը քովեդ
Կը խուսափի դեպ հեռուն :

Արծար, ոսկի միջատներու եւ թիրուանց
Պարեր՝ կ'ըմպեն նրբուազին
Երանութեան այս վայրկեանին ծոցն, անանց
Անուրշն օրուան մը կեանքին :

Կ'ալեկոծի կանանչն աղու արտերուն
Հանգէս ծովի սրբուսին,
Հարսնուկներու շրջազգեսին ջինջ արխին՝
Կը պապրդայ մեր չորսդին :

Ու կը շրճէմ խունկը բոլոր խոտերուն,
Ծաղիկներուն անձանօր,
Ու կ'արքենայ հոգիս բաղծոն, սարսրուն
Երազներուն իմ անօր :

Մայր բընութեան գրեկին վլրայ տարփորէն
Համակրութեան ցանցեր բիւր,
Կը լըծորդեն իմ եռորինս համօրէն
Եւ հիւլիներն իմ անձնիւր :

Ու կը քրբուայ ներսս,—տահարանձկութեանց,—
Սալմոն անմուն ցըմծութեան.
Մելամաղձոս անուրջներուն իմ անանց՝
Կ'ուրուազծուի լուռ ատեան :

Կնձնիներու բուրումնաւէս շուրին մէջ
Կը սարուայ դալարին,
Ու ցոլֆերուն հմայնոս բիւր ելեւէջ՝
Թուփերուն տակ կը մարին :



ՍՊԻՏԱԿ ԵՐԱԶ



ՍԻՊԻՏԱԿ

ուս երկայնքով հորիզոնին
ամպամած

Կը դեզերի հեզ ճամբորդը վարանոս,
Եւ գիշերուան արհաւրալի դռնեն բաց,
Սեւ ուրուական՝ կիջնե խաւարն անամօր :

Կը տեղայ ձիւնն անկարեկիր բուլուրեամբ
Ասեղնելով իր անհուն տանարն ըսպիտակ,
Եւ բրնուրեան հոգին բաղծոս, մամինոփ՝
Կը սրբարփայ այն ձիւնեղին սուզին տակ :

Անբիծ, ներմակ դաշերուն մէջ անսահման
Արհաւիրք կայ լուռ, խաղաղ իրերուն,
Եւ ըսպիտակ ըրդբաները լիռներուն
Ունին խորունկ լրջուրիւնը սպաման :

Ու կը լուսին տարտամ վանկեր վայրենի,
Խուլ արձագանգ՝ լերանց կարմիր կիրերուն,
Եւ հեզ ճամբորդն արհաւիրքի տենդն ունի,
Իր ծածկամիտ ճակատագրեն՝ ըլւարուն :

Կը մրազնի ցուրտ նայուածքը ճամբորդին,
Սյս սպիտակ ողողման մէջ՝ խեղդաման,
Ու կը դիզուի ձիւնն անտարեր իր չորսդին,
— Սեւ մատուրին,—յութիկ, անձայն ու խաղալ :

Եւ ան՝ հրպար՝ կը մարտրնջի անտրունջ,
Անգուր ներմակ յարձակման դէմ դատախազ,
Որ կը տեղայ մղուած հովին սառնաւունչ,
Յութիկ, խաղաղ, անձայն, փափուկ, հեղանազ :

Ալ կը սպառին վերջին ուժեր մարդկալին,
Եւ ճամբորդը կ'ընկնի բաղդին անձնատուր,
Ալ երկիւղի չունի արան իր հոգին,
Խիջնն ապահարկ է վատուրեան խայրին սուր :

Հիմա՝ անուշ ներմակ երազն անպայման
Կը լեցրնե զինջ, միամիտ իր հոգին,
Արբեցուրիւնն այս անբասիր սէզ մահուան
Չինքն է բաղեր մոռացման գիրկն հեշտագին :

Ու կ'երկարի պահն սպիտակ երազին
Հեռու՝ մարդոց զիտուրեննեն սրբապիդ,
Կը ցրտան հոն անկայուն կիրեր սին,
Ու կը սառին ամեն պատրամք, ամեն իղձ :

Մահը, բարի ազատար, կը հասնի
Վրսեմ պահուն անպարագիր անուրջին,
Եւ ճամբորդը ալ մարդկալին հոգ չունի,
Եւ հեշտակներ իր հոգւոյն ուրց կը քոչին :

Տակաւ գիշերն իր անսահման սեւ ուրցան
Կը տարած դաշին վարայ մենաւոր,
Ու կը բաղուի ալս լուռ գաղտնին՝ իր յաման
Ու ցրտագին ծալքերուն տակ սրգաւոր :





ԻՐ ԱՏԵԼՈՒԹԻՒՆԸ

Գրեց՝ Տիկ. ԶՍ.ՊԷԼ. ԵՍՍ.ՅԵՄ. Ե



նչո՞ւ այդ մարդը զիս կ'ատէր, ո՛է
ինչո՞ւ... ահաւասիկ երկու ամիս ան-
շաւ այն ահուելի օրէն ի վեր և իմ ամենասաստիկ
տենդերուս մէջ՝ ինչպէս ապաքինման երկար միւ-
ջոցին, ամէնքն, ինծի կը հարցնէլին և կը պիտին
նոյն բանը... իբր թէ ես գիտայի, իբր թէ կա-
ռնացի բացատրել թէ ինչո՞ւ, ինչո՞ւ այդ մարդը
զիս կ'ատէր :

Ինչո՞ւ... սրտիս խորէն և գրդովուած հոգ-
ւոյս խորէն ալ ես ինքինքիս կը հարցնեմ նոյն
բանը. ինչ բանով և ինչո՞վ ես կրնացի մարդու մը
ատելութիւնը գրդուել այդ աստիճան, մարդու մը
զոր հազիւ թէ կը ճանչնայի և որ ոչ մէկ կերպով
չէր կրնար իմ գոյութեանս թշնամին ըլլալ :

Առաջին անգամ իրեն հանդիսած էի բարե-
կամուհիի մը տունը. բարձրահասակ մարդ մըն էր,
շատ թուխ և լռակեաց. երբ բարեկամուհիս զիս
իրեն ներկայացուց, գլխով երկայն խոնարհութիւն
մը ըրաւ և երբ ժպտադէմ ձեռքս կ'երկնցնէի իրեն.
աչքերս իր աչքերուն հանդիսացան, ան իր ուր-

անողոք դաժան աչքերուն : Այդ վայրկեանէն
զգացի որ այդ մարդը զիս կ'ատէր :

Ինչո՞ւ... կարելի՞ է ըսկէլ . կը ճանչնամը զիս ար-
դէն, թէ իմ անձս իր մէջ տաժանելի և քնացած
կիրք մը արթնցուց... մէկո՞ւ մը կը նմանէի որ
զինքը տանջած էր երկարօրէն, որ իր եղերական
հասակը գալարած էր ցաւի տագնապներուն մէջ,
որովհետեւ յայնի՛ արցունքի խորշոմներ կային
բերանն ի վար, քունքերուն վրայ, որովհետեւ իր
ճակատը գրեթէ ճմութեած էր հոգերու փոթառում-
ներով և իր անձը ամբողջովին, լռակեաց, դաժան
և ախտոր՝ անհանգստող և տարամերժ բան մը
ունէր ամէնուն համար :

Բոլոր ասնք կը լինեմ հիմա, որոշ և մեկին,
իմ ապաքինմանս երկար ճանձրոյթիս մէջէն, բո-
լոր ասոնք, ա՛ն, և կը խորհիմ թէ ի՞նչպէս այն
ատենէն, չկատկածեցայ իրմէն :

Որովհետեւ այն ատեն, իր անկարեկիր և
սպառնալից աչքերուն կախարդանքին ներքեւ էի
և հակառակ ինծի ազգած վախին՝ դէպի իրեն
անխոստովանելի հակում մը կը զգայի, բոլորովին
ճշմարիտ է ասիկա, դէպի իր չարագուշակ և սե-
նայուածքին :

Կը զգայի որ սակայն այդ մարդը բուռն կեր-
պով զիս կ'ատէր, գիտէի որ ատելութիւնը փոթո-
րիկի մը պէս կրքալ կը բարձրանար հոգիին մէջ,
անդիմաղբեկի՛, տիրական՝, և երբ ստիպուած իր
ատգոյն մատները կ'երկնցնէր խմբներուս ու ցաւ-
ցնելու չափ կը սեղմէր ջղածգօրէն, օ՛հ, չատ աղէկ
վիսէի թէ զայրոյթի և զսպուած վայրագութիւն-
ներու զգացում մը սառի պէս կը պաղեցնէին
զանոնք :

Ոչ ոք շուրջս անդրագարձած էր այս բանին,
որովհետեւ կին զերեզմանի պէս փակ կը մնար
ամէնուն և ընդհանրապէս կ'ըսէին իրեն համար
թէ անախորժ մարդ է. այսչափ միայն :

Օր մը իմ բարեկամուհինս տունն էի երբ Ան մտաւ սրահին ներս . շաբաթներէ ի վեր զինքը չէի տեսած , շաբաթներէ ի վեր այդ անգութ մարդը հալածուած էր իմ ներկայութենէս . իմ հոն ըլլալս դիտնալով չէր ուզած գալ , չէր ուզած իր նայուածքին վրդովիչ թոյնովը զիս արբեցնել ... որովհետեւ ... ըսի թէ այն ատեն չեմ զիտեր ի՞նչ մոլի , հիւսնդադին զգացում մը օձի պէս սպրդած էր հոգւոյս մէջ , չեմ գիտեր ինչպէս տենչանքը ունէի այդ նայուածքին ներքեւ ըլլալու , թոյլ առալու որ իմ պայծառ , կապոյտ բիբերս պղտարին իր նայուածքին միժութիւնովը . ասիկա գրեթէ բոնաբարում մըն էր , որուն միջոցին դղրդուած յուզմունքէ հողիս կը խոյանար դէպի անծանօթ և խոսվիչ հորիգոնները հեշտանքին :

Կը զգացի որ իր սուր և երկայն ակռաները իմ տհաս միսիս փափաքը ունէին և ասիկա զիս մինչեւ այն ատեն անծանօթ սարսուով մը կը ցնցէր ... վերջապէս ... : Ի՞նչ անցեր էր իր սեւ և պղտոր հոգիին մէջէն . չեմ զիտեր . միայն թէ որոշ կերպով Ան զգուշացած էր իմ ներկայութենէս . իմ բարեկամուհիս ըսած էր ինծի բոլոր ասոնք իրենց յալտնող մանրամատնոթիւններուն մէջ , ըսած էր թէ Ան բացակայած էր բոլոր այն տեղերէն ուր ես կրնայի գտնուիլ , ուր կրնային իմ վրայ խօսիլ և թէ ամէնքն ալ կարծեր էին թէ չբաժնուած գորովանքի զգացումէ թելազրուած էր ... գորովանք ... ա՛հ . բայց ես զիտէի թէ այդ մարդը զիս կ'ատէր , գիտէի թէ իմ պղտիկ անտեսուած , երիտասարդ էութիւնս , ատելու թեան , կերքերու փոթորիկ մը կ'արթնցնէր իր չարաշուաք հոդիին մէջ . ի՞նչ ունէի , ա՛հ , իմ մորթիս վրայ , իր աչքերը ինչի՞ կը հանդպէին իմ պայծառ բիբերու մէջ որ մէկէն խայթուածի պէս կը ծամածուէր իր ցաւազին դէմքը և մատները կը

սեղմուէին ջղաձղուած՝ բիրտ վայրագութեան ունայն տեհնչանքով :

Այսպէս այն օրը յանկարծ Ան երեւցաւ սրահին մէջ . դեռ շատ կանուխ էր և մինակս էի . բարեկամուհիս քովի զարդախուցին մէջ զբաղած էր երեկոյեան արդուզարդով : Սապէս՝ նստած էի սեղանին առաջքը , կոճակու դարձուցած դուսին և թերթեր կը թղթատէի : Ան էր . հասկցայ որ Ան էր ... ու այն ատեն , այն ատեն միայն վատ և երկչոս զգացի ինքզինքս , զգացի որ մինակս իրեն հետ մեծ և անդարմանելի վատանգի մը մէջ կը գտնուէի ... չհամարձակեցայ գլուխս դարձնել և իրը թէ շատ զբաղած ըլլայի , ա՛լ առելի վլուխս ծոեցի թերթերուն վրայ ... և ա՛հ ... ճիշտ օձիքիս վերեւ ծոծրակիս վրայ , անսահմանելի պաղութեան մը զգայնութիւնը ունեցայ . իր ձեռքն էր , թէ արդէն մետաղի մը ցրտութիւնը և կամ պարզապէս ... ոհն ... զսպանակէ մլուածի պէս ևլայ ոտքի և զինքը տեսայ կանգնած ետեւ , ձեռքերը գրապաններուն մէջ , չափազանց տժդոյն և դողդոջուն . քանի մը քրտինքի կաթիլներ քունքն ի վար կը վաղէին և աչքերուն մէջ հատատ կամքը կար քանդումի , սեւ և խուսափուկ բոցի մը պէս որ նայուածքին տարօրինակ և չարաշուք շիլութիւն մը կուտար : Պիտի պուացի զիւահարի պէս , պիտի փախէին երբ բարեկամուհիս սրահ մտաւ , ո՞վ գիտէ ի՞նչ խորհեցաւ մեզ տեսնելով այդպէս , դողդոջուն , շուարսծ որ թեթեւ մը ժպտեցաւ և իմ սառած ձեռքերս առնելով իրեններուն մէջ ջերմապէս համբուրեց զիս բառեր մրմնջելով ականջիս՝ որոնց շփոթ աղմուկը միայն լսեցի . բայց ի՞նքը , ա՛հ ... տարօրինակ և անողոք մարդը փնկած էր թիկնաթուի մը վրայ յոգնութեան և ջատաման անհուն արտայատութիւնով մը , գեռ գրեթէ դողդոջուն , այնքան իր

միանունքները դէմքին վրայ արագ և յարափոփոխ
պրկուններ ունէին և զինքը կ'այլակերպէին բոլո-
րովին :

Յետոյ զարմացած բարեկամուհին աչքին
առաջք, ինքզինքէն ելած դէսի ինծի եկաւ,
աչքերը գոց՝ կոյրի պէս և շրթունքը սեղմուած,
այնքան որ իր սուր և երկար ակրաները կը կա-
զապարուին սեւ պիտիրուն ներքեւէն, և ահա՛
նչիւնը դուռին : Երբ նոր այցելուները սրահը
մտան, Անիկա աներեւութացած էր. բայց այդ
վայրկեանէն զգացի որ քայլ առ քայլ կը յառաջա-
նայի անխուսափելիին, զգացի որ երկայն և դժնդակ
ողեւարի մը մէջ էի և թէ օրերա համբուած էին :
Այս աչքերը չէին սաեր, այն աչքերուն մէջ ոմիրը
դարանած էր . . . երկայն մարտիրոսութիւն մը եղաւ
անկէ ետքը իմ կեանքս, տաժանազին, ցաւատանջ,
դոդանար. ջղագրգուուած վախէ և կասկածէ, չէի
կրնար փողոցէն անցնիլ, որովհետեւ մարդու մը
ունաձայնը ետեւէս զիս կ'ահաբեկէր :

Որովհետեւ ծշմարտապէս իմ ետեւէս կուգար,
պրովհետեւ. իր եղերական աչքերը կը սեւեռէին
վրաս, կը լրաւոէին իմ շարժումներս, որովհետեւ
իր սեւ հոգին, իր ատելութիւնով լիցուն հոգին
ծարտի էր իմ կեանքիս . . .

Ամրաներ անցեր էին և սկսած էի յոյս առնել,
կաղղուրսիլ, տակաւ առ տակաւ անոր չարաշուռք
սիլուէթին յիշատակը կ'արտուէր մտքիս մէջէն և
կը դադրէր իմ սեւեռեալ դաղափարս ըլլալէ.
երկայն ատենէ ի վեր գունատ դէմքս, ապրելու
ուրախութիւնով վերսկաս վարդադունիլ, և եթէ
աչքերս չը անակող մութ ծիրը չըլլար, ոչ ոք պիտի
կրնար գուշակել երկայն ամիսներու տագնապալի
օրերս . . . ահ, չէի գիտեր որ այն ատեն իմ
ուսերուս ետեւն էր ան, չէի գիտեր թէ իր
շունչը, իր թունառոր շունչը կար իմ մթնո-

լորտիս մէջ. ի՞նչպէս կրցեր էր Ան, ստորին
ոճրագործի մը պէս սահուըտիլ, ի՞նչպէս կրցեր էր
զարմանալի պալարիւնութիւնով մը խորհիլ օրերով
իր ոճիրին վրայ, այդ տեսակ գործերու վարդ մար-
դու մը պէս . . . երբ կը խորհիմ բոլոր ասանց, ինծի
կը թուի թէ հնն սանդուխներուն վրայ եմ դեռ և
իր երկայն մատները, իր գիւազին և պաղ մատ-
ները կը սեղմուին ծոծրակիս վրայ . . .

Այսպէս, կեանքին սկսած էի վերադառնալ,
և իրիկուն մը այցելութենէ մը վերադարձին իմ
մէկ աղգականիս հետ որ մինչեւ դուռը ձգեց զիս,
սանդուխներէն կը բարձրանայի . . . յանկարծ կեցայ .
Ան էր . . . մութին մէջ. բան մը չէի տեսներ, բայց
կը զգացի որ Ան հոն էր, իր բոլոր հասակովը
կանգնած քանի մը քայլ անդին գլխուս վերեւ .
բոպէ մը կեցայ այսպէս և ալ որո՞չ չեմ լիշեր . . .
տարտամ զգայնութիւններ պատառ պատառ կու-
գան յիշողութեանս. գեանէն բարձրացայ մէկէն
ու հագուստներս բացուեցան կուրծքիս . . . ահ,
զարհուրելի հրէշային բան էր . . . յետոյ հազիւ թէ
սեղմուած զգացի ինքզինքս իր երկայն, ջղուտ
թեւերուն մէջ. տարօրինակ աղմուկ մը . . . խուլ և
զօրաւոր որ ինծի հետուէն, շատ հետուէն թուեցաւ
և որուն միջոցին ինչպէս եթէ կայծակ մը անցած
ըլլար զիսէս, ամրող ուղեղս լուսաւորուեցաւ
անբացտարելի և արագ փայլիսնով մը . . . յետոյ
չնչին բանի մը, կաթիլ մը ջուրի անկումը պարապի
մէջ ու մութ . . . մութ . . . մութ . . .

Զիս հնն գտեր էին այդպէս ողորմելի, քուն-
քիս վրայ խոչըր բացուած վերքով մը և օրեր
կեանքս վտանգի մէջ եղած էր. Անիկա . . . գտեր
էին իր տունին մէջ աչքերը սեւեռած, ապուշցած,
անդիստակից. Անկէց ի վեր, ըսին, իր cellulite-ին
մէջ ուր չուտեր, չխօսիր, չքնանար, նոյն թըմ-
րութեան մէջ կը գանուի աչքերը սեւեռած կէտի

մը, յարատեւ, անխոնջ, ժամերով, ժամերով...:
 Հիմա որ ապաքինման արձանս պիտի վեր-
 ջանաց, հիմա որ հարկ պիտի ըլլայ մարդերուն և
 արդարութեան բացատրել թէ ինչո՞ւ, ինչո՞ւ այդ
 մարդը զիս կ'ատէր, ի՞նչ պիտի կմնամ ըսել.
 Իմ վէրքոտ ուղեղիս մէջ այս հարցումը կը յաճախէ
 ու կը տանջէ զիս. թերեւս նոյն խակ Ան, իր խցիկին
 մէջ, աչքերը սեւեռած ինչո՞ւն կը հարցնէ իր շփոթ
 և գիւային զգացումներուն,

Ու կը խորհիմ որ եթէ սկիզբէն պատմեմ բա-
 յարձակ ճշմարտութիւնը իր բոլոր մանրամանու-
 թիւններով, այդ մարդիկը պիտի հասկնան թէ
 ինչո՞ւ Անիկա զիս կ'ատէր:



ԿԱԻԸ ԶԻ ՓՈԽՈՒԻՒՐ



ԳՐԵՑ ԹԱԿԱՌԻՆՅԱՅԻՆ

ատզամախօսներ ատենին չեն մնկ-
 նիր, ատենին չեն դառնար, հըս-
 կելու գործը ընողները ուրիշ կողմ՝,
 փորտած աչքերով արձաններու ոտքի վրայ կը
 քնանամն, կոյզերը, ու երկինքին երեսը ծոյլ վարանք
 մը կը նշմարեմ:

Երիթ ու դարձի սա շեղումները ու հսկողնե-
 րու այն կամովի կերպերն ու անհոգութիւնները
 իմ յաւիտենապէս անփոփոխ հռչակած օրէնքնե-
 րուս իմաստը կը ձախողեն որ ինձի աղէկ չերեւնար
 սակայն : Արեւին լոյսին ու գնացքին նայող պաշ-
 տօնեան առաջինն է որ անհարկի շտապում մը կը
 ցուցնէ և միւս լուսագունդերը գրեթէ երեսի վրայ
 թողուած արագ չեն անդրադառնար, աղուոր չեն
 ճառագայթեր : Աստղերը՝ մէկ մէկ անուննին չպիտի
 ուղէի յիշել, հիմն ողէս ա՛լ շատ անուշ լոյսը չեն
 անձրեւեր վարերը : Հրատի ու Արտաւեակի աչքե-
 րուն մէջ մարած բաներ մը կը տեսնուին, լուսնկան
 իր մեռելոյթի երեսովը տգեղ գանկ մըն է միայն,
 ծիր կաթին պղտոր զիր մը որ կամաց կամաց իր
 գիրքին վրայ կը սառի : Կապոյտը՝ երկնակամարի
 կապոյտը վարերէն թացուած կայծերէն խանձուտած՝
 տեղ տեղ այրուցքի նշաններ կ'երեւցնէ : Արշալոյ-

սին բոսերը հետզետէ չորցած կակաչին երանդովը
սկսնակ ձաշակի կասկած մը կուտայ . սնդին , վեր-
ջալոյսի աղուորութիւնները , թողուած են որ սար-
սպանցուցիչ հիւսիսայգի մը պատկերը կախին գիշե-
րին ճակատը . ո՞րն ըսկէ : Երկինք այլ եւս իմ
փառքս չի ցուցադրեր , երկիրն ալ իմ մեծութիւնս
չետող քնարը լսեցուցած ցնորսակոծ կոխնչներով
կը բաւականանայ : Աս ալ միայն անոր համար որ
ծիածանը իր հաղած լմացածի անկումովը դէշ կա-
մուրջ մըն է դարձեր պարզապէս , որու վրային
միայն ես կրնայի հասկնալ թէ՝ դէպի երկիր մա-
քուրներշնչումին ու աշխարհաչն խաղաղութեան
առաքումը օրը օրին ինչ արգելանքներու կը հան-
դիպի , ու երկիր , աշխարհ , ինձմէ տակաւ հետա-
ցոծ ըլլալու , ուժաննելու խամ գայթումներով ,
ինչ ձեւաղեղծութիւններու անձնատոր կը մնայ ,
ինչ կուսառ բնազդներով կը տառապի , ի՞նչ պիզծ
երաշներով կը հեւայ :

Բայց , է՞ն , ալ չպիտի կրնայի համբերել , կը-
սեմ , սա վիճակներով դեռ կը կասկածիմ որ ինձի ,
իմ գոյտվանքս ապավոնող տիեզերքն ըլլայ վաղը
յանկարծ իմ գլխուս փլչողը , կը մեռնիմ կրնայ ըլ-
ւալ , այն պահուն իմ գործերս ալ կը մեռնին , այն
առեն գուք քիչ մըն ալ ձեր վիճակին խորհեցէք ,
ես հաւասարապէս ձեզի ալ կը մեղքնամ : » Խորունկ ,
անշուկ մտմատք մը սկսաւ այս խօսքերը մտիկ
ընելու կանչուած երկնարհնակներուն մէջը : Դարերէ
ի վեր սուածին մեղդրող ձայնն էր որ կը լսցնէր
Սաստուած իր շուրջիններուն , որոնք իրաւ է որ
իրենց գործերը մոռցած ըլլալու աստիճան ստամ-
բակ մեկուսացումով մը միմարացած՝ երբէն ի վեր
էր , պատող կ'երեւնային կարծես , որ ծերացած
Սաստուծոյ մը մահէն ետքը անոր ծիրանին բաժնին
մէջիրնին :

Խաբուեր էին սակայն , ու պատճառն ալ ի՞նչ

դերըուկ , որչափ աշխարհիկ : Խարուածները , մի-
մարայածները՝ անհուն բազմութիւնն մը շողուն
իրաններով գեղեցիկ հրեշտակներու , այս շատ բա-
նաւոր աղղարարութեան վրայ , չնչահեղձ՝ որքան
շանթահար , թեր բացին մէկէն ու իրենց գործե-
րուն վազեցին . հոն միայն մէկը կը տնտնար :

— Օչ , քեզի հետ ըլլայինք հիմա , կ'աւելցնէ
Մսծ Տէրը , ըմբուստ մը չես կը յուսամ :

— Իմ գործս շատ ծանր է , Տէր , չեմ կրնար :

— Ի՞նչ գործ , ի՞նչ ծանրութիւն :

— Աւ ես ան աշխարհքը չեմ կրնար երթալ ,
ինձի վիճակուածը գմնդակ պաշտօն մըն է . մար-
դիկ ամէն օր կրակէ անմէջքներ կը նետան դլխուս .
անոնք այնպէս են պաշարուեր իրը թէ՝ ես եղած
ըլլայի պատճառը իրենց լացերուն , մինչ ձշմարիտ
է թէ ես մեռնողին միայն հոգեվարքին է որ կը
հասնիմ , բայց որո՞ւ ըսես :

ՍՅոնք գեռ ծնած ատեննին ալ կուլան , խել-
քիս չի պառկիր :

— Շատ կուլան :

— Շատ , տէ՛ր , շատ , նոյն ձակասադրով
վայողներ ամէնքն ալ , տմէն օր ալ այնպէս :

— Քուկդ գոնէ անիմաստ առարկութիւն մը ,
այնպէս չէ :

— Սնիմաստ ինչո՞ւ , Տէր , երդում քեզի որ
ետեւէս հայնոյողներ ալ կան :

— Վայ . . .

— Ճարպիկ կ'ըլլամ որ ձեռուընին չեմ իինար ,
եթէ ոչ . . .

— Բայց անիբասութիւն է ըրածնին , արցոնք-
ներու մէջէն աչք յարթող նայողները գեղեցիկ
կարմրալանջը սատկած ջղջիկ կը տեսնան . ծուռ
կը արամարաննեն , մարած այն ճրագներուն ետեւ
իմ չոնչս ալ փիկայ , ես իրենց ման չեմ տուած ,
աղէկ հասկցիր :

— Մտիկ կ'ընեմ , Տէ՛ր :

— Նախ իրենք պէտք էին համոզուիլ թէ

Կեանքը հրաշալի ամբողջութիւն մը ընելու համար
ի՞նչ ընտրութիւններու ելայ, ի՞նչ թանկագլու կաւ-
դործեցի: Մարդը՝ զլիսի ցաւ ունեցաւ վերջը,
ասոր ե՛ս ի՞նչ ընէի, դուն ի՞նչ ընէիր: Եւ իրաւ,
զլովսէն կանչողը ես ալ կ'ըսեմ թէ յուսահատ
բռնուած մըն է, հիւանդ մը՝ որ իր մահը կը կան-
չէ: Մարդիկ աս ցաւը բոլոր ուրիշներու հետ իրենք
շնուցին, վերջն ալ բնական էր որ գերեզմանները
շնուելու հարկ մը ծնէր: Շատեր անմիջապէս օրբան-
ներուն մօտ փորեցին այդ փոսերը, ուրիշներ ալ
քիչ մը անդին դացին, պեղեցին: Իմ սխալս ո՛ւր
ըլլար:

Այն գիւտն ալ ի՞նքնին քիչ սքանչելի էր որ
ամէն գոյն գեղեցկութիւն տեղնիտեղը համադրելէ
ետքը, մարդուն կուչար մազերով հրեշտակ մըն
ալ տուի, գեղեցիկ կին մը:

— Բայց... Տէր, քիչ մը իմ ըսելիքիս կու-
դաք, ես ալ այն կնական վրայ պիտի...

— Անոր միայն ժպիտը մեղրաւեաող գիծերը՝
ժպիտին կախարդող հնարքը զանալու համար,
հազար տարի եմ մասձեր:

— Շիտակ է...

— Ի՞նչ հապա, դուն քուկդ ըսէիր:

— Պահ մըն ալ թող ուրիշ մը, ես չեմ կըր-

— Պարզապէս դասալիք մը, չըսէս:

— Մի մեղրէր, Տէր, քեզի պէս ո՞վ կրնար
մտածել, կամ շիտակն ըսելով...

— Քոէք, մի՞ քաշուիք:

— Կամ սա խիղճն առ, քեզի ըլլայ, կամ
մանդաղը զատէ ձեռքէս:

— Ի՞նչու, ի՞նչու:

— Մինչեւ հիմա արդէն կտոր կտոր եղեր է
հողիս, քիչ մը ես զիս ալ մարդ կը հոսութամ,
շատ կը մեռնին, շուտ կը մեռնին: Այդքան սմուզ
պղողակի մը վերօքը ան հաստատուն ու յաւիտե-
նական արեւն ալ չէր արժեր:

— Բայց ի՞նչ կրնայի ընել, առանց արեւի չէր
ըլլար:

— Կամ կաւը վայսէ, շատ գիւրաբեկ է, կամ
վերցուր:

— Կի՞նը...

— Յաւերուն, մաներուն կէսէն աւելիին պատ-
ճառը, այո՛, այն ցաւէն քիչ մըն ալ իմ գլուխս
մտեր է:

— Ամբարիշտ դուն:

— Կամ այն կնական աչքերէն գոնէ քանի մը
թարթիչ պակսեցուր, շատ գեղեցիկ են:

— Իմ մեծ գործո՞ւ կինը, անով միայն որ
իրաւունք ունեցեր եմ տէր մնալու երկինքին, մի
քննադատէք: Երկրի բոլոր գեղեցկութիւններուն
կեզրնը ան է միայն, կինը. Նա գեռ ուրիշ չնորհք-
ներ ալ ունի երկինքին իրեն օմիտ տրուած, ի՞նչ
որ միշտ անհասկնալի՝ կամ մարդերը յուսահատե-
ցնող առեղծուածներու տեսակները պիտի մնան.
Գուք հոս ապրողներդ ալ չէք կրնար հասկնալ,
պարապը մի բարբանչէք:

— Դուն յետոյ թող տուիր որ Արգողիսի մէջ
Դիմիսի տօներն ալ տեղ բռնեն, աշխարհք գինով
մը ըլլայ ու միմիայն կին հանուայ:

— Ատկէ ի՞նչ:

— Ատկէ ի՞նչ: Ան օրէն ի վեր գիտե՞ս թէ ի՞նչ
կատաղի հնասուքներով, ի՞նչ անսամձ անսահման
մարմաջով սկսաւ երգուիլ կինը, կնական սէրը:
Երկինք մը չի սեղմուող բանաստեղծութիւնը անոր
կրծկալին ու գոգնոցին վրայ խտացուցին:

— Կամաց կամաց գործիս կը խառնուիս, կը
նեղուիմ:

— Ես եղածն է կ'ըսեմ, հիմա ալ մտիկ ըրէ
ու աես թէ՝ օրին մէկը ձեր փառքերուն շուրջը
սաւառնող թեւապարիկը ո՞ւր իջեր կը թալթլայ,
ի՞նչն է ներշնչածը կամ ի՞նչ կասկածելի լարեր աւել-
ցուեր են կուրծքը Ռատիառներու քնարին, որ ալ

չէք ճանչնար անդամ։ Այն լարերուն եթէ ոչ
ամէնքը՝ շատը աղահօվապէս կատուի ու աքա-
ղաղի աղիքներով հիւսուեր են. մի խնդաք, կա-
զաչեմ, նեղուելու ալ ի՞նչ պատճառ ըլլար։

— Ասի ես ալ կը խոստովանէի, իրաւունք ու-
նիք, հասպա՛ ի՞նչ էր որ կ'ըսէի թէ ձեր մէջէն այն
ծիսածնին կազմին ու գոյներուն հսկողը մասնա-
ւորապէս, էն վատ գործողն է եղեր։ Անկայուն,
երերուն այն կամքակին վրայէն ի՞նչ կրնացի զըր-
կել դէսի երկիր, դէսի մարդը։ Ներշնչումին պա-
կասովը միայն բանաստեղծութիւնն էր որ տուժեց
կ'ըսես, մօրացած ջուրերու հոտ արձակեց։ Առ-
չափը ես ալ գիտէի, ուրի՛։

— Ուրիշ ի՞նչ, Տէր, ուրիշ ի՞նչ։ Եթէ չպիտի
ուզէիր վերջապէս որ օձիք աղասեմ պաշտօնէ մը
որուն ծանրութիւնը ուկորներուու կը սպառնայ,
թող քու կամքդ ըլլայ, քանի որ դուն միայն
քեզ գիտես։

Բանավէճ թէ խնդիր, համելի վերջքով մը կը
փակուի, որուն վրայ աստուածներուն Աստուածը,
մեծ Բարին, կը հաւանի իսկոյն որ այն կնկան աչքի
ու դէմքի զգլիխի թովանքներէն բաներ մը կիսե-
լով արեւին ու կապրայներուն զրկէ, անոր գոյնէն
ու բուրումներէն անտանեներուն խորքը նետուած
մանացած մանուշակին ու շահպրակներուն բաժնէ։
Աղուոր բաժիններ մը հովիտներու ամայութեան
վրայ սարսացող անանուն ծաղիկները ունեցան,
մրմունչին անուշ շեշտերէն կիսեց գիշերի պլազուլին
տուաւ, աչքերու թարթիչներէն եղնիկին ու աղաւ-
նիին խրկեց։ Նոր խորհրդաւոր սրբագրութիւն մը
եղաւ ըրածը, իմաստուն համադրութիւնն մը վեր-
ջն գեղեցկութիւններու, որոնց սքանչելի նորու-
թեան վրայ ի՞նք ալ դարմացաւ, բայց «այն կաւը
չի փոխուիր» ըստ։



ՀԻՆ ԺԱՄԱՆՅՆԵՐ



Կը նախնիք ի՞նչն է կ'ընէին զբօ-
սանքի կամ ժամանցի համար։ —
ահա՛ հետաքրքրական հարց մը
որուն ուսումնասիրութիւնը կրնար շահեկանու-
թենէ զուրկ ըլլալ։

Եթէ այսօր կեանքի դժուարին պայքարին,
մաքի նորանոր ձգտումներուն հարկադրած տեն-
գոս գործունէութեան մէջ իսկ մարդիկ զրուանքի
պէտքը կը զգան և ժամանցի միջոցներ կը փընտ-
ուեն, ի հարկէ կեանքի համեմատաբար շատ գիւր-
պայքաններու մէջ ապրող մերնախահայրերը՝ որոնք
սիէտք չունէին մեզի չափ աշխատելու և շա՛տ ա-
ւելի պարապ ժամանակ ունէին ձանձրանալու և
յօրանջելու համար, պէտքն զգացած են ժամանցի
և զրուանքի միջոցներուն։ Մարդկացին մրտքն
այսպէս ստեղծուած է ո՛չ պարապ չի կրնար կենալ.
Եթէ հարկադրիչ կամ օդասկար աշխատութիւնը
կը պակսի, գոնէ անոպէտը կամ անօգուտը ըլլալու
է, վերջապէս բանով մը զբաղելու է անպատճառ։
Որինակի համար՝ մարդկացին ձեռքերը կամ մատ-
ները միշտ զբագում և շարժում կ'ուզին և ահա-
այդ պէտքը լրացնելու համար արեւելցիք հնա-
ցիք են համրիչը, այդ անոպէտ ու աղայական խա-

զալիքը զոր սակայն ամէնէն լուրջ մարդիկ չեն քաշուիր իրենց մասներուն մէջ գարճնելէ : Ծխելու սովորութիւնը, ինչպէս նաև բոլոր խաղերը (նարո, թղթախաղ, ճարարակ, ևն .) իրենց ծագումը կը պարտին ժամանցի նոյն պէտքին :

Ժամանց և զբոսանք երկու տեսակ են . հանրային և ընտանեկան կամ առանձնական : Հին ժողովուրդներու համար կրօնքները մեծապէս նպաստած են հանրային զբոսանքի և ժամանցի միջոցներու հայթայթումնն : Կրօնքը որ արդէն ինքնին հոգեկան պէտքէ մը ծագում առած է, իր յարակից արարողութիւններով ծառայած է նաև գոյացնելու մարդոց հոգեկան տարբեր մէկ պէտքը . — ժամանցի պէտքը : Կրօնական հաւասարի քններին ծագած են արարողութիւններ, տօներ, և այդ արարողութիւններն ու տօնելոր հետզետէ հրապարակային, հանդիսական կերպարանք տօնելով, դարձած եղած են հանրային ձմարիտ ժամանցներ, զբոսանքներ, խրախնանութիւններ, որոնց մէջ մարդակային առէն կիրքեր, զգացումներ, ցանկութիւններ իրենց ճարարկը գտած են :

Հայերուն հին հեթանոսական կրօնքն ալ ուրիշ էին ժողովուրդներու պէս իրենց հայթայթած է զբոսանքի, խրախնանքի նմանորինակ միջոցներ, Անահիտի, Նանէի, Ամանորի հանդիսական տօները կը տօնուէին հրապարակային տեսակ տեսակ խառնով և խրախնանութիւններով, մասնակցութեամբ հաղարաւորներու : Հանրային զբոսանքի և ժամանցի բոլոր լաւագոյն ձեւերը, ձիարշաւ, ըմբշամարտութիւն, լողալու մրցում, նշանառութիւն, երդ, պար, ևն . տեղի կ'ունենային այս տօներու միջոցին : Հայերու քրիստոնէութիւնն ընդունելէ վերջն ալ այդ տօնական զբոսանքները շարունակուեցան մեր մէջ, կերպով մը քրիստոնէական գոյնի տակ, լծորդուելով քրիստոնէական տօներու հետ :

Վարդավառի, Ծաղկաղարդի, Կաղանդի, Տէրընասպի, Վիճակի, Բարեկինդանի ժողովրդական-կրօնական տօները յետամասացութիւններ են հին միկ կամ օարամուտ գիցական տօներու : Հանրային զբոսանքներուն կրօնական սովորութիւններուն հետ լծորդուած ըլլալու պարագան տարօրինակ երեւոյթներ ստեղծած է մեր մէջ . օրինակի համար՝ աս է պատճառը որ մեր մէջ գերեզմանատունները որոնք սուզի և վշտի արտայայտութեան թատերավայր միայն պարտէին ըլլալ, հասարակաց կրօսավայրեր գարձեր են և վանքերու ուխտակացութիւններն ալ՝ բանայիրի կերպարանք են սուսծ որոնց մէջ զուարձութեան էն ապերասաննեւերն իսկ ի գործ կը գրուին :

Հայերը անուր ժողովուրդ մը նկատուած են նորանորապէս և ստուզիւ ալ չենք կրնար պարծեալ թէ զուարթ ժողովուրդ մըն ենք : Զուարթաւարոյութիւնը որ կեանքը այնքան հաճելի կը դարձնէ, մեր մէջ նկարազրի հազուագիւտ յատիութիւն մըն է . խոժուութեան մօտեցող լրջութեան մը ամպերովը ստուերարկուած են մեր դէմքերն ու բոլոր շարժուձեւերը : Բայց չեմ կարծեր ո՞ր մինք սկիզբէն ի վեր այսպէս տխուր ժողովուրդը և եղած ըլլանք : Հեթանոսական շրջանին մէջ ուր Քարդիկ երկային վայելքները միայն կը հանչնափն իրրիւ կեանքի գերագոյն նպատակը և կրօնքներն աւելի աշխարհական ձգտումներու վրայ հիմունած էին, Հայերն ալ ասպանովապէս զուարթ և անդավառ ժողովուրդ մը եղած են : Քրիստութիւնը իր միսմիք ներչնչումներով, աշխարհուրաց ձգտումներով գերախտաբար շա՛տ բան ուժիւ առւած ըլլալու է մեղի նկարազրի այդ թանկագին յատկութեանէն . ասկէ զատ՝ ստոյգ ըլլալու է թէ միջավայրի նոր հանդամանքներ, դաւելու ընթացքին մէջ կեանքի պայմաններու ան-

նպաստ փոփոխութիւններ հետզհետէ տիսրեցողած են մեր կեանքը : Այս է պատճառը որ երբ կրօնական խանդավառութեան շրջանն անցաւ և կրօնական-տօնական սովորութիւնները հետզհետէ բարձի թողի եղան, անոնց յարակից բնական և առողջ ժամանցներն ու զրոսանքներն ալ, պար, երգ, ձիարշաւ, ըմբշամարտ, ևն . այդ կրօնական տօներէն անկախաբար չչարունակուեցան : Պէտք է ըսկել թէ մեր խօսքը աւելի գաւառներու վրայ է որ թատրոնի, պարահանդէսի, նուագահանդէսի նման եւրոպական ժամանցներ գեռ մուտ գտած չեն, և որ ժողովուրդն այսօր կրօնական տօնախմբումներն ալ շատ տեղեր մէկդի թողած ըլլալով, ինք մինք զրկած է հրապարակային ժամանցներէ և շատ արտօւմ տիսուր կեանք մը կ'անցընէ :

Գանք մեր բնիկ ընտանեկան ժամանցներուն: Տան երդիքին տակ, օճախին կամ թոնիրին շուրջ ընտանեկան կամ ազգականական շրջանակի մէջ ժամանցի կամ զրոսանքի միջնցներ ալ անշուշտ ունեցած են մեր նախնիք: Այս ժամանցներն էին զիսաւորաբար երդ և նուագ, ընթերցում և ժողովրդացին բանահմանութիւն: Ընտանեկան անդամներէն մին կրնար գիտանալ ո և է նուագ մը և ատեն ատեն ընտանեկան շրջանակի մէջ նուագելով կամ երգելով կը զուարձանար և կը զուարձանէր իրենները: Այս ժամանցը մինչեւ ցարդ գոյութիւն ունի մեր մէջ և աւելի ծաւալուն սահմանով: Այս կարգի ժամանցներու հիմա շատ անդամ կցուած կ'ըլլաց նաև արբեցութիւնը և այս մոլութիւնը դժբախտարաբար այնքան առաջ գացած է գտառներու մէջ որ ընտանեկան կամ ընկերական ամէն համախմբումներու մէջ օղիի կամ զինիի ներկայութիւնը անհրաժեշտ նկատուած է . առանց անոր զուարժութիւն կամ զրոսանք չեն կրնար ըմբռնել շատերը և ասոր պատճառն այն է որ առողջ զրո-

սամնքներու ճաշակն առած չեն: Թղթախաղ կամ նմանօրինակ խաղեր բարեբախտաբար վտանգաւոր և կործանարար մոլութիւնն մը համեմատութիւններն առած չեն դաւաներու մէջ, ինչպէս եղած են մեծ քաղաքներու մէջ, այլ անմեղ ձեւով զուտ ժամանցի համար կը խաղացուին: այս տեսակ խաղեր մեզի բնիկ ժամանցներ չեն այլ յետսամուա, թէեւ մնաք ալ ունեցած ըլլալու ենք բնիկ խաղեր:

Ընթերցումը ձմեռուան երկար գիշերներու միջոցին կը կատարէր տան պետը բարձրաձայն, ի ներկայութեան տանը բոլոր անդամներուն և դուռդրացիներու: Հին ընթերցման գիրքերը շատ սահմանափակ էին. Աղուսազիր, Այլոր եղբայր, Պղնձէ յաղափին պատմութիւնը, Ժողովածու, Եօրն իմաստակրէ և առնց նման քանի մը առակաց գիրքեր կը կազմն մեր նախնիքներու ընթերցանութեան բովանդակ պաշարը: Ժողովրդական բանահմատութիւնը աւելի՛ մեծ տեղ կը բռնէր և ժամանցի այդ հանքը կրնայ ըստիլ թէ անապառ էր և աւելի արժէքաւոր: Զրոյնները, հէքեաթները, հանելուկները երկար դարեր մեր նախնիքներու հետաքրքրութեան սնունդն եղած են և ծառայած՝ իրեւ ժամանցի միջոց: Տան նահապեար կամ մեծ մամը կը պատմէր հէքեաթը և ամէնքը անոր շրթունքներէն կախուած կ'ունինդրէին: Հէքեաթին հրաշալի զարձուած քնները մանաւանդ պղտիկներուն երեւակայութիւնը կը հրահրէին և անոնք հէքեաթներուն մոլին կը գտանային: Հանելուկները թեթեւ ժամանցներ էին և աւելի զուարձալի: Ասոնց մէջ ունեցած ենք շատ գեղեցիկները որոնք զիրենք հեղինակով ժողովուրդին բանաստեղծական միտքն ու սրամատութիւնը միանգամայն կ'ասպացուցանեն:

Մեր այս հակիրծ անսութիւնը վերջացնելու պահուն, մտածելով թէ ժողովրդական տարեցոյցի

մը կրնայ անյարմար չըլլալ, աւելորդ չենք համարեր հոռ դնել մեր ժողովրդական հանելուկներու լաւագոյններէն մէկ քանին, հին ժամանցներու մէկ ճաշակը տալու և անսնցմով հետաքրքրուողներուն պղտիկ ժամանց մը հայթայթելու համար: Ընթերցողները թո՛ղ քիչ մը միտք յոզնեցնեն այդ հանելուկներուն լուծուոմ գտնելու, և եթէ չյաջուղին՝ կրնան դիմել լուծումներու ցանկին ուր իւրաքանչիւր հանելուկի համապատասխան թուանը-շանին քով պիտի կարդան լուծուոմը:

- 1.— Ճերմակ դաշտիկ, սեւ սեւ հնափկ.
- 2.— Զեռքով ցանէ, լեզուով հնձէ:
- 3.— Օձն ի մէջ ծովուն՝
Գլուխը պըսպղուն:
- 4.— Շունչ կ'առնէ, հոդի չունի,
Փոր ունի, աղիք չունի:
- 5.— Սնոլոր դերձան, անծակ մարդրիտ:
- 6.— Մանտրափկ մարդիք,
Հաղեր են սեկէ վարտիք:
- 7.— Ազի ունի, հոդի չունի:
- 8.— Հաղեր պիտակ, պառկեր շիտակ:
- 9.— Ուկի կծուճիկ, միջուկն անուշիկ:
- 10.— Երկու կաշի, զոյդ կը մաշի:
- 11.— Սնծիլն անծինին բեռցուցին,
Սնդադարին երդիքէն անցուցին:
- 12.— Երկինքը հով, գետինը ծով,
Ան ի՞նչպէս եղ է որ ծնած է կով:
- 13.— Երկայն աղիք, ճոթը ծաղիկ:
- 14.— Ինչ է ան որ կայ ու մարմին չունի,
Կը լոէ ու ականջ չունի,
Կը խօսի ու բերան չունի:
- 15.— Քառասուն աչէն, երկու պոչէն,
Կապեմ կ'երթայ, արձակեմ կը կենայ:

- 16.— Ասղին դար, անդին դար,
Մէջը կայ անդադար:
- 17.— Երկու անակ, մէկ սիւնակ:
- 18.— Կաշիէ տանիք, մաղէ ցուիք:
- 19.— Քար քարի վրայ, քար չէ,
Լեռ սար կ'արածի, դուար չէ,
Հաւեկիթ կ'ածէ, հաւ չէ:
- 20.— Փոր ունի, փրփուր ունի,
Գլուխ ունի, լեզու չունի:
- 21.— Անտորուն ներկ, անդանակ շերտ:
- 22.— Կարդալ չգիտեր, զիր կը գրէ,
Տունը վասի՛ խազ կը կանչէ, բնչ է:
- 23.— Փորը ծով, գլուխը կրակ:
- 24.— Անիծիք, անիծիք, ծրաբոցիք:
- 25.— Նեղ փողոց, լայն պառկ:
- 26.— Սարին եախն կէս կաթայ:
- 27.— Երկու քոյրեր իրար կը հային:
- 28.— Մայրը աշխարհ չեկած,
Որդին երդիքն է ելած:
- 29.— Մութ մութ ախոռ, ճերմակ ճիմն:
- 30.— Զատըր մ'ունիմ, սիւն չունի:
- 31.— Թոնիր մ'ունիմ, չորս հաց կ'առնէ:
- 32.— Սեւ ուլիկ, փետէ պոչիկ:
- 33.— Հինգ աչք, հինգ բերան, չորս հոդի:
- 34.— Այս մարդուն մայրը իմ մօրս կեսուրն է,
Մարդը ի՞նչս է:

ԼՈՒԾՄՈՒՆՔ. — 1.— Թուղը եւ զիր: 2.—
Ճրագ եւ պատրյագ: 3.— Փոնց: 4.— Խաղող: 5.—
Կաղին: 6.— Տապակ: 7.— Մեռել: 8.— Այց: 9.—
Նուշ: 10.— Երկանաբար: 11.— Աղ, ցորի, Ժամուրց:
12.— Աղամ եւ Եւա: 13.— Մում: 14.— Մրազակնց:
15.— Տրեխ: 16.— Բերան եւ լեզու (կամ զիս եւ կա-
մուրց): 17.— Քիր: 18.— Այց: 19.— Կրիայ: 20.—
Փարչ: 21.— Հաւու կատար: 22.— Խղունց: 23.—

Կղկակ: 24.— Թուզ: 25.— Որկոր և փոր: 26.—
Մահիկ: 27.— Սփել: 28.— Մուխ: 29.— Բերան և
ակռայ: 30.— Երկինք: 31.— Լենոյզ: 32.— Զամիչ:
33.— Մենել և յորս դպաղալիրներ: 34.— Հայր:

ԱՊԱՐԱՆՁԱՆԸ

ԿԱՏԱԿԱԽԱԴ ՄԷԿ ՏԵՍԻԼՈՎ



ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՄՐ

ՄԱՐՏԻՐՈՍ Էֆ. ՄՆԱԿԵԱՆԻ



Նուեր ՆՇԱՆ-ՊԱՊԻԿԵԱՆ ՏԱՐՔՅՈՅՑԵԱ

ԿՐ ԸՆԹԵՐՑՈՂ ՆԵՐՈՒԹ

Մեր ընթեցողներուն հանելի անակնկալ մը
պատճառելու համար, այս տարի մեր Տարեցոյցին
մէջ կը հրատարակեն Մնակեան բաժերախումբի
répertoire-ին ամենեն նոր ու ծափահարուած կա-
սակերգութիւններէն մէկը, զոր մեր սիրելի ու մե-
ծանուն դերասանապետք Մարտիրոս էֆ. Մնակեան
յատկապէս հայերէնի վերածած է մեր խնդրանենով
անգամ մըն ալ իր համակրութիւնը ապացուցանե-
լու համար հանդեպ մեր Տարեցոյցին, իր վարպետի
գրչովը յարմարցնելով զայն մեր կեանին :

Այս կատակախալը հանի՛ հանի՛ անգամներ
ներկայացուելով՝ բուռն ծափերու արժանացած է
քէ՛ Պոլսոյ եւ քէ՛ զաւաններու մէջ, եւ մեր բա-
սերասեր ընթեցողները կրնան, իբր սալոնի սիրուն
ժամանց մը, ներկայացնել զայն ո եւ է երեկոյի
մէջ, որով ծիծաղներու եւ ժպիտներու համով թշգ
մը հրամցուցած կ'ըլլան իրենց հիւրերուն :

Բուռնին, վիսդին ու լանսէրնի սեղաննե-
րուն բով կարծենի նուազ հանելի չէ՛ ձ լ'ամրցո-
վիստ կազմակերպուած բաժերական սիրուն ժա-
մանց մը, ուր ամաց դերասաններ կրնան յա-
գեցնել իրենց ամբողջ պապակը :

Զուարք, սրամիս ու նուրբ կատակախաղ մըն
է հետեւեալը, որ առանց դժուարութեան կրնայ
ներկայացուիլ ո եւ է սալոնի մէջ, եւ այս պա-
ճառաւ է արդէն որ Մնակեան էֆ. ընտրած է զայն
մեր Տարեցոյցին համեր :



ԱՊԱՐԱՆՁԱՆԸ

ԿԱ.ՏԱ.ԿԱ.ԽԱ.Դ. ՄԵԿ ՏԵՍԻԼՈՎ

ԱՆՁԵՐԸ

ՏԻՎԻՆԸ

Քեմը կը ներկայացնէ պղտիկ սալոն մը, թեմին խորը եւ ծախ կողմը դռներ, թեմին խորը շվալինէ մը, որուն առջև՝ զոյգ մը թիվնաթռու. Զախ կողմը թեմին առաջքը բազմոց, Աչ կողմը բարրաձեւ սեղան մը, որուն վրայ կան ջուրի շիշ մը եւ գաւաթներ, Պղտիկ պնակի մը մէջ փշրուած շարար եւ անուշի դզալ մը, Շըմինէին վրայ ժամացոյց,

Տիկինը.— (Շըմինէին առջեւը հասած է, ջրապրզին վիճակ մը ունի: Չեռապործ մը կը բանի եւ ատեն ատեն ակնարկ մը կը նետ վասարանին վրայ դրուած ժամացոյցին: Ժամը 11 կը զարեն: Տիկինը՝ ցած ձայնով.) Ժամը տասնըմքն է: (Պահ մը դուռ քիւն. յետոյ աւելի ուժով ձայնով մը.) Ժամը տասնըմքն է: (Պուրուն ոսի ձայներ կը դուրին. Տիկինը կը հառաջն.) ահ, ան է, վերջապէս եկաւ:

Պարոնը.— (Ուրախութեամբ ներս կը մտնէ: Անմիջակի տիկինին կը մօտենաց եւ բեւերը կ'երկնցնէ: Տիկինը անշարժ կը մնայ: Այժերը միշտ գետին յականգ կառնէ, եւ յայտնի յուզումով մը կմոցը երեսը պատճու մը ջիա եւ կմոցը պահած դուրեան հան-

դեպ, կարծեղով թէ դեռ անիկա իր սենեակ մտնելը յէր նշանած, սիրուն ժպիտով մը անոր կունակը կ'անցնի, հազիւ թէ կը ծոխ անոր ծոծրակը համբուրելու համար, եւ ահա' տիկինը բուռն շարժումով մը ոտք կ'եղէ):

Տիկինը.— (Արհամարաշից ակնարկ մը կը նետ ամուսնին երեսը եւ զզուանինով մը կը սրի նային անոր):

Պարոնը.— (Զարմացած՝ բանի մը բայլ կ'առնե դեպի տիկինը):

Տիկինը.— (Ես բաշուկով.) Պարոն, ինձի մի՛ գուշիք:

Պարոնը.— (Խօսելու համար բերանը կը բանայ) . . .

Տիկինը.— Մի՛ գուշիք ինձի . . . (Դեպի իր սենեակին դուռը կ'երրայ):

Պարոնը.— (Տիկինին եկեւեն կը նայի ապշարաւ) . . .

Տիկինը.— (Իր սենեակին սեմին վրայ կեցած ջուրը շեշտով մը) Այսորունէ ակնարկ ա՛լ մեր միջեւ ու եւ է յարաբերութիւն չէ մնացած (սենեակը կը մտնէ. պարոնը անոր կը նետելի, բայց սենեակին դուռը իր երեսին կը գոցուի):

Պարոնը.— Մինակը մնալուն՝ չախազանց յիսուր արտայայտութիւն մը կը սասնայ, իբր թէ ուզի ըստ՝ «արդիօֆ ինչէ պատահեցաւ. կինս ինցո՞ւ բարկացած է. արդիօֆ ըրածը կատակ է թէ յիսու. բեւես հիմայ իր սենեակին մեջ փիրիս կը խնկոյ կոր:» Ականջը դրան կը մօտեցնէ. «Բան մը յեմ զետ կոր, ուրեմն բարկութիւնը յիսու ըլլարու է. ասկայն որո՞ւ հոգ, արդեն աս ալ առաջին անգամը յէ՛ . . . դեռ մենք իրարու հիւս ինչ կոխուներ ըրած ենք:» Վասարանին կը մօտենայ, ոսերը զայ կը սացնէ, յետոյ ոտքերը

ու թեւերը աղիկ մը կը բորուկ, ձեռքերը իւստու կը շփէ, թերը մը կ'առնի, բազմոցին վրայ կը փոռուի, եւ յազիրը ծայրէ ծայր կարդալու պատրաստուոյի երեսոյը կը ստանայ: — (Այս տեսարանը պիստ է ամբողջին լուռ կատարուի):

Տիկինը. — (Անենեակին դուրս կ'եղի եւ պարունին առցեւը և նկուելով, խիս ձայնով մը.) Դուք կը կարծէք թէ այս կեանքը կրնա՞յ միթէ այսպէս շարունակել:

Պարոնը. — (Զարմանի) . . . :

Տիկինը. — Ո՞վ ըստ ձեզի թէ ամբողջ գիշերը միտմինակ անցընելէս ետքը, ես Սիսլորիսակ պէս պատ սենեակս պիտի մանեմ, մինչդեռ դուք ձեր տասիկները տաքցնելէ վերջ, ամենայն հանգըստութեամբ հսու բազմոցին վրայ պիտի փոռոիք և լրագիր պիտի կարդաք:

Պարոնը. — (Կ'ուզէ ոտք եղել) . . .

Տիկինը. — Խնդրե՞մ, կ'աղաչե՞մ, պարսն, ձեր աեղին մի՛ երերաք, եթէ դուք անհանգիստ ըլլաք ես շատ կը յաւզուիմ . . . , հինգ ժամ հսու հոն թափառելէ վերջ հարկու ձեր իրաւունքն է. քիչ մը հանգիստ առնել . . . :

Պարոնը. — (Խօսելու համար թերանը բանալով) . . .

Տիկինը. — Կը ցաւիմ որ մինչեւ այս առեն կեցայ ձեզի սպասեցի. ո՞հ, եթէ գիտացի թէ կէս գիշերը անցած պիտի բարեհաճիք ձեր տունը գալ . . .

Պարոնը. — (Ժամացոյցին նայելով) . . .

Տիկինը. — (Առանց անոր խօսելու առեն ձգելու) Հա՛, հա՛, դուք այդ ժամացոյցին մի՛ նայիք. ասիկա ձիւտ մէկ ժամ ետք է. հիմա կէս գիշերը կէս ժամու չափ կ'անցնի կոր . . .

Պարոնը. — (Ի՞ր ժամացոյցին նայելով . . .)

Տիկինը. — Բայց միթէ ձեր հոգն է. ժամանակը ուշ է եղեր, ձեզի ինչ, չէ . . . թող ժամը 2 ըլլայ, 4 ըլլայ, 6 ըլլայ, ինչ կարեւորութիւն ունի. դուք եթէ ուզէք, միայն առաւօտուն, արշալոյար ծագելէն ետքն ալ կը համարձակիք տուն վերադառնալ:

Պարոնը. — (Գիտողութիւն մը ընելու համար հազիւ թերանը բացած) . . .

Տիկինը. — (Անմիջապէս) Հարկան, դուք պիտի զառունակ, պիտի զուարձանաք, պիտի խօսիք, պիտի խնդաք, ինչ կրնայ ըլլալ . . . առեն մը, երբ դեռ ամուրի էիք, միթէ քիչ գիշերներ լուսցուցիք, ա՛ս ալ անսնց վրայ թող յաւելուած մը ըլլայ, գիշեր մը պակաս կամ գիշեր մը աւելի, ինչ կարեւորութիւն ունի:

Պարոնը. — Բայց . . .

Տիկինը. — Ես շատ աղէկ գիտեմ թէ երիկ ժարդիկ ինչ տեսակ ապրանք են և թէ ինչ բաներ կը համարձակին լնել . . . դուք երբ անգամ մը սկսիք զուարձութեանց, ալ վիւ . . . ամէն ինչ լնցաւ, անկէ ետքը ա՛լ կարելի չէ ձեր սանձէն բռնել:

Պարոնը. — (Ժամելով) Բայց . . .

Տիկինը. — Ուզանուգ չափ խնդացէք, պարսն . . . ինդալը որչափ ալ կը վայլէ կոր ձեզի պէս յանցաւոր մարդու մը: Եկ յանցաւոր և թէ առանց ամնալու կը ծիծաղիք. շիտա՛կը, աղէկ համարձակութիւն:

Պարոնը. — Սակայն . . .

Տիկինը. — Ձեր յուշատետրին մէջ այս գիշեր սիրային յաղթանակ մըն ալ արձանագրեցիք, չէ:

Պարոնը.— (Շուշրած) Սակայն...

Տիկինը.— Զեր հացկերոյթին քանի՞ հաս կնիկ կար նայինք:

Պարոնը.— (Սկսելով տարաւ բարկանաւ) Սակայն...

Տիկինը.— Բաելու պէտք չկայ. արդէն ձեր ըսելիքը գիտեմ...: Զեր բարեկամներէն մէկը հացկերոյթ մը կուտար կոր, չէ՞ , և հարկաւ ձեր կարգուած բարեկամներէն մէկը. շատ մը մարդիկ ներկայ էին, ամէն ալ կարգուած անշուշտ... Երա՞ւ, դուք թէեւ կը փափաքէիք ձեր տիկինն ալ մէկտեղ տանիլ, սակայն ձեր միւս բարեկամները իրենց տիկինները բերած ըլլալով, դուք ալ չհամարձակեցաք... հիմա, շխտակ ըսէ՞ք, այս հացկերոյթին շատ դուարձացա՞ք:

Պարոնը.— (Կուգէ խօսիլ, բայց տիկինը ժամանակ չի ձգեր...):

Տիկինը.— Ի՞նչ, չզուարձացա՞ք... Է՞ս, երկրորդ անգամուն հարկաւ կը զուարձանաք, որովհեաեւ դուք զուարձութիւնները եւ գիշերային զբոսանքները շատ կը սիրէք, և նոյն խակ յաճախ չէք վարանիր պղափկ անստակութիւններ ալ ընել. խարելով ձեր կինը:

Պարոնի.— Հոգի՞ն...

Տիկինը.— Երաւոնիք ունիք, ես ձեր հոգին եմ, բայց միայն ձեր տունը մնացող հոգին: Դուք ուրիշ կիններու համար առատաձեռն էք, սակայն երբ կարգը ինձի գայ...

Պարոնի.— Բայց...

Տիկինը.— Ի՞նչու կը բարկանաք կոր. ասիկա ըսովը ես չեմ, ես ալ ուրիշներէն իմացայ:

Պարոնի.— (Ժպտելով տիկինին կը մօտենայ)

Տիկինը.— (Անոր բոլիեն վախեղով) Զէ՞ , պարո՞ն, չէ՞ , դուք միշտ ձեր զուարձացած կնիկներուն քովը գացէք, ինձի մի՛ մօտենաք, դուք ինչ բան մը չէք հասկնար, ես ձեզի կը ձանձրացնեմ... Երաւ ես ձեր կինն եմ, բայց ի՞նչ ընեմ որ այդ կնիկներուն պէս գեղեցիկ, սիրուն, չնորհալի չեմ, ասիկա միթէ իմ յանցա՞նքս է:

Պարոնի.— ...

Տիկինը.— Այո՞ , ձեզի հաճելի երեւալու համար, պէտք է ամէն օր տարօրինակ արդուզարդեր լնել, քսովիլ, չեմ գիտեր ինչեր լնել...

Պարոնի.—

Տիկինը.— Արդէն ես ձեր այս բնաւորութիւնը առաջին օրէն խակ հասկցած էի. ձեզի հաճելի ըլլալու համար, տիկին վերժինին պէս աղտուած թափ-թրփած ըլլալու է...

Պարոնի.— (Բարկացած) ...

Տիկինը.— Ի՞նչ ընեմ, նեղացէ՞ք, սրդողեցէ՞ք, բարկացէ՞ք. իմ ըսած խօսքս անսելի սուամըն է, չէ՞ ...: Տիկին վերժինին էրիկը ձեր ամէնէն սիրելի անբաժան բարեկամն է, պղտիկուց ի վեր անոր հետ մէկտեղ մնացած էք. հիմակ ալ երկուքնիդ միեւնոյն դորձին մէջ կը գտնուիք կոր: Նոյն խակ կարգուած ատենը դուք անոր կնքանայրը եղաք. հարկաւ ձեր այս սիրելի բարեկամն երջանաւ կութեանը համար պիսի սշխատիք... ասիկա ձեր պարտականութիւնն է:

Պարոնի.— ...

Տիկինը.— Ասանկ ընելու ալ իրաւունք ունիք. ասիկին վերժինին տունը ձեր գործատեղիէն երկու քայլ անդին է. փոխանակ ցորեկները մինչեւ ձեր տունը յոդնելու, հարկաւ լաւագոյն է ափ-

կին Վերժինին տունը երթալ, որով դայն ալ ուրախացուցած կ'ըլլաք... բայց եթէ գուք քիչ մըն ալ ձեր այս կեանքը շարունակելու ըլլաք, ես ալ պիտի սկսիմ ձեզի պէս ընկել, այն ատեն գուք պիտի սկսիք ինձմէ նախանձիլ...

Պարոնը.— ...

Տիկինը.— Սակայն եկէք տեսէք որ ես ձեր գիտցած փողոցի աւելներու նմանող ինիկներէն չեմ, ես պատուոյ, արժանապատուոթեան զգացումները կը կրեմ սրտիս մէջ. ես ընտաննեկան յարկս կը սիրեմ, թո՛ղ ամուսինս զիս խարէ, թո՛ղ ամուսինս զիս ւրէ, բայց ես երթեք չեմ կրնար այդ տեսակ վատութիւն մը ընկել, չեմ կրնար երթեք խօսեցնել տալ իմ վրայ, ինչու որ ես պատուաւոր կին մը և պարկեցտ տանտիկին մըն եմ...:

Տիկինը՝ առանց շունչ առնելու՝ արագ արագ կ'արտասանէ այս խօսքերը, եւ երբ կը վերջացնէ, պարոնը՝ կարծելով թէ ալ խօսերու կարգը իւեն եկած է, կը պատրաստոի պատասխանել կնոքը խօսքերու հեղին:

Պարոնը.— (Բերանը բանաղով)...

Տիկինը.— (Դարձեալ խօսիի սկսելով) Տիկին Վերժինը շատ հիւրասէր կին մըն է եղեր, անոր տունը ամէնուն առջեւ բաց է եղեր, ասոնք իր գիտալիք բաներն են. ամէն մարդ աղատ է իր տունին մէջ ուզածը ընկել:

Պարոնը.— Այո՛, բայց...

Տիկինը.— Միայն չհասկցած մէկ կէտս ա՛յն է որ, ի՞նչպէս կրնայ կոր ա՛յսչափ ծախքերու մէջէն ելլել: Իրաւ, աս ալ իր գիտանլիք բանն է, արդէն ես միտքէս անգամ չեմ անցըներ հետաքըրքարիլ թէ այդ կնկան արդուղարդերուն դրամը ո՞վ կուտայ կոր... և եթէ նոյն իսկ գիտամ ալ թէ

այդ գրամմները տուողը ո՞վ է, նորէն բան մը չեմ այդ գրամմները տուողը ո՞վ է, միայն մինակս կուլամ, կը հեծկլտամ, կ'արժանար, միայն մինակս կուլամ, կը հեծկլտամ... .

Պարոնը.—

Տիկինը.— Այո՛, սիրելիս, սակայն չկարծէք որ ես այս բաները իմ կողմէս կը հնարեմ կոր. ես միայն իմացածներս կը կրկնեմ կոր. ամէնուն բերանն է արդէն թէ արկին Վերժինի պէս միջակ կին մը ինտո՛ր կ'ըլլայ որ առաջնակարգ ըջազգեսաներ կը հնայ կրել:

Պարոնը.—

Տիկինը.— Միթէ ըստածո սո՞ւտ է: Տիկին Վերժինը ըստածդ ինքնին ի՞նչ է, ո՞վ է, որո՞ւն զաւակն է: Այսօրուան պէս միտքս է, դեռ քանի մը տարի առաջ հայրը փողոցը տանողէլա, գորտէլա կը ծախէր...

Պարոնը.—

Տիկինը.— Ա, ներեցէք, ներեցէք, եթէ գիտնայի թէ այս պարզ խօսքերուս համար այսչափ պիտի յուզուիք, բերանս անգամ չէի բանար, տիկին Վերժինի մասին խօսք մը անգամ չէի ըներ, որովհետեւ արկին Վերժին աղնուական, զարդացած ու պատուաւոր կին մըն է:

Պարոնը.— Է...

Տիկինը.— Ներողութիւն... վստահ եղէք որ ասկէ ետքը բերանս անգամ մ չեմ բանար. նոյն իսկ տիկին Վերժինին բոլոր ըրած բաները կը գնահատեմ. թո՛ղ ամուսինիս սիրտը գրաւէ, թո՛ղ ընտանիքի բարի հայր մը բաժնէ, զատէ իր սիրուն զաւակներէն և թո՛ղ երջանիկ առնի մը մէջ ուզածին չափ ցանէ գ-ժբաղդութեան սերմները, թո՛ղ ձեր տիկին Վերժինը ուզածը ընէ, ասկէ ետքը

բերանս չպիտի բանամ, ասկէ ետքը այս մասին բերնէս արտունջ մը անդամ չպիտի լոէք:

Պարոնը. —

Տիկինը. — Իսկ եթէ ասիկա ալ չի բաւեր, թող տուէք որ երթամ տիկին վերժինին ոտքերը ինամ, և աղաւեմ, պաղատիմ անոր որ բարեհաճի երիկ գլխէ հանել: Եթէ կուղէք որ այսպէս ըստ, հրամացեցէք, և պիտի ընեմ:

Պարոնը. — (Այս անզամ թեւ խօսելու համաձաւանկ կը զնի, սակայն ըստիի բան մը ջրնառվ զնի եւ կը գոհանայ միայն ուսերը ցնցելով եւ կրնակը կը դարձնէ):

Տիկինը. — Անանկ է, անանկ . . . հարկաւ իրաւունք ուսիք . . . հիմակ ալ բարկացէք, արդէն ասիկա էրիկ մարդոց սովորութիւնն է: Պատասխան չգտնելնուն պէս կը բարկանան և կը սկսին պոռաւ կանչել . . . :

Պարոնը. — (Եսին դառնաղով) . . .

Տիկինը. — Բսէք, ինծի պատասխան մը չպիտի տաք, չէ նէ ըսելիք խօսք մը չէք գտներ կոր:

Պարոնը. — (Տիկինին մօտենալով) . . .

Տիկինը. — Ա՛ս էր պակաս. հրամմեցէք տեսնեք, հիմակ ալ զիս ծեծեցէք:

Պարոնը. — (Շուշելով) Ի՞նչ . . .

Տիկինը. — Ծեծեցէք պարոն, ծեծեցէք:

Պարոնը. —

Տիկինը. — Ծեծեցէք նայինք, ինչո՞ւ զիս չէք ծեծեր կոր. ծեծեցէք, մի՛ վախնաք, Պատասխան լիորհուրդին չեմ դիմեր: Դուք թէ՛ ինէ ուժով էք և թէ այս առանին տէրն էք, ծեծեցէք:

Ես ձայնս անզամ չեմ հաներ. չէ՞ մի որ կիները իրենց էրիկներուն սարուկներն են, և պէտք է միշտ անոնց հնազանդին . . .

Պարոնը. — (Թէեւ այս անզամ աղ խօսելու միցց կը զնի, սակայն մտածելով թէ անկարելի և ասելի կնկան մը խօսի հասկցնել, հախանեծար կը համարի դու մնալ եւ դեպի սենեալին դուռը կը յառաջանայ՝ մեկնելով համար):

Տիկինը. — Զիս չէք ծեծեր կոր, ճէ՞ . . . չէ՞ նէ կը վախնաք կոր որ օգնութեան մարդ կը կանչեմ:

Պարոնը. — (Միտքը կը փոխէ եւ վերաբառնալով) . . .

Տիկինը. — Ծեծեցէք զիս, ծեծեցէք, մի վախնաք, ես ամուսնութիւնը սրբութիւնը գիտացող կիներէն եմ. կին մը պէտք չէ իր էրկանը զէմ տըրտընջայ, նոյն իսկ եթէ ծեծ ալ ուտելու ըլքայ անկէ: Ես միայն կուլամ, իմ մեծագոյն միտիթարութիւնս մի միայն արցունքներու մէջ կը վնստաեմ, թիւնս մի միայն արցունքներու մէջ կը վնստաեմ, թայց եթէ չէք ներեր որ լամ, չեմ լար, որովհետեւ կին մը պէտք է ամուսնին հնազանդի . . .

Պարոնը. — (Որոշելով պատասխանել) Բայց . . .

Տիկինը. — (Շարունակելով իր խօսքը եւ առաջ միջոց ձգելու դիմացինեին խօսին) Ես գէմինխադ կին մը չեմ, եթէ գէմինխոդ կին մը ըլլացի, փոխանակ ձենէ ծեծ ուտելու, ես պէտք էր որ ծեծի ծեծէի:

Պարոնը. — (Յուսահա՞ երկինի կը նայի) . . .

Տիկինը. — Ի՞նչ, լուսքերուս ականջ չէ՞ք կախեր կոր. իմ ըսածներուս կարեւորութիւն չէ՞ք տար կոր, թերեւս ալ հիմա զիս ատլուցի, իսկնդի տեղ կը դնէք կոր:

Պարոնը. — (Լրազիւր առնելով կերպայ վառաւանին առցեւ կը նսի). . .

Տիկինը.— Դեռ պատասխան մը չպի՞տի տաք,
երկու ժամ է կը խօսիմ կոր, և բառ մը անդամ
չէք պատասխաներ կոր ինձի . . . : Հա՛րկաւ ասանկլ
պիտի ընէք, օձիքնիդ ձեռքէս աղատելու համար,
ասկէ տարբեր միջոց մը չէք կրնար կոր գտնել
(ամուսինին աօտենալով). մինչդեռ ուրիշ էրիկներ,
երբ յանցանք մը գործեն, կը ջանան իրենց ըրածը
ծածկել և իրենց կիներուն քով երթալոլ սա՛ տե-
սակ խօսքեր կ'ըսեն գոնէ . «Սիրմլի՛ս, պաշտե-
լի՛ս, կեա՞նքս, յանցանք մըն է գործեցի, մէյ մըն
ալ չեմ ընեմ, ներէ ինձի, ես ալ քու ըրածներուղ
կը ներեմ»: Այս կերպով կոսջ արժանապատուու-
թիւնն ալ իր գո՞ացումը կը գանէ: Մինչդեռ գուք
այսչափ պղտիկ բան մըն ալ չէք ուզեր կոր ընկլ.
որովհետեւ դուք հապարտ էք, չէք ուզեր որ ձեր
կինը հածոյք մը զգայ, գոհունակոթիւն մը ու-
նենայ» . . .

Պարնիլ. — (Տիկինին այս խօսքերէն յուզուելով լազիրը ձեռքին կը ձահ.) . . .

Տիկինը.— Արդէն իմ քենէ ուզածս ի՞նչ է .
քեզի հարցուցածս ի՞նչ է . այս իրիկուն ուր գա-
ցիր , ինչու այսափ ուշ մնացիր . այս հարցումնե-
րուս պատասխանէ , լմնայ երթայ :

Պարոնը.— (Անմիջապէս ուզելով պատասխան-
ելով) ...

Տիկինքը.— (Առանց մժիկ լնելու) Այո՛, ես քու
ըստածներուդ չհաւտալիք չեմ ըներ. զիտեմ որ այս
իրիկուն բարեկամներէդ մէկուն սարքած հացիկե-
րոցթին գացիր, հոն ճաշեցիր, բայց ինչո՞ւ այսչափ
ուշացար, ճաշէն ետքը ո՞ւր գացիր:

Պարնել.— (Կ'ուզէ պատսախանելեց) . . .

Տիկինը.— Հարկաւ ճաշը ժամը 10-ին լինցաւ .
արդէն գուն ըստ էիր որ ժամը 10-ին կ'աւարտի :

Պարոն.— (Եղիսպէս). . .

Տիկինը.— Ահա՝ այս պատճառաւ կը մըտ-
մըտալի... .

Պարողն.— (Եղիսաբէհ) . . .

Տիկինը.— Բայց դուն ալ չես պատասխաներ
կոր. ինքզինքդ չես արդարացներ կոր . . .

(Հեծիղակով բազմոցին վրայ կիյնայ) . . .

Պարոնը.— (Յուզուած ու գրադով կը ևսի Տի-
լիմիմ) . . .

Տիկին.— (Մեծանայն լարով) Մայրիկ մայրիկ եթէ գիտնաս թէ աղջիկդ ուշափ կը տապափի կոր հոռ հոռ ։

Պարունակություն:— (Զինագործություն) . . .

Տիկինը.—Եւ տակաւին ասիկա բան մը չէ,
քանի որ մեր կարգութիլը տակաւին հազիւ մէկ
տարի եղաւ. արդեօք առկէ ետքը ինչը ովհափ
քաշեմ:

Պարնելը.— (Մօսկենաշով) . . .

Տիկինը.— (Զայն և հրեշտ) Իսծի մի՛ դպրէ
չիք... ձեր կեղծաւոր ժպիտներուն ու հոգածու-
թիւններուն ավտք չունիմ ա՛լ. ահա՝ կուկամ կոր,
կուկամ կոր... դեռ ի՞նչ կ'ուզէք որ ընեմ:

Պարնել.— (Համբերութիւնը կրուսած՝ կը հեռա-
նայ տիկինն եւ սկսի սաղոնին մեջ վեր վար պըլսիշ):

Տիկինը.— Դուք ալ իրաւունք ունիք . . . :
Հիմա իմ վրաս կը իմադաք հարկաւ, երբ կը տես-
նէք թէ այսպէս կուլամ: Իրաւունք ունիք. Լալու
ի՞նչ պատճառ ունիմ. փոխանակ լալու, պէտք է
խնդամ, խօսիմ և վիճակէս գոհունակութիւն
յայտնեմ . . . բնծի պէս խեղզ ու թշուառ կին մը
ի՞նչ իրաւունք ունի արանջալու. աշխարհիս վրայ

առաջին խարսուած կինը միայն ե՞ս եմ... դեռ ո՞րչափ կան գժբաղդ, տարաբաղդ խարսուած կիներ, առանք ալ ինձի պէս կուլան կը հեծկլտան, սակայն ի՞նչ օգուտ, անոնց ալ էրիկը իրենց վրայնաշելով կը խնդայ կը ծիծաղի: Ա՛հ, մեր ամուսնութեան օրը ամէն մարդ ո՞չափ գոհ էր. մեր բոլոր բարեկամները այնպէս կը հաւատային թէ մենք պիտի կրնանք երջանիկ ըլլալ. ես ալ այնպէս կը խորհի, սակայն աւազ...: Միայն մեծ մայրիկս չէր ուղած մեր ամուսնութիւնը և խեղճ կինը ո՞րչափ իրաւունք ունի եղեր, անիկա առաջին վայրկեանի խկ նախազգացումը ունեցեր է թէ մենք գժբաղդ պիտի ըլլանք կեանքի մէջ:

Պարոնը.— (Որ վառարանին առցել եւ կոմակը ժողովուրդին՝ կեցած եր, այս խօսքերուն վրայ եսին կը դառնայ)...

Տիկինը.— Հարկաւ իրաւունք ունի եղեր... խեղճ մեծ-մայրիկ, այն ատեն 85 տարու էր սակայն, կարգուած օրս ինձի «Աղջիկ», ըստ, զգուշացիր, տարիքը առած մարդու մը հետ կը կարգուիս կոր, մարդ մը որ ամբողջ կեանքը վաշելեր է արդէն»..., ա՛հ որչափ իրաւունք ունի եղեր:

Պարոնը.— (Բողովելով)...

Տիկինը.— Այո՛, այո՛, իրաւունք ունի եղեր և շատ իրաւունք ունի եղեր... երիտասարդութեանը ատեն ամէն բան ըրած մարդ մը անպատճառ կարգուելէն ետք իր ընտանեկան յարկը երերէ...: «Զգուշացիր, զգուշացիր», կ'ըսէր ինձի խեղճ մեծ մայրիկս...

Պարոնը.— (Որ այս խօսքերը խմանալով տակաւ կը բարկանայ, տիկինին վերջին խօսքերը շնկուն պիս,

կատաղութեանին վառարանին վրայ դրուած բուղի դամակը կը կուրե):

Տիկինը.— Ա՛հ, աեսէք մայրս ո՞րչափ իրաւունք ունի եղեր ինձի այս խօսքերը ըսելու. հիմակ ալ ձեռքերնիդ անցած բոլոր բաները կը կոտրէք կոր... ա՛հ, որչափ գժբաղդ եմ, ո՞րչափ գժբաղդ...

Պարոնը.— (Պահ մը կը մտարէ խօսիլ, ասկայն յեսոյ վազ անցնելով, ծարաւը յազեցնելու համար, սեղանին կը մօտենայ եւ ջուրին շիշը կ'առնի):

Տիկինը.— Վայ, կարծեմ ծարաւցաք, պարոն... հարկաւ պիտի ծարաւնաք... այս իրիկուան հացկերոյթը ձեղի ծարաւցուցեր է:

Պարոնը.— (Պաւարը ջուր լեցնելի եսի, դգալ մը շաբար կ'առնի, ջուրին մէջ կը դնէ եւ կը սկսի շաբանել):

Տիկինը.— Օ՛օ... ձեր ջուրին մէջ հիմակ ալ շաբար կը դնէք կոր: Եթէ կ'ուզէք քիչ մըն ալ անուեղին բերեմ... անիկ ետքը սուրճ մըն ալ...

Պարոնը.— (Ումագ ումագ ջուրը կը պարպի:)

Տիկինը.— (Բարկութեամբ) Կ'աղաջեմ, պարոն, եթէ ասկէ ետքը մէջ մըն ալ շաբարով ջուր խմէք, տափկա իմ սկնեակիս մէջ մի՛ պատրաստէք:

Պարոնը.— (Ջուրը խմելի եսի, ծամր ծամր լըր-թունեները կը սրբի:)

Տիկինը.— (Բարկութեամբ) Անցեալ օր նորէն ձեր շաբարով ջուրը պատրաստած ատեննիդ, աղօթագիրքիս վրայ կաթեցնուցեր էք:

Պարոնը.— (Ամենայն բարախարութեամբ, բայց պաղարխնով ներդուրիխն կը խմելի անձայն, եւ կ'երաց գաւարը տեղը կը դնէ:)

Տիկինը.— (Միշտ բարկութեամբ) Ես իմ աղօթագիրքս շատ կը սիրեմ, եթէ աս ալ չունենայի, Բնչ պիտի ըլլար վիճակս... իրա՛ւ, դուք այս տեսակ բաներու կարեւորութիւն չէք տար, սակայն Ես ջերմառանդ ու բարեպաշտ կին մըն եմ:

Պարոնը.— (Կը ժայտի):

Տիկինը.— Արդէն այս չէ՞ միթէ պատճառը որ յաճախ կը մոռնաք ձեր խիղձին հրամայած պարտականութիւնները և շատ անդամ կը նախատէք ձեր ընտանիքը, ձեր զաւակները և ձեր ծնողքը:

Պարոն.— (Կ'ուզէ պատախանել, սակայն շաւադին կը համարի իից մըն ալ համբերել, և անձնու համար թէ գործը ուր պիտի յանդի):

Տիկինը.— Ի՞նչ ըսիք:

Պարոնը.— (Անշարժ կը կենայ):

Տիկինը.— Երիկմարդ չէ՞ մի, ամէնքնիդ ալ նոյն էք. կը խնդաք, կը ծիծաղիք, ամէն բան կ'ընէք կ'ըլլաք, սակայն չէք կրնար երբէք ինծի մոռցնել իմ մայրիկս ինծի տուած պատուէրները, ա՛հ մայրիկս... մայրիկս... անիկա շատ խելացի կին մըն էր:

Պարոնը.— (Ուսերը կը բորուի):

Տիկինը.— Ի՞նչ, հիմակ ալ մայրս նախատելու ելաք, ա՛ս էր պակաս միայն. հիմա ալ մայրիկս կը նախատէք կոր:

Պարոնը.— (Թեւերը երկինի կը վերցնէ):

Տիկինը.— (Լայով) Եւ մտածեցէ՛ք որ խեղճ մայրիկս նախատելու համար ո՛ր օրը ընտրեցիք...

Պարոնը.— (Սուանց բան մը հասկեալու կնոցը երեւ կը նայի):

Տիկինը.— Ա՛հ, իմ ծնած օրս ընտրեցիք...

մինչդեռ ասիկա ձեր միտքէն անողամ չէր անցած...

Պարոնը.— ...

Տիկինը.— Եփտակ ըսէք, ձեր միտքէն անցած էր բնաւ որ այսօր իմ ծնած օրս է:

Պարոնը.— (Կ'ուզէ խօսի):

Տիկինը.— Կ'աղաչեմ, կ'աղաչեմ, գոնէ սուտ մի՛ խօսիք. ոլովչեանեւ ինչ որ ալ ըսէք սուտ է...

Պարոնը.— (Ժողովուրդին կը նայի զանոնի վկայ առնելու պես եւ յեսոյ կնոցը բառեալով) ...

Տիկինը.— Դեռ չպիտի՝ պատասխանէք... մուգոնէ խօսք մը ըսէք. լեզունիդ ինչ եղաւ. մուգոնէ կերան:


Պարոնը.— (Միշտ շուրեւամբ գրասեհն տուի մը կը հանե, կը բանայ եւ Տիկինին կ'երկնեն.)

Տիկինը.— Ապարանջան մը... արդեօք ինձի համար է. (ձեռիլ կ'առնե, կը նայի եւ մեջի կողմը համար է. շուշանի, ասո՞ր համար է որ ուշ միակարգանվ) Շուշանի, ասո՞ր համար է որ ուշ միակարգանվ) ո՞հ, սիրելի ամուսինս, ցիր... (գուրզուրաւելինվ) ո՞հ, սիրելի ամուսինս, պաշտելի ամուսինս, ձեզի ո՞րշափ կը սիրեմ: (ամուսինին կը վարդուի):

Պարոնը.— Զի՞ս թէ... ապարանջանը:

Վ. Ա. Գ. Ա Յ Ր





ՀՀ Ազգային գրադարան



NL0140986

14181

ՀԱՅՈՒԹՅՈՒՆԻ ՀՐԱՄԱ ՎԵՌՈՎՍՅԱ

ՀԱՅԻԿԱՆ Ե. ՕՀՄԱՆ

